



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ	1
ԽՍԲԱԳՐԱԿԱՆ	2
ԼՐԱԳՐՈՂԸ ՊԱՏԳԱՄԱԽՕՍԸ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ԾՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ	2
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ	4
ՓԱՇԽԵԱՆԸ ԵՐԲ ՍԿՄԵՅ ԱՅՍ ԱՐՇԱԻԸ, ԱՍՈՒՄ ԷԻՆ, ԹԷ ՎԵՀԱՓԱՌԻ ՀԵՌԱՅՈՒՄԸ ՕՐԵՐԻ ՀԱՐՑ Է, ԲԱՅՑ ՆԱ ՄԻՆՉ ՕՐՍ ԻՐ ՏԵՂՈՒՄ Է. ԱՂԱԶԱՐԵԱՆ	4
11/12/2025	4
ԿԻՊՐԱՀԱՅ	6
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա.ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԸ ԿԻՊՐՈՍԻ ԹԵՄԻՆ	6
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ	14
Ի՞ՆՉ Է ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՅԻՈՅ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԱՆՅՔԸ. ԱՌԱՋԱՐԿ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ	14
ՄԵՆՔ ԵՆՔ ՄԵՐ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ	19
ՄԵՐ ԹԱՅՈՎ ՈՒ ՉՈՐՈՎ, ՄԵՐ ՄՌԱՅԼՈՒԹԵԱՄԲ ՈՒ ԹԱՆՁՐՈՒԹԵԱՄԲ	19
ՆՈՒԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՈՒԵՀԿՈՒԹԵԱՆ ՄԻՋԵԻ	21
ԹԱՆԵՐ ԱՔՉԱՄ ԵՒ ՈՒՄԻԴ ՔՈՒՐԴ ՀԱՅՈՑ ԲՈՆԱԳՐԱԻԵԱԼ ԵՒ ԼՔԵԱԼ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ	27
ԽԱՉՔԱՐԵՐՈՒ ՄՈՒԽԻՐԸ ԵՈՒՆԵՍՔՕ-Ի ՄԵՂԱՆԻՆ ՎՐԱՅ	29
ՏԵՍԱԿԷՏ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵԿԵՂԵՅԻ-ՊԵՏՈՒԹԻՒՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ, ՈՉ ԹԷ ԸՆԴՀԱՐՈՒՄ	31
ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՎԱԿՈՒՈՒՄՈՒՄ. ՄՏՈՐՈՒՄՆԵՐ	35
ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐԱԶԱՆՔ	36
ԾԵԾ, ՀԱՅՅՈՅԱՆՔ, ՄՊԱՆՈՒԹԻՒՆ. ՀԱՅՐԵՆԻ ՀԱՄԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԼՈՒՌ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ	40
ԱՆՀՐԱԻԸ ԿԱՐԾԻՔ՝ ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՆԵՐԿԱՅ ՏԱԳՆԱՊԻՆ ՄԱՍԻՆ	43
ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ	45
ՓՈՒՆՋ ՍԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ	45
ԵՐՈՒՄԱՂԷՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ	49
ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԸ ՎԵՐԱՐՏԱԴՐԵԼ ԸՍՏ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՄԱՀՈՒՆՉ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՆ՝ ԱՌԱՆՅ ՇԵՂԵԼՈՒ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ	51
ԻՆՉՈ՞Ւ ԱԲ(AI) ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԱՅԼԵԻՍ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋ ՍԸՆ Է ԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԷՋ	53
ԱՆԾԱՆՕԹՈՒՀԻՆ	55
ԱԿՆԹԱՐԹՆԵՐ	57
ՔԱՌԵԱԿՆԵՐ	60

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԼՐԱԳՐՈՂԸ ՊԱՏԳԱՄԱԽՕՍԸ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ



Տեղեկատվության և ապատեղեկատվության, սուտի ու կեղծիքի խառնիճադանձ մը դարձեր է լրատվութիւնը մեր «քաղաքակիրթ եւ լուսաւոր» դարուն, ուր ճշմարտութիւնը կարելի է վաճառել կամ գնել երեսուն խեղճ արծաթով: Եւ այնքան դժուար է ճիշդ կողմնորոշուիլ, իրա՛ւ լուսաբանուիլ, երբ լրագրողը կամ հրապարակախօսը շատ յաճախ պատուէր կատարող, քարոզչութիւն կամ հակաքարոզչութիւն տարածող գործիքի է վերածուած մեծաւ մասամբ: Այսպէս կը բանին օրն ի բուն զանազան ու զարմանազան լրատուամիջոցները, ծառայելով իրենց տերերուն կամ պատուիրատուներուն, փոխան ճշմարտութեան ձայնին, որ կը մնայ խեղդուած մամոնայի, բիրտ ոյժի ու շահի զիլ աղմուկին մէջ:

Բացառութիւնները կը մնան հագուագիւտ, մոմի լոյսով որոնելի: Այս իրավիճակը գոյութիւն ունի ազգային եւ համաշխարհային մակարդակներու վրայ ալ:

Իսկ ճարտարարուեստի նոր միջոցները լայն հնարաւորութիւն կ'ընձեռեն բոլորին՝ արտայայտուելու ազատօրէն ընկերային ցանցերու վրայ, տարածելու իրենց հիմնաւոր թէ անհիմն կարծիքները, շատ անգամ ալ՝ ցեխարձակումները կամ հայհոյանքները ասոր անոր հասցէին, կամ զրպարտութիւններն ու չարախօսութիւնները, ատելութեան մթնոլորտ ստեղծելով, կիրքեր հրահրելով...

Խօսքի եւ գիրի այս սանձարձակութեան գլխաւոր գոհը բուն ազատութիւնն է, ճշմարիտ խօսքը, ճիշդ լուսաբանութիւնը: Այստեղ է որ այնքան տեղին կը հնչէ Գեորգ Էմինի խօսք-պատգամը. «Գրիչդ զգոյշ գործածիր երբ խառն է դարը: Նոյն արժիճից են ձուլուած գնդակն ու տառը»:

Թերեւս երբե՛ք խօսքը այսքան չէր վարկաբեկուած, ապակողմնորոշման ու ցեխարձակման գործիք չէր դարձած որքան մեր օրերուն: Փողոցային բռնապաշարը, ամենէն լկտի խօսելաձեւը, «ֆէյք» կամ սուտ լուրերը կարծես ողողած են համացանցը, իրենց հակադաստիարակչական անդրադարձով, ուղեղներու լուացումով, գոեհկութեամբ...Զո՞րն ասել, զո՞րը խոստովանիլ:



Մոռացութեան տրուած է խօսքի ու գիրի նշանակալից դերակատարութիւնը անհատն ու հասարակութիւնը կրթելու գործին մէջ: Պետականաշինութեան եւ ազգակերտումի բարձր նպատակներու իրականացման մէջ: Բացառութիւնները միշտ ալ կը մնան յարգելի: Լրագրողը կամ հրապարակախօսը մասնաւորաբար պարտի ուշադրութիւն ընծայել իր մէն մի խօսքին, մէն մի բառին վրայ, քանզի ինք «զինուորագրեալ»ն է ճշմարտութեան, եթէ հաւատարիմ է իր կոչումին ու առաքելութեան: Ցաւալի է նկատել սակայն որ մեր օրերուն, հետեւելով հայրենական հեռուստաէթերէն կամ այլ հարթակներէն հնչող լրագրողներու հարցումներուն կամ խօսոյթին ու բառապաշարին, որոշ լրագրողներ ամբողջովին կ'անտեսեն իրենց արհեստավարժութեան մակարդակը, լրագրական բարոյականութեան կարմիր գիծերը, լրագրութեան պահանջած անաչառութիւնը, անկաշառութիւնը, խօսքի որակը, տեսակէտներու փաստացի հիմնաւորման անհրաժեշտութիւնը եւ այսպէս շարունակ:

Այս տխուր երեւոյթը բարոյահոգեբանական իր լուրջ անդրադարձը կ'ունենայ հանրութեան վրայ, մասնաւորաբար մատղաշ սերունդի քաղաքացիական դաստիարակութեան վրայ:

Կ'արժէ այստեղ մէջբերել Գարեգին Նժդեհի խորիմաստ տողերը իրաւ հրապարակագրութեան մասին.-

«Հիմա (մեզի) պէտք է վերադաստիարակիչ հրապարակախօսութիւն: Հրապարակախօսութիւն, որ անսխալ կերպով ախտանշէ մեր ցեղին հոգերը եւ արմատական միջոցներ առաջարկի..., որ լուսաբանի մեր ժողովուրդի կնճիռները, որ կռահի իր ժողովուրդին սպառնացող վտանգը եւ դառնայ նրա հոգեւոր սպառազինումի ահագանգը...մինչեւ որ հայութիւնը՝ խրոխտաբար կանգնած իր բարձրաւանդակին վրայ ապացուցէ աշխարհին, թէ ինքը արի է- տէրը իր հայրենիքին եւ ճակատագրին»:

Իսկ վերադաստիարակելու համար հայ հանրութիւնը, դաստիարակողը կամ հրապարակախօսը թէ լրագրողը ի՛նք պէտք է դաստիարակուած ըլլայ հոգեմտաւոր, բարոյական եւ ազգային բարձր արժէքներով, ունենայ պատասխանատուութեան խոր գիտակցութիւն, ազգի ու հայրենիքի նկատմամբ սրտացաւ զգօնութիւն, սթափ միտք, համահայկական մտածողութիւն եւ տեսլական, վեր ելլելով ամէն անձնական, խմբակային եւ հատուածական նկատառումներէն: Ան պարտի ոչ միայն ախտանշել մեր հաւաքական վերքերն ու ցաւերը, այլեւ բուժումներ առաջարկել, միաժամանակ ընթերցողին ներշնչելով ոգի, հաւատք եւ լաւատեսութիւն իր վաղուան նկատմամբ: Մէկ խօսքով, մամուլը եւ անոր սպասարկու լրագրողը կամ հրապարակախօսը պիտի արթնցնէ հայ հանրութիւնը իր թմբիրէն կամ անտարբերութենէն, ահագանգէ անոր ներկայ թէ գալիք վտանգներուն շուրջ, մեր լինելութեան սպառնալիքներուն շուրջ եւ վերջապէս զայն ոգեզինէ իրաւ հայրենասիրութեամբ, ազգային հոգեմտաւոր, բարոյական արժէքներով, հայրենիքի եւ ազգի համախմբման եւ հզօրացման գերագոյն նպատակներով եւ յանձնառութեամբ:

Այն ազգն ու երկիրը որ ունի լրագրութեան կամ հրապարակագրութեան բարձր մակարդակ, տեսակէտներու փաստարկուած հիմնաւորում, խօսքի պատասխանատու ազատութիւն, ճշմարտութեան անաչառ եւ անկաշառ յանձնառութիւն, ինչպէս նաեւ բարոյական,

հոգեմտաւոր բարձր արժէքերու նուիրուածութիւն, յայնժամ ան կ'ունենայ դաստիարակուած հասարակութիւն եւ ոչ միայն: Ան կ'ունենայ նաեւ ժողովրդավարական եւ մարդկային իրաւունքներու բարձր մակարդակ, ուր իշխանութիւնները կամ դեկլարները ՀԱՇՈՒԵՏՈՒ կ'ըլլան ժողովուրդին: Եւ մամուլը կը դառնայ պատգամախօսը ճշմարտութեան եւ իրաւամբ ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ, որ կը հակակշռէ իշխանութեանց եւ բոլոր տեսակի դեկլարներու ապականումը, սայթաքումը կամ մոլորութիւնը:

Վերջիվերջոյ, ճշմարտութիւնն է, ճշմարիտ խօսքն է որ կրնայ ազատագրել մարդը, ազգն ու հայրենիքը, դառնալով կո՛չ զգօնութեան, հրաւե՛ր ինքնագիտակցութեան եւ պատասխանատւութեան:

Այս ըմբռնումով ու տեսլականով դիմաւորենք Նոր Տարին եւ Ս. Ծնունդը, մաղթելով մեր հայրենիքին ու ժողովուրդին խաղաղ, անվտանգ ու բարօր Նոր Տարի:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՀԱՐՑԱԶԲՈՅՑ

ՓԱՇԻՆԵԱՆԸ ԵՐԲ ՄԿՍԵՑ ԱՅՍ ԱՐՇԱԻԸ, ԱՍՈՒՄ ԷԻՆ, ԹԷ ՎԵՀԱՓԱՌԻ ՀԵՌԱՑՈՒՄԸ ՕՐԵՐԻ ՀԱՐՑ Է, ԲԱՅՑ ՆԱ ՄԻՆՉ ՕՐՍ ԻՐ ՏԵՂՈՒՄ Է. ԱՂԱԶԱՐԵԱՆ

11/12/2025

«Մեղիալարի» հարցերին պատասխանում է ԱԺ անկախ պատգամաւոր, Միասնական ազգային սահմանադրական կուսակցութեան նախագահ Յովիկ Աղազարեանը



– Պարո՛ն Աղազարեան, Նիկոլ Փաշինեանը ներկայացրել է ճանապարհային այն քարտեզը, որով պէտք է գնան, երբ արդէն հեռացրած կը լինեն Վեհափառին: Ըստ այդմ՝ կը նշանակուի կաթողիկոսի տեղապահ, գործող Եկեղեցական կանոնների համաձայն, ու տեղապահի առաջնային գործը, ըստ Փաշինեանի, պէտք է լինի նոր կանոնագրքի մշակումը: Ձեր գնահատմամբ՝ ինչո՞ւ է Փաշինեանը որոշել, որ պէտք է նոր կանոնագիրք:

– Ես լաւ չեմ պատկերացնում, թէ Նիկոլ Փաշինեանն ինչպէս պէտք է հասնի Վեհափառի հեռանալուն: Իմ համոզմամբ՝ Փաշինեանը չի էլ ուզում մաքրագործել Եկեղեցին, չնայած իր կամքից անկախ այդ բանն արեց, որովհետեւ այն տասը հոգին, որոնք գնացել էին իր հետ



հանդիպման, բացայայտուեցին: Նիկոլ Փաշինեանը չի կարող հեռացնել Վեհափառին, որովհետեւ չունի այդ մեխանիզմը, եթէ միայն Վեհափառն ինքը չհեռանայ, բայց, ինչպէս երեւում է, Վեհափառն իր դիրքում է ու շատ խոհեմ է իրականացնում իր հօտի դեկավարումը: Շատ ճիշտ է անում Վեհափառը, որ այդ տասը սրբապիղծներին կարգալոյծ չի անում, որովհետեւ դա հենց Փաշինեանի ուզածն է: Դա հիմք կը հանդիսանայ Փաշինեանի համար ստեղծել «Հայաստանեայց Առաքելական Եկեղեցի», Նիկոլ Փաշինեանի բուն նպատակն է ստեղծել Եկեղեցի՝ իր ցնորական՝ չորրորդ հանրապետութեանը համապատասխան:

– Ստացում է, որ Վեհափառի այսպէս կոչուած մարտավարութիւնը դուք բարձր էք գնահատում ու ճիշտ համարում:

– Շատ բարձր եմ գնահատում, ճիշտն ասած՝ ես նրա մասին մեծ կարծիքի չեմ եղել, ընդհանրապէս հոգեւորականների մասին միշտ մեծ կարծիքի չեմ եղել, բայց կոնկրետ պահին ես հանդէս եմ գալիս ՀՀ քաղաքացու, պատգամաւորի դիրքերից, որի համար առաջնային է Սահմանադրութեան պահպանման հարցը: Բայց, բոլոր դէպքերում, ահագին բան սովորեցինք Նիկոլ Փաշինեանի շնորհիւ՝ խորացանք Եկեղեցու կանոնների մէջ, թերութիւնները տեսանք, բայց այս նաեւ, կրկնում եմ, որ Վեհափառը իր դիրքին շատ համապատասխան պահուածք ունի՝ հանդարտ, անշտապ: Ակնյայտ է, որ Վեհափառը բոլորի Վեհափառն է, այդ թւում՝ Նիկոլ Փաշինեանի, նաեւ իմ՝ անհաւատիս, ու բոլորիս իր պահուածքով դաստիարակում է:

– Նիկոլ Փաշինեանը ի վերջոյ չի՞ կարողանայ հեռացնել Վեհափառին:

– Փաշինեանը երբ սկսեց այս արշաւը, իր թիմակիցներով ասում էին, թէ Վեհափառի հեռացումը օրերի հարց է, բայց, բարեբախտաբար, նա մինչ օրս իր տեղում է, ու, այնուամենայնիւ, Փաշինեանի արշաւը դրական է այն իմաստով, որ մարդիկ լիքը բան սովորեցին, ու այդ տասը հոգին բացայայտուեցին, իսկ Կաթողիկոսն իր դիրքում է, փառք Աստծոյ:

– Իսկ բացառում էք, որ Կաթողիկոսին կարող են կալանաւորել, որովհետեւ արդէն ունենք չորս կալանաւորուած արքեպիսկոպոս:

– Չեմ կարող բացառել, բայց դրանից ոչինչ չի փոխուի, որովհետեւ Փաշինեանի նմանատիպ գործողութիւնները ժողովրդի մէջ բացասական ընկալում են ունենում, չեն ընդունւում:



– Պարո՛ն Աղազարեան, ինչպե՞ս էք վերաբերում ամէն կիրակի տարբեր եկեղեցում Նիկոլ Փաշինեանի մասնակցութեանը պատարագի, որի տեքստը խմբագրում է ըստ Փաշինեանի պահանջի:

– Կոնկրետ Գիւմրիում դա մասնակցութիւն չէր, ես դա համարում եմ ասպատակութիւն, պարտադիր չէ մարդկանց թալանես կամ բռնաբարես, որ դա ասպատակութիւն համարուի, նրա արածը ասպատակութիւն էր: Եթէ ուզում է հաղորդակցուել Աստծոյ հետ, նախ թող իր տանը դա անի, եթէ պարտադիր եկեղեցի է ուզում, թող գնայ Յովհաննավանք, ինչու անպայման պէտք է գնայ Շիրակ:

Փառք ու պատիւ Շիրակի թեմի հոգեւորականներին, խոնարհում եմ բոլորի առաջ՝ իրենց տղամարդկային կեցուածքի համար, որ չհամաձայնեցին Փաշինեանի հետ, ու ինչպէս ասում է իմ կողմից սիրուած, բայց ես՝ իր կողմից չսիրուած Նաիրա Զոհրաբեանը, Փաշինեանը ստիպուած արենդայով քահանայ էր հետը տարել: Փաշինեանը փորձում է այդ կերպ ցոյց տալ, թէ իրեն աջակցողներ կան, բայց մենք ամէն կիրակի նոյն դէմքերն ենք տեսնում, նոյն մեծաթիւ ոստիկանական ու ԱԱԾ-ական տղաներին: Նա ողջ պետական ռեպրեսիվ համակարգը օգտագործում է, բայց, չնայած դրան, պարտւում է:

Քրիստինէ Աղաբեկեան

MediaLab.am

ԿԻՊՐԱՀԱՅ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՅԸ ԿԻՊՐՈՍԻ ԹԵՄԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ եռօրեայ այցը Կիպրոս՝ 5-8 Դեկտեմբեր 2025, Նորին Սրբութեան Գահակալութեան 30-ամեակին առիթով, դարձաւ ազգային-հոգեւոր ինքնագիտակցութեան, հայ հոգեմտաւոր եւ քրիստոնէական արժեքներու, ինչպէս նաեւ հայ ազգային գաղափարին ու տեսլականին հետ հաղորդուելու եւ անոնցմով կենսանորոգուելու օրհնաբեր, ցնծալից օրեր:



Արդարեւ, ընդառաջելով Կիպրոսի Հայոց Թեմի հրաւերին, Ն.Ս.Օ.Տ.Տ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ժամանեց Կիպրոս, Ուրբաթ, 5 Դեկտեմբեր 2025-ի գիշերը, նշելու համար իր կաթողիկոսական օծման ու գահակալութեան 30 ամեակը: Նորին Սուրբ Օծութիւնը դիմաւորելու համար օղակայան եկած էին Կիպրոսի Հայոց Թեմի կաթողիկոսական փոխանորդ Գերաշնորհ Տէր Կոմիտաս Արքեպիսկոպոս Օհանեան, Կիպրոսի հայ համայնքի պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեան, Լիմասոլի հոգեւոր հովիւ Գերապատիւ Տէր Յովհաննէս Ծայրագոյն Վարդապետ Սաղտըճեան, Նիկոսիոյ հոգեւոր հովիւ Արժանապատիւ Տէր Սոմիկ Քահանայ Հապէշեան, ազգային երեսփոխանական ժողովի ատենապետ Վահան Այնէճեան, ազգային վարչութեան ատենապետ Յակոբ Գազանճեան եւ անդամներ:

Նորին Սրբութեան պատուիրակութեան մաս կը կազմէին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Կեդրոնական Վարչութեան Քաղաքական Ժողովի համա-ատենապետներ Ստեփան Տէր Պետրոսեան ու Գրիգոր Մահսերեճեան, Կաթողիկոսարանի դիւանապետ Գերաշնորհ Տէր Տաճատ Եպիսկոպոս Աշրճեան, Կաթողիկոսարանի տեղեկատուական բաժանմունքի վարիչ Հոգեշնորհ Տէր Յովակիմ Վարդապետ Բանճարճեան եւ Կաթողիկոսարանի միջ-եկեղեցական ու միջ-կրօնական յարաբերութեանց բաժանմունքի պատասխանատուներէն եւ Նորին Սրբութեան գաւազանակիր Հոգեշնորհ Տէր Սարգիս Վարդապետ Աբրահամեան:



6 Դեկտեմբեր 2025ի առաւօտեան ժամերուն, Կանոնական աղօթքէն ետք, առաջնորդարանի դահլիճին մէջ, Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցաւ կիպրահայ կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն եւ թեմի ազգային իշխանութեան հետ: Հանդիպման ընթացքին Հայրապետը շեշտեց գաղութը վերակազմակերպելու հրամայականը: Ան նաեւ անհրաժեշտ բացատրութիւններ տուաւ արծարծուած հարցերուն գծով:

Յիշեալ հանդիպումէն ետք, Նորին Սրբութեան այցելեցին Կիպրոսի քրիստոնեայ համայնքներու պետերը: Անոնք առանձնաբար խօսք առնելով՝ նշեցին Վեհափառ Կաթողիկոսին դերակատարութիւնը միջ-եկեղեցական մարզէն ներս եւ այս առիթով շնորհաւորեցին անոր գահակալութեան երեսնամեակը: Նորին Սրբութիւնը, իր կարգին, ընդգծեց եկեղեցիներու միջեւ գործակցութեան նոր մղում տալու անհրաժեշտութիւնը մանաւանդ տազնապներով լեցուն ներկայ ժամանակներուն:

.....

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՒ ՕԾՄԱՆ 30-ԱՄԵԱԿԸ ՄԵԾ ԽԱՆԴԱՎԱՌՈՒԹԵԱՄԲ ՆՇՈՒԵՑԱԻ ԿԻՊՐՈՍԻ ՄԷՋ



Շաբաթ, 6 Դեկտեմբեր 2025, երեկոյեան ժամը 7:00-ին, Նիկոսիոյ «Հիլթըն» պանդոկին մէջ, Կիպրոսի հայ համայնքը մեծ շուքով ու խանդավառութեամբ նշեց իր հովուապետին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին գահակալութեան եւ օծման 30 ամեակը: Բացման խօսքով հանդէս եկաւ օրուան հանդիսավար, Ազգային վարչութեան ատենապետ Յակոբ Գազանճեանը, որ ընդգծեց օրուան իմաստը Կիպրոսի հայութեան համար, ապա ան անդրադարձաւ Նորին Սրբութեան 30 տարիներու նուիրեալ ծառայութեան եւ խօսքը եզրափակեց ըսելով՝ «Վեհափառ Հայրապետը ո՛չ միայն մեր պատմութեան եզակի նկատուող անձերէն մէկն է, այլ գլխագիր, եզակի Վեհափառն է: Թող Ամենագոր Աստուած միշտ զօրացեալ պահէ իր օծեալը, շնորհէ երկա՛ր կեանք եւ գահակալութիւն»:

Խօսք առաւ նաեւ թեմի Երեսփոխանական ժողովի ատենապետ՝ Վահան Այնէճեան: Ան իր խօսքին մէջ յատուկ կերպով անդրադարձաւ թեմին դիմագրաւած մարտահրաւերներուն եւ կատարուող աշխատանքներուն՝ ընդգծելով հայ ազգի կեանքէն ներս Նորին Սրբութեան ունեցած անզուգական ներդրումը: Ան դիտել տուաւ, որ Հայաստանի եւ սփիւռքի անորոշ եւ դժուարին օրերուն դիմաց, Արամ Ա. միշտ եղած է եւ կը մնայ հայոց իրաւունքներուն, ազգային արժէքներուն ու հայ առաքելական եկեղեցւոյ միասնականութեան անվերապահ պաշտպանը: Այնէճեան անդրադարձաւ նաեւ Նորին Սրբութեան միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական ոլորտներու ձեռքբերումներուն եւ ռահվիրայ գործունէութեան: Եւ վերջապէս յայտնեց, որ այս Հայրապետական այցելութեամբ կիպրահայութիւնը վերանորոգուած կը զգայ:

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ կաթողիկոսական փոխանորդ Գերաշնորհ Տէր Կոմիտաս Արքեպիսկոպոս Օհանեան, որ լուսարձակի տակ առաւ Նորին Սրբութեան այցելութեան անդրադարձը Կիպրոսի հայ համայնքի կեանքին մէջ: Ան ըսաւ՝ «Վեհափա՛ռ Տէր, դուք լաւ գիտէք, թէ այս գաղութը այնքան հին է՝ որքան Կիլիկիոյ մէջ հաստատուած Հայոց Հայրապետութիւնը: Այս հօտը Մեծի Տանն Կիլիկիոյ դարաւոր Հռոմկլայի եւ Մսական Աթոռին կենդանի վկան է. թէպէտ փոքր՝ սակայն գործօն գաղութ է՝ իր ժողովուրդով, պատկանելիութեամբ եւ Կիպրոս կղզիի վրայ գտնուող Սուրբ Մակար պատմական վանքով,

որ մինչեւ 1950 թուականը կը գործէր, Ֆամակուսթայի Կանչուր վանքով, ուր Ներսէս Լամբրոնցի հայրապետ ապրած է, եւ այս իրողութիւնը առաւել իմաստ ու պատմական արժէք կու տայ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան: Կաթողիկոսին գահակալութեան 30-ամեակի առիթով, ան աղօթք բարձրացուց, որ Աստուած երկար ու առողջ կեանք պարգեւէ Հայրապետին եւ Սուրբ Հոգւոյ շնորհքներու առատութիւն ու իմաստութիւն տայ, որպէսզի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը շարունակէ իր հոգեւոր ու ազգային ծառայութեան առաքելութեան յաղթական երթը»:

Կոմիտաս արքեպիսկոպոս իր խօսքի աւարտին, յանուն կիպրահայութեան երկար գահակալութիւն ու արեւշատութիւն մաղթեց Նորին Սրբութեան:

Ողջոյնի խօսքէն ետք, սրբազան հայրը, յանուն թեմին, Վեհափառ Հայրապետին նուիրեց

Կիպրոսի հայոց թեմին կողմէ յատուկ պատրաստուած հայրապետական ասա մը:

Հուսկ, Հայրապետը «Կիլիկեան Ասպետ» եւ «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշաններով պատուեց թեմի արժանաւոր ազգայիններ՝ առ ի գնահատանգ անոնց երկարամեայ եւ անձնուէր ծառայութեան: Առ այդ, «Կիլիկեան Ասպետ»-ի շքանշանին արժանացան՝ պետական երեսփոխան Վարդգէս Մահտեսեան, Գեորգ Մահտեսեան, Սեպուհ Դաւիթեան, իսկ «Սուրբ Մեսրոպ Մաշտոց»-ի շքանշանին արժանացաւ Արթո Դաւիթեան:



Աւարտին, յոբելեար Վեհափառ Հայրապետը իր հայրապետական պատգամը ուղղեց կիպրահայ գաղութին: Ան շեշտեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ծառայական առաքելութիւնը դիտել տալով, որ եկեղեցւոյ համար ծառայութիւնը սրբազան արժէք է: «30 տարի շարունակ նոյն յանձնառութեամբ եւ նոյն նախանձախնդրութեամբ, ինչպէս Մեր նախորդները, Մեր կեանքը ընծայեցինք Աստուծոյ, ազգին ու հայրենիքին համար ու զայն արժեւորեցինք միայն ծառայութեամբ», ըսաւ Նորին Սրբութիւնը:

Ան յիշեցուց, որ Յիսուս Քրիստոս ծառայութեամբ կերտեց իր իշխանութիւնը, իսկ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը՝ իր միաբանութեամբ ու ժողովական կառոյցով, ծառայական

ներկայութիւն է մեր ժողովուրդի կեանքէն ներս, իսկ միջ-եկեղեցական, միջ-կրօնական եւ միջազգային մարզերէն ներս՝ Անթիլիաս ունեցաւ տիրական ներկայութիւն, ըսաւ ան: Նորին Սրբութիւնը իր խօսքի աւարտին յատուկ ուշադրութիւն դարձուց Կիպրոսի հայ համայնքին, ըսելով. «Կիպրոսի հայ գաղութը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատմական գաղութներէն մէկը եղած է: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը այս գաղութի կեանքին պատմութեան մէջ արմատացած է եւ գոյութենական ներկայութիւն դարձած է: Մենք պիտի շարունակենք աջակից, զօրակից ու գործակից դառնալ այս գաղութին»:

Յայտնենք, որ պաշտօնական ճաշկերոյթին գեղարուեստական յայտագիրով ելոյթ ունեցան Նիկոսիոյ Սուրբ Աստուածածին մայր եկեղեցւոյ երգչախումբն ու Համազգայինի «Միփան» պարախումբը:

Ճաշկերոյթը աւարտեցաւ Նորին Սրբութեան «Պահպանիչ» աղօթքով եւ «Կիլիկիա» օրհներգի ու հայրապետական մաղթերգի միահունչ երգեցողութեամբ:

Կիրակի 7 Դեկտեմբեր 2025-ին, Արամ Ա. Վեափառ Հայրապետը ներկայ եղաւ Նիկոսիոյ Ս. Աստուածածին Մայր եկեղեցւոյ մէջ մատուցուած սուրբ եւ անմահ պատարագըն եւ իր ոգեշունչ քարոզը ուղղեց կիպրահայ հաւատացեալներուն, շեշտելով յատկապէս հաւատքի կենսական կարեւորութիւնը մեր կեանքէն ներս:



Նոյն օրը երեկոյեան, Ն.Ս.Օ.Տ.Տ Արամ Ա. Կաթողիկոսը, իր պատուիրակութեան անդամներուն ընկերակցութեամբ, այցելեց Կիպրոսի Հանրապետութեան մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատունը, ուր դիմաւորուեցաւ նորանշանակ դեսպան Իննա Թորգոմեանի եւ դեսպանատան անձնակազմին կողմէ: Դեսպանը ողջունելով Հայրապետին այցելութիւնը՝ ըսաւ, թէ «մեր ժողովուրդին եւ համազգային ու միջ-եկեղեցական մակարդակներու վրայ բարձր վարկ վայելող հեղինակաւոր անձնաւորութիւն է Նորին Սրբութիւնը եւ մեզի համար մեծ պատիւ է ու օրհնութիւն ընդունիլ զինք այս նորաբաց դեսպանատան մէջ»:

Արամ Ա. Կաթողիկոս, իր կարգին, ողջունելով Կիպրոսի ու Հայաստանի միջեւ զարգացող դիւանագիտական յարաբերութիւնները՝ շեշտեց երկու երկիրներու միջեւ գործակցութիւնը ամրապնդելու հրամայականը, որովհետեւ մեր ունեցած պատմական կապերն ու հասարակաց արդարութեան դատը պէտք է առաւել եւս մղէ զոյգ երկիրներու պետութիւնները գործակցութեան ու միացեալ մօտեցումներու ճշման՝ ներկայ աշխարհը յուզող տագնապներու գծով:



8 Դեկտեմբերի առաւօտուն, Ն.Ս.Օ.Տ.Տ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցաւ Կիպրոսի Օրթոտոքս Եկեղեցւոյ Արքեպիսկոպոս Եորիոսի հետ : Հանդիպման Նորին Սրբութեան կողքին ներկայ էին Կիպրոսի Հայոց Թեմի կաթողիկոսական փոխանորդ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան, Պետական Ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Կեդրոնական Վարչութեան Քաղաքական Ժողովի համա-ատենապետներ Ստեփան Տէր Պետրոսեան ու Գրիգոր Մահսերեճեան, Կաթողիկոսարանի դիւանապետ Գերշ. Տ. Տաճատ Եպս. Աշրգեան, Լիմասոլի հոգեւոր հովիւ Գերպ. Տ. Յովհաննէս Ծ. Վրդ. Սաղտըճեան, Լառնագայի եւ Նիկոսիոյ հոգեւոր հովիւներ՝ Տէր Մաշտոց եւ Տէր Մոմիկ, Կիպրոսի Երեսփոխանական Ժողովի ատենապետ Վահան Այնէճեան եւ Ազգային Վարչութեան ատենապետ Յակոբ Գազանճեան: Շուրջ մէկ ժամ տեւած հանդիպման ընթացքին, ընդգծուեցաւ երկու եկեղեցիներու միջեւ գոյութիւն ունեցող սերտ կապերը, լայնօրէն քննարկուեցան Կիպրոսի հայ համայնքին առընչուող հարցեր, Կիպրոսի հարցին ուղղութեամբ բանակցային գործընթացը, ինչպէս նաեւ բռնագրաւուած տարածքի մէջ եկեղեցական կալուածներու ճակատագիրը: Այցելութեան աւարտին տեղի ունեցաւ յուշանուէրներու փոխանակում:

Ենթակա այցելութեան ծիրէն ներս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ հանդիպում մը ունեցաւ Կիպրոսի Հանրապետութեան Նախագահ Նիկոս Խրիստոտուլիտիսին հետ: Հանդիպումը տեղի ունեցաւ ջերմ մթնոլորտի մը մէջ:

Այցելութեան աւարտին տեղի ունեցաւ յուշանուէրներու փոխանակում:



8 Դեկտեմբեր 2025-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոս այցելեց Նիկոսիոյ Նարեկ Վարժարան: Այցելութեան առթիւ Նարեկ Վարժարանի աշակերտները կոկիկ ներկայացում մը պատրաստած էին՝ ի պատիւ Հայրապետին, որ մեծապէս տպաւորեց բոլորին: Բացման խօսք կատարեց Տիկին Թահմազեան, ողջունելով Վեհափառ Հայրապետին օրինաբեր այցելութիւնը: Խօսքի աւարտին, տնօրէնուհին բեմ հրաւիրեց Արամ Ա Կաթողիկոսը, ուր հոգաբարձութեան ատենապետը յանձնեց Վեհափառ Հօր Նարեկ վարժարանի խորհրդանշական բանալին: Նարեկի աշակերտները իրենց ստեղծագործած գեղեցիկ նկար մը նուիրեցին Վեհափառ Հօր: Հայրապետը իր խօսքին մէջ բարձր գնահատեց վարժարանի կրթական եւ ուսումնական զարգացումն ու յառաջդիմութիւնը: Վերջապէս, Արամ Ա Կաթողիկոս բարձրացաւ տնօրէնուհիին գրասենսակը եւ պաշտօնական հիւրերու մատենանին մէջ, օրհնութեան գիրով, իր գնահատանքը արձանագրեց՝ ապա յաջորդեց հիւրասիրութիւն ջերմ մթնոլորտի մէջ:

Նախքան Նորին Սրբութեան մեկնումը Կիպրոսէն, ան նաեւ այցելեց Լիմասոլի եւ Լաոնագայի եկեղեցիներն ու զոյգ քաղաքներու Նարեկ վարժարանները, հոգեւոր-ազգային նոր շունչ ու ոգի փոխանցելով նշեալ գաղութներու անդամ-անդամուհիներուն եւ յատկապէս մատղաշ սերունդի ներկայացուցիչներուն: ԱԶՍՏ ԽՕՍՔը ջերմօրէն կը շնորհաւորէ Նորին Սրբութեան Կաթողիկոսական Օծման եւ Գահակալութեան 30-ամեակը, իրեն մաղթելով եկեղեցաշէն եւ ազգանուէր գահակալութեան դեռ երկար եւ արեւաշատ տարիներ: Համադրեց՝ Երան Գույումճեան



ՅՕՂՈՒԱԾՆԵՐ

Ի՞նչ է ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԱՆՑՔԸ.
ԱՌԱՋԱՐԿ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ



✉ **ՀՐԱԶ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ**

ԴԵԿՏԵՄԲԵՐ 7, 2025

Դոկտ. Հրաչ Զիլինիկիրեանի գրչին պատկանող այս յօդուածը գրուած է 12 տարի առաջ, սակայն անոր բարձրացուցած հարցադրումները այսօր աւելի սուր, աւելի այժմէական եւ աւելի՝ հրատապ կը հնչեն, քան երբե՛ք: Եկեղեցւոյ առաքելութեան, արժէքներու, առաջնորդութեան եւ հասարակութեան հետ յարաբերութեան առնչուած խնդիրները ոչ միայն չեն հինգած, այլ նոր իրավիճակներու մէջ՝ նոր խորք ստացած են: Այս պատճառով ալ, այս վերատպումը պարզ յիշեցում մը չէ անցեալէն, այլ՝ կոչ ուղղուած ներկային եւ գալիք տարիներուն՝ վերանայելու, վերարժեւորելու եւ վերակենդանացնելու Հայց. եկեղեցւոյ էական առաքելութիւնը:

Վ.Թ.



Հայաստանեայց առաքելական եկեղեցին այսօր աշխարհով մէկ մարտահրաւիրներու, հիմնախնդիրներու, վարչական, բարոյական հարցերու խաչմերուկին վրայ է: Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ սրբազանի բանաձեւումով՝ «Մեր ազգն փորձութիւններով է գնում: Մեր եկեղեցին էլ իր փորձութիւններով է գնում»: Ո՞ր ուղղութեամբ երթալ, ի՞նչ առաջնահերթութիւն տալ խնդիրներուն եւ անոնց վերաբերող լուծումներուն. նման բազմաթիւ հարցեր վստահաբար անքուն պիտի պահեն յառաջիկայ Եպիսկոպոսական ժողովին առնուազն կարգ մը անդամները:

Ինչպէս պատմութեան ընթացքին՝ սկսեալ 5րդ դարու Շահապիւանի ժողովէն, Հայց. եկեղեցւոյ Եպիսկոպոսական ժողովներ գումարուած են եկեղեցւոյ կեանքին մէջ դաւանական, վարդապետական եւ աստուածաբանական հարցեր քննարկելու, ինչպէս նաեւ կարգ ու կանոն հաստատելու նպատակով: Եպիսկոպոսական ժողովի արդիւնքներն ու եզրակացութիւնները կը ներկայացուին կաթողիկոսին՝ վաւերացման համար կամ ալ Ազգային եկեղեցական ժողովին՝ (եկեղեցւոյ բարձրագոյն օրէնսդիր եւ վարչական մարմինին) հաւանութեան համար: Անցնող հարիւր տարուան ընթացքին Եպիսկոպոսական ժողովը պաշտօնապէս միայն երեք անգամ գումարուած է: Վազգէն Ա. կաթողիկոսի հրաւերով 1956թ. Հոկտեմբերին գումարուած ժողովին որոշուած էր, որ «տարին գոնէ մէկ անգամ գումարել» Եպիսկոպոսական ժողովը, բայց ինչ-ինչ պատճառներով այդպէս չեղաւ: Յաջորդը 1969ին էր, ու անկէ ետք ո՛չ պաշտօնական ժողովներ գումարուեցան (միայն «խորհրդակցական»), ո՛չ ալ եկեղեցիին ու հաւատացեալները յուզող հրատապ հարցեր քննարկուեցան: Ուշագաւ երեւոյթ է, որ ներկայիս Հայց. եկեղեցւոյ (Էջմիածինը եւ Անթիլիասը գումարած) 76 եպիսկոպոսներէն հազիւ երկու-երեքը նախապէս մասնակից եղած են որեւէ պաշտօնական եւ լիարժէք Եպիսկոպոսական ժողովի:

Եկեղեցւոյ ներկայ վերիվայրումները յատուկ նորութիւն մը չեն: Եկեղեցին ընդհանրապէս եւ եկեղեցւոյ նուիրապետականութիւնը յատկապէս՝ անցնող առնուազն հարիւր տարուան ընթացքին բազմաթիւ խորունկ տագնապներ տեսած են՝ Կոստանդնուպոլսէն մինչեւ Էջմիածին, 1950ականներու Անթիլիաս-Էջմիածին «տագնապ»էն մինչեւ 1960ականներու եւ 1980ականներու Երուսաղէմի տագնապները: Բայց ի տարբերութիւն անցեալին, երբ արտաքին դրդապատճառները աւելի շեշտակի դեր եւ ներգործութիւն ունէին տագնապներու դրսեւորման վրայ, այսօր եկեղեցին անյաղթահարելի խնդիրներ չունի՝ Բոլոր ներքին հարցերը լուծելի են: Հաստատութիւններու կեանքին մէջ որեւէ լուրջ «տագնապ» յետաձգուած կամ չլուծուած խնդիրներու կուտակումն է: Այսօր նման կուտակումներու «տոմարը» լուրջ եւ հետեւողական քննարկումներու եւ լուծումներու առաջարկներ կը պահանջէ:

Իւրաքանչիւր կազմակերպութեան կեանքին մէջ կան պահեր, երբ անհրաժեշտ է յետադարձ հայեացք մը նետել որդեգրուած արժէքներուն վրայ ու խորհիլ անոնց առաջադրած պահանջներուն մասին: Այսօր, Հայաստանեայց առաքելական եկեղեցին, որպէս կազմակերպութիւն, անյետաձգելիօրէն պէտք է յստակացնէ այժմեական հասարակական



պայմաններու համահունչ իր առաքելութիւնն ու ուղենիշները, որպէսզի նորովի ծառայէ իրեն վստահուած ժողովուրդին:

Եպիսկոպոսական ժողովին ամենաանհրաժեշտ քայլերէն մէկը պէտք է ըլլայ քննարկել, ճշդել եւ սահմանել եկեղեցւոյ «առաքելութեան առանցքը»՝ այս արագընթաց եւ համաշխարհայնացուած 21րդ դարու յառաջիկայ տասնամեակներուն:

Անշուշտ, եկեղեցւոյ առաքելութիւնը երկու հազար տարի առաջ ճշդուած էր առաքեալներու շրջանին՝ Քրիստոսի հիմնական պատգամներուն եւ Աւետարանին հիման վրայ (օրինակ՝ Ղուկ. 4:16-20, Մատթ. 28:19-20), բայց այսօր, մեծաւ մասամբ, ո՛չ եկեղեցականները, ոչ ալ աշխարհականները յստակ գաղափար կ'ամրապնդեն ըմբռնում ունին, թէ ինչպիսի սկզբունքներ, ուղենիշներ, նպատակներ, արժէքներ եւ հեռանկարներ կը ներառէ Հայ եկեղեցւոյ առաքելութիւնը: Անշուշտ, եկեղեցին դարերէն եկող յստակ առաքելութիւն ունի, բայց ինչպէ՞ս պէտք է իրականացնել այս առաքելութիւնը: Ինչպէ՞ս այդ առաքելութիւնը հաղորդական ու իմաստալից դարձնել Երեւանի, Գիւմրիի, կամ Շուշիի, կամ Պէյրութի, Ապու Տապիի, Փարիզի, Ամսթերտամի, կամ Լոս Անճելըսի, Թորոնթոյի, Գորտոպայի, Մելպուրնի կամ Հոնկ Բոնգի մէջ ապրող հայուն համար:

Ինչպէս որեւէ աշխարհիկ կամ կրօնական կազմակերպութեան կեանքին մէջ, առաքելութեան առանցքի յստակացումը արժէքներու ամփոփագիր մըն է (ինչպէս ուղղափառ հաւատքի պարագային Նիկիական հանգանակը): Այնտեղ կ'ամրագրուին այնպիսի սկզբունքներ, որոնց ընդմէջէն տուեալ կազմակերպութիւնը իր հունաւորումը կը գտնէ եւ ուր կը սահմանուին այնպիսի չափանիշներ, որոնց համաձայն կը գնահատուի կազմակերպութիւնը իր հետեւորդներուն, ինչպէս նաեւ ուրիշներուն կողմէ: Նման յստակ առաքելութեան ուղեցոյց մը արդիւնաւետ է, որովհետեւ կ'օգնէ կազմակերպութեան անդամներուն, որպէսզի կեանքի կոչեն ամրագրուած արժէքները: Սա որեւէ կազմակերպութեան վարքագիծը պէտք է ըլլայ, անոր հիմնաքարը՝ բոլոր առումներով:

Հայ եկեղեցւոյ ժամանակակից առաքելութեան կարեւորագոյն արժէքներու յստակացումը եկեղեցւոյ սպասաւորներուն պիտի տրամադրէ հիմնական ուղենիշ մը, նպատակաւորաբար աշխատանքի եւ հոգեւոր ասպարեզի «քարտէս» մը, որուն հիման վրայ կարելի պիտի ըլլայ եկեղեցւոյ իսկական նպատակներուն ծառայել եւ որուն շուրջ պիտի համախմբուին հոգեւորականներն ու աշխարհական սպասաւորները: Առաքելութեան եւ արժէքներու յստակացումը կենսունակութիւն կ'երաշխաւորէ՝ եւ կ'ամրապնդէ ժողովուրդի հարազատութիւնն ու վստահութիւնը իրենց «հոգիի ծննդավայրին» նկատմամբ:

Անիմաստ է խօսիլ Հայ եկեղեցւոյ «ազգային» կամ «ընկերամշակութային» ծառայութեան կարեւորութեան մասին, առանց առաջնորդուելու անոր հիմնական հոգեւոր եւ կրօնաբարոյական առաքելութեան սկզբունքներով: Որքան ալ ընդունինք, որ եկեղեցին նաեւ ունի «աշխարհիկ» կարեւորութիւն, կ'արժէ՝ ընդգծել, որ ինչպէս դարեր շարունակ, եկեղեցւոյ առաջնային եւ գերագոյն նպատակը հոգեփրկութիւնը եղած է, պարտականութիւն մը, եթէ ոչ «քաղցր լուծ», զոր իւրաքանչիւր հոգեւորական կ'ուխտէ իր ձեռնադրութեան որոշադրիչ խորհրդակատարութեան ընթացքին: (Ձեռնադրութեան Մաշտոցը բազմիցս այս կէտը կը շեշտէ):



Հաստատութիւններ, որոնք իրենց հիմնադրիչ եւ առաջնային առաքելութենէն կը շեղին, ժամանակի ընթացքին կը դառնան ինքնանպատակ, իրականութենէ եւ հասարակական կեանքէն հեռացած թանգարանային կառոյցներ: Այսօր, եթէ Հայաստանի եւ Սփիւռքի մէջ Հայ եկեղեցին ունի «ազգային» դեր եւ կարեւորութիւն, ապա այդ ինչո՞վ կը տարբերի կուսակցութիւններու, մշակութային, բարեգործական եւ հասարակական կազմակերպութիւններու ու կառոյցներու դերէն եւ ծառայութիւններէն: Յայտօր, եկեղեցին նման հարց ոչ քննարկած է, ոչ ալ յստակ քաղաքականութիւն ճշդած է, թէ ինչ է իր «ազգային» դերը, չնայած որ հոգեւորականներուն մեծամասնութիւնը աւելի հանգիստ կը խօսի «ազգայինին» կամ լոգունգ դարձած «մեր հայրերու սուրբ հաւատքին» մասին, քան հասարակութիւնը մտահոգող բարոյական եւ հոգեւոր նիւթերու մասին:

Կարելի չէ արժեքներու նկատմամբ յարգանք ներշնչել՝ առանց զանոնք կեանքի կոչելու. սէր արժեւորել, ըսել է՝ սիրել: Արժեքները նաեւ կը ստեղծեն չափանիշներ, որոնցմով նաեւ մենք մեր գործունէութիւնը կը չափենք: Յստակ եւ տարածելի արժեքներ պէտք է ուրուագծեն եկեղեցւոյ վարչական կազմակերպչական սկզբունքները՝ որպէս ուղեցոյց եկեղեցւոյ հաւաքական գործընթացին եւ անոր ղեկավար մտածողութեան:

Վերջապէս, իւրաքանչիւր եկեղեցիի կենսունակութիւնը առաջին հերթին կախուած է հաւատացեալներու ոգեւորութենէն, անոնց պատասխանատուութեան զգացումէն եւ մասնակցութիւնէն, ոչ թէ միայն եկեղեցականներու կամ աշխարհականներու փոքր խումբի մը «տնօրինումներէն»: Այսօր շատ յստակ է, որ կ'ապրինք բողոքի եւ պահանջատիրական դարաշրջանի մը մէջ, ուր հասարակութիւնը այլեւս բացարձակ իշխանութեան ու բռնատիրութեան հանդէպ ոչ թէ միայն իր վախը թօթափած է, այլ նաեւ որդեգրած է վճռական եւ հետեւողական պայքար՝ ի նպաստ հաւաքական շահերու: Մեր պարագային, սա չի նշանակեր, որ մարդիկ Հայաստանի կամ Սփիւռքի մէջ եկեղեցւոյ դէմ պիտի «ապստամբին», բայց կ'ընդգծէ այն իրականութիւնը, որ հասարակութեան սպասումներուն անտեսումը եկեղեցւոյ նուիրապետականութեան կղզիացումին կը տանի:

Այս առումով, եկեղեցին պէտք է պատրաստ ըլլայ Ապրեցնելու եւ ոչ թէ միայն քարոզելու Հայ քրիստոնէայ հաւատքը: Հայց. եկեղեցւոյ առաքելութեան առանցքը սահմանելու համար Եպիսկոպոսական Ժողովը կրնայ սկսիլ ամենապարզ հարցադրումներով, զորս այսօր որեւէ նման մեծ հաստատութիւն մը պիտի հարցնէր իր ներքին կեանքը դրսեւորելու եւ իր արտաքին յարաբերութիւնները ճշդելու համար:

Ի՞նչ է Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ նպատակը այսօր՝ 21րդ դարուն, այսինքն՝ ի՞նչ է եկեղեցւոյ առաքելութիւնը այսօր եւ գալիք տասնամեակներուն: Ի՞նչ է կարեւորը եկեղեցւոյ համար, այսինքն՝ արժեքներու ճշդում եւ առաջնահերթութիւն: Ի՞նչ կ'ուզենք ըլլալ, ի՞նչ է եկեղեցւոյ ղեկավարութեան տեսիլքը: Ի՞նչ է եկեղեցւոյ ծրագիրը, մարտավարութիւնը: Եւ վերջապէս, ի՞նչ պէտք է ընել եւ ինչպէ՞ս:

Նման հարցադրումներ, լուրջ մօտեցումներ եւ հետեւողական աշխատանքներ, մանաւանդ աշխարհականներու գործօն մասնակցութեամբ, արդէն կարգ մը համայնքներու մէջ արդիւնքներ տուած են եւ որոշ ծուխերու կենսունակութիւն եւ աշխուժութիւն բերած են:

Այսօր՝ 21րդ դարու երկրորդ տասնամեակին, Հայց. առաքելական եկեղեցին իր բոլոր նուիրապետական աթոռներով ու կառոյցներով, իր ուժերն ու «հարստութիւնը» պէտք է



համատեղէ, որպէսզի իւրաքանչիւր ծուխ, թեմ կամ եկեղեցական համայնք վերածուի իսկական հոգեւոր «տուն»ի մը, ուր Հաւատքը, Յոյսը եւ Սէրը համայնքային եւ հոգեւոր կեանքին հիմնաքարերն են:

Վարչական ու կազմակերպչական ծիրէն անդին ու աւելի կենսական՝ Հայց. եկեղեցին պէտք է մտաւորական շփում մշակէ հասարակութեան հետ մարդկութիւնը յուզող այժմեական ընկերաքարոյական ու այլ հարցերու մասին: Պաշտամունքային կամ ծիսական բարեփոխումներ ցանկալի են եւ թերեւս անհրաժեշտ, բայց իմաստագործ են, երբ հասարակութեան կամ բարեպաշտ ժողովուրդին առօրեային հետ ոչ առնչութիւն ունին, ոչ ալ ուղղակի ազդեցութիւն: Օրինակ՝ մկրտութեան ծեսի բարեփոխումը եւ կանոնաւորութիւնը շատ աւելի իմաստալից պիտի ըլլայ, եթէ նաեւ նոյնքան լուրջ ժամանակ, մտածողութիւն ու ջանք թափուի հայ մարդուն բացատրելու, թէ ի՞նչ է մկրտութեան իմաստը եւ ի՞նչ է ծեսին առնչութիւնը իր 21րդ դարու կեանքին մէջ: Այսինքն, ի՞նչ է մկրտուած հայ քրիստոնէայ ըլլալու իմաստը ներկայ բազմակարծիք եւ բազմահոսանք աշխարհին մէջ, ուր հայ մարդը, ի տարբերութիւն հեռաւոր անցեալին, մնայուն շփում ունի այլազան եւ ոչ աւանդական մտածողութիւններու եւ թեքումներու հետ:

Եկեղեցի մը, առանց յստակ քրիստոնէական առաքելութեան՝ աշխարհիկ կազմակերպութիւն մըն է, գուրկ իր հոգեւոր գործօնէն: Եկեղեցի մը, առանց հաւաքաբար կամ անհատապէս աղօթող հաւատացեալներու՝ լոկ կառոյց մըն է: Եկեղեցի մը, առանց ուրիշներու օգնելու պատրաստակամութեան եւ համայնքային ծառայութեան՝ պարզապէս անցեալի փառքերու պահեստանոց մըն է:

Սա է Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ այսօրուան հիմնախնդիրը. մնացեալը՝ թէկուզ կարելոր, մանրամասնութիւններ են:

ՀՐԱՉ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

Հրատարակուած՝ «Ազդակ»-ի (23 Սեպտեմբեր 2013), «Մասիս»-ի (Լոս Անճելըս, 21 Սեպտեմբեր 2013), «Հորիզոն»-ի (Մոնթրէալ, 23 Սեպտեմբեր 2013), «Ասպարէզ»-ի (Լոս Անճելըս, 23 Սեպտեմբեր 2013), «Նոր Յառաջ»-ի (Փարիզ, 14 Սեպտեմբեր 2013) եւ «168ԺԱՄ»-ի (Երեւան, 16 Սեպտեմբեր 2013) մէջ:

ՄԵՆՔ ԵՆՔ ՄԵՐ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ.

ՄԵՐ ԹԱՅՈՎ ՈՒ ՉՈՐՈՎ, ՄԵՐ ՄՈՒՅԼՈՒԹԵԱՄԲ ՈՒ ԹԱՆՁՐՈՒԹԵԱՄԲ

ՊԱՐՈՅՐ Յ. ԱՂՊԱՇԵԱՆ



Խոցելի իրականություններ ու խոցոտելի ճշմարտություններ կան, որոնց կողքին ոչ կարելի է անցնիլ, ոչ ալ հանդուրժել զանոնք, պարզապէս անոր համար, որ անոնք ոչ մէկ արդարացումի կամ հասկացողութեան արժանի են, այնքան ատեն, որ ատոնք կը ծառայեն միայն ձեւակերպություններու, դերասանություններու կամ խամաճիկություններու:

Իսկ այս բոլոր խեղկատակությունները ո՞ր կը գտնուին կամ կը յայտնուին եթէ ոչ՝ այն փապուղիներուն կամ ներքուղիներուն մէջ, ուր կան (եւ կրնան ըլլալ) միայն... առնետային սողոսկումներով ու սողոսագիծերով ուրուականներ, որոնք, անտարակոյս, շատ աւելիով վտանգաբեր ու վնասաբեր են եւ համատարած աղէտ կը սփռեն:

Մակայն, երբ լայն ֆոնի ու հորիզոնականութեան վրայ կը դիտենք ու կը խորաչափենք գործող եղելությունները ու նշմարող գործունէությունները, կը տեսնենք ու կը զգանք, որ «բան մը իր տեղում չէ», իսկ ատոնք ի՞նչ կրնան ըլլալ, եթէ ոչ՝ անարդարությունը, անիրաւությունը, անմիաբանությունը, անհանդուրժողությունը, անզսպուածությունը եւ անհամակերպուածությունը, որոնք, անտարակոյս, ոչ մէկ բարեհնչեղութեամբ կրնան օժանդակել կեանքի հեզասահ թաւալքին:

Մեր այս գրառումները, մտորումները, մեկնաբանումները կամ վերլուծումները ինչի՞ կը միտին եւ ո՞ր կրնան յանգիլ, եթէ ոչ, կրկնուող ու պահանջուող այն հրամայականներուն, որոնք՝ կ'ենթադրեն, գոյություն ունեցող պարապությունները, ունայնությունները կամ՝ այլամերժություններն ու թերացումները անտեսելու եւ անջատելու իրենց էություններէն, այնքան ատեն, որ անոնք՝ անպիտանի են, անպէտք եւ անիմաստ, այլեւ՝ խիստ թունաւոր: Եթէ կան այս զգացողությունները կամ մօտեցումները, մօտիկ թէ հեռաւոր զարգացումներով եւ ընթացքներով, այն ատեն ինչի՞ կը միտուի եւ ո՞ր կարելի է գտնել տրամաբանական ելքեր կամ՝ ինչպէ՞ս պէտք է վերաբերուիլ գոյություն ունեցող բոլոր կացութեաւերուն հետ: Հարցադրումները կամ լուծումները կրնան դժուար ըլլալ, նոյնիսկ անկարելի, բայց, ընդունելի՞ է համակերպիլ այնպիսի դրոյթներու հետ, որոնք, կրնան խոչընդոտներ ստեղծել եւ արգելքներու դուռ բանալ:

Այս պարագաներուն պէտք է զգուշանալ, զգաստանալ, այլեւ՝ խուսափիլ այն վարկածներէն, որոնք կրնան բեկումնային եւ աւերակային քանդումներու ենթարկել այն ամէն ինչը որ, կը կարծուի փրկել, բայց, վերջին պահերուն անոնք կը դառնան... խորտակիչ:

Արդեօք ժամանակը պիտի գա՞յ, օր մը, մօտիկ թէ ապագային, սթափելու, դուրս գալու թմբիրներէն, փոթորիկներէն թէ աղէտներէն, եթէ ոչ լրիւ ձերբազատուելու անոնցմէ, գէթ աստիճանական եղանակներով, յանգելու կամ հասնելու այն արդիւնքներուն, որոնք կրնան առաջնորդել խաղաղություններու, թէկուզ մակընթացություններու կարգով ու հպումներով, բայց, անպայմանօրէն, վստահություն ներշնչելով, թէ՛ կան դրական զարգացումներ ու հոլովոյթներ, որոնք կը յուսադրեն ու կը հաստատեն «ապահովագրեալ» ըլլալու ու դառնալու ինքնագոհունակություն մը:



Եթէ չկան այս եւ նմանատիպ երաշխիքներ, դուրս գալու ժամանցելի սովորութիւններէն կամ հեռու մնալու այպանելի անկարգապահութիւններէն, կը նշանակէ, թէ՛ հոն կամ ինչ որ տեղ կան ախտավարակային մանրէներ, որոնք իրենց գոյութեամբ եւ աճելիութեամբ կը սպառնան ընկերութեան ու հաւաքականութեան, նոյնիսկ ժողովրդագրութեան եւ ազգագրութեան առողջականութեան, հուսկ, դառնալով մահացու դրդապատճառներ, եղբերգականներ եւ ողբերգականներ, խայտաբղէտ պատուհասներ սփռելով, աջ ու ձախ:

Ինչո՞ւ այս քիչ մը խորհրդաւոր ու քիչ մըն ալ անթափանցիկ վերագրումները, պատկերացումներն ու ակնարկումները, որոնք ումանց համար կրնան թուիլ երեւակայական կամ վերացական, իսկ ուրիշներու համար, մանաւանդ, իւլաւահասներու ու սթափամէտներու, կատարողական եւ իրական:

Արդարեւ, այսօր, երբ կը խորաչափուին ու կ'ուրուագծուին մեր շուրջը վխտացող երեւոյթներն ու մատնանշումները, կը զգացուի՞ն, կը տեսնուի՞ն, կ'ապրուի՞ն այն վերիվայրումները եւ որոգայթները, ճնշումներն ու աքցանումները, որոնք պլլուած են հասարակութեան ճիւղին ու վզին, կամաց-կամաց զայն... պարանախեղդելով, գլխատելով կամ հալեցնելով:

Եթէ այս բոլորը չեն շօշափուիր ու չեն զգացուիր, կը նշանակէ, թէ՛ «բան մը, տեղ մը» կայ աննորմալութիւն մը կամ տհասութիւն մը, իսկ եթէ կան գործնական առնչութիւններ, բայց, մատնուած են անտարբերութեան (գիտակցաբար թէ ոչ), կը նշանակէ, թէ՛ հոն ալ կայ մեծ պատասխանատուութեան պակաս մը, յանձնառութեան բացակայութիւն մը կամ աններելիութեան թուլակազմութիւն մը, իրենց բերած ու պարտադրած սուր չափանիշներով:

Գաղտնիք չէ, այսօր, հայ իրականութիւնը կ'ապրի ճգնաժամային պահեր, օրհասական պայմաններ, նոյնիսկ հոգեվարքային վայրկեաններ, համահայկական, համազգայնական, համագոյութենական թէ համընդհանրական ոչ միայն ազդանշաններով, այլեւ՝ ազդանիզակներով, որոնք կ'արձակուին, մերթ այս, մերթ այն կողմերէն, սակայն, բոլորն ալ նոյն ուժգնութեամբ, արձակութեամբ ու թիրախութեամբ:

Այս բոլորը տեղի կ'ունենան, իրենց ամենէն ծանր վայրագութեամբ եւ անասնութեամբ, ահաւորութեամբ եւ ահագնութեամբ, բայց, զանոնք զսպող չկայ, օղակող չկայ, բացառող չկայ եւ, յատկապէս, դրականօրէն ցնցող չկայ:

Ընդհակառակը, վայրէջքը կը շարունակուի, խաչակրումը՝ կը շեփորուի, թշնամանքը՝ կ'ընդլայնի, պառակտումները՝ կը բազմապատկուին, միով բանիւ, հայ ժողովուրդը, մէկ լարէն միւսին վրայ կը թառի, մէկ բեւեռէն՝ միւսին կը թռչի, մէկ անկումայնութենէն՝ ուրիշ կողմ կը գալարի, մէկ ճակատէն՝ ուրիշի մը վրայ կը յենի եւ այսպէս, տեւապէս, տեւաբար եւ անընդմէջ:

Հարցը այն է, որ՝ (եւ հո՞ւ է՝ ողբերգա-կատակերգութիւնը), ո՛չ որ կը սոսկայ տեղի ունեցածէն եւ ունենալիքէն:

- Ո՛չ որ լուրջի առած է ու կ'առնէ պատահածէն ու պատահելիքէն:
- Ո՛չ որ կը մտահոգուի կատարուածէն ու կատարուելիքէն:
- Ո՛չ որ կ'ազդուի առաջացած եւ առաջանալիք դէպքերէն:
- Ո՛չ որ կ'ապրի մղձաւանջը տիրող իրավիճակէն դուրս գալու հնարքներէն:

Անշուշտ երբ այս սրութեամբ եւ անմիջականութեամբ կը գնահատուին այն տխուր ու բիրտ պայմանները, որոնք բարդուած են հայ իրականութեան վրայ, միաժամանակ, ատոնք չեն նշանակեր, որ հայութիւնը, բոլորն ալ «նոյն կողով»ին մէջն են, քա՛ւ լիցի, այդուհանդերձ, անոր առջեւ ցցուող մարտահրաւերներու վրայ կը դիտենք ու կը խորաչափենք ԿԱՅԱՅՈՂ եղելոյթները, հետեւաբար, անհնար է զանոնք չտեսնելը վերոյիշեալ խորագիրներուն տակ:

Ասկէ՛ եւ ա՛յս բնոյթով ա՛լ, հայ իրականութիւնը կը մնայ անճրկուն, անօթեւան եւ անգլուխ, որովհետեւ, անցան տարիներ ու ժամանակներ, Հայաստանի Հանրապետութիւնը ստացաւ իր անկախութեան ինքնութիւնը ու պետականութեան գերիշխանութիւնը, բայց, անոնք, այսօրուան առումով ու մեկնակէտով, ի՞նչ տուին հայութեան.

- Հպարտութի՞ւն, անհրաժեշտութի՞ւն մը, սակայն, ի՞նչ արժեչափերով տու վարկանիշներով:

- Ինքնիշխանութի՞ւն, բացարձակատիրութի՞ւն մը, սակայն, ի՞նչ ամրակոռութեամբ ու սլացիկութեամբ:

- Միասնականութի՞ւն, հրամայականութի՞ւն մը, սակայն, ի՞նչ հասանելիութեամբ ու հզօրութեամբ:

- Դիւանագիտութի՞ւն, անխուսափելիութի՞ւն մը, սակայն, ի՞նչ արդիւնաւորութեամբ եւ օգտակարութեամբ:

- Բարեկարգութի՞ւն, անժամանցելիութի՞ւն մը, սակայն, ի՞նչ գործադրելիութեամբ եւ յառաջդիմութեամբ:

Լա՛ւ, եթէ այս (եւ այլ պահանջարկները) հայ իրականութեան համար, նուաճելի ու բարգաւաճելի գործօններ են, թէ՛ քաղաքական, թէ՛ տնտեսական, թէ՛ ապահովական թէ՛ ներհայաստանեան, թէ՛ արտհայաստանեան առումներով, ներկայիս, ո՞ր կը գտնուին այդ նժարները, ո՞ր դարակներուն, ո՞ր անկիւններուն եւ ո՞ր թաքստոցներուն մէջ, որոնք ո՛չ կը յայտնուին, ո՛չ ալ կը գործադրուին, բացի, ներքին ճակատներ բանալէ իրարու դէմ, ուրկէ նաեւ կ'ազդուի (կամ կը յայտնուի) Սփիւռքը, իր տարբեր ու զանազան ճիւղարումներով, բաժանումներով ու շեշտաւորումներով:

Այս բոլորէն ետք, երբ տակաւին նշմարուող եւ գործադրուող լուծումներ չկան, չեն երեւիր ու չեն բացայայտուիր, հետաքրքիր է, ուրկէ՞ պիտի գայ այն «փրկիչ»ը, որ հայ իրականութիւնը պիտի գրկէ ու զայն առաջնորդէ դէպի իր իսկական... բնօրրանը:

Բայց, արդեօք այդ «հանգստարանը» պիտի ունենայ (կամ վերագտնէ ինքզինք), երբ իր գլխուն կան թիրախուած պարսատիկներ ու հրթիռակոծներ, մերթ ներքին, մերթ արտաքին դիպուկահարներէն:

Բայց, պէտք կ'այժմ աճապարելու կամ շուտիկանալու, երբ ամեն ինչ մեր առջեւն է, հայկական թէ թշնամական... խարիսխներէն ու խրամատներէն:

(Պէյրութ)

27/11/2025

ՆՈՒՒՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՈՒՆԿՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ



Քահանայական ձեռնադրութիւն:
ՄՄ Մատենադարան, թ. 197, թղ. 341բ,
1287 թ., Ալեկո, Անտարան,
գրիչ՝ Յովհաննէս արքանդրայր,
ծաղկող՝ Թորոս Ռոպի՛ն:

Քահանայական կարգի նուիրականութիւնը
եւ չարաշահումը ապօրինի կարգալուծումներով

Ս. Պատարագի արարողութիւնը միշտ ալ ներշնչած է զիս: Անոր նախերգ շարականն իսկ «Խորհուրդ խորին անհաս եւ անսկիզբն» բառերով՝ մտածել տուած է ինծի, թէ ո՞վ եմ ես. հողէ ու մոխիրէ կազմուած արարած մը, որ այսօր կամ նոյնիսկ վաղը անգոյութիւն մը գուցէ, կը համարձակիմ ներսիդիս կրելու արարիչ Աստուծոյ անմար լոյսին խորհուրդը: Ո՞վ եմ ես, Տէ՛ր, որ զիս արժանի կը դարձնես ընդունելու քահանայութեան շնորհը՝ մատուցելու համար Անձիդ գոհաբերութեան սուրբ պատարագը: Ո՞վ եմ ես, Տէ՛ր.



գուցէ աննշան հիւլէ մը, որ կու գաս հաց ու գինիի խորհուրդով ճշմարտապէս մարմնանալու եւ արինանալու թէկուզ մեղսագործ ձեռքերուս մէջ. սիրոյ գոհաբերում, որուն միջոցաւ երկինքը հաշտ կը դպչի երկրին, եւ կեանք, առաւել եւս կեանք կը պարգեւէ աշխարհին:

Քահանայութիւնը իր էութեամբ հոգեւոր կոչման եւ խոնարհութեան խորհուրդ է: Մարդը, հողածին եւ վերստին հող դարձող արարած մը, աստուածային շնորհքով կը ստանձնէ առաքելութիւն մը, որ կը գերազանցէ իր բնական կարողութեան բոլոր սահմանները՝ դառնալով կրողն ու խորհրդակատարը աստուածային պաշտամունքին: Արդարեւ, մահկանացու մարդու գոյութեան եւ Աստուծոյ յաւիտենութեան միջեւ առկայ յարակարծական այս լարուածութեան մէջ է, որ կը դրսեւորուի քահանայական կոչումին բուն իմաստը՝ իբրեւ մնայուն մասնակցութիւն Քրիստոսի փրկչական եւ յաւիտենական քահանայութեան խորհուրդներուն:

«Քահանան կանգնած երկրի վրայ՝ կատարողն է երկնային գործերուն»,– կ'ըսէ Յովհաննէս Ոսկեբերան, գեղեցիկ ու պատկերաւոր համեմատութեամբ ծիսական խորհրդակատարութիւնը բնորոշելով իբրեւ երկինքի եւ երկրի միջեւ միութեան վայր: Բանին կենաց պատարագը մարդկային գործ չէ, այլ միանգամայն աստուածային ներգործութիւն, որ կը կատարուի քահանայի անձին մէջ ու անոր միջոցով: Քահանան Աստուծոյ գործակիցն է ու միաժամանակ ծառան: Ան միանշանակ կը մնայ միջնորդ ու ծառայ, այլ ոչ թէ սրբագործող շնորհի աղբիւր: Ինք՝ իրեն շնորհուած առաքելութեան կեդրոնական դէմքը չէ, այլ միշտ կը վկայէ ու կը խօսի զինք քահանայական ծառայութեան կոչողին՝ Քրիստոսի մասին, ուստի ան ձայնն է, ոչ թէ խօսքը:

Քահանան իր կոչումը, նաեւ համայնքը կը սնուցանէ Ս. Հաղորդութեամբ, զայն կ'առաջնորդէ որպէս հովիւ, կը քարոզէ Աւետարանը, կը կատարէ պաշտամունքն ու խորհրդակատարութիւնները՝ ընկալելով իր անձը իբրեւ յատուկ միջնորդ իր հաւատաւոր համայնքի անդամներուն եւ Աստուծոյ միջեւ: Այս իմաստով Ս. Գրիգոր Տաթեւացի կ'ըսէ. «Քահանային գործը կրկնակի է՝ նախ սրբել մարդը իր մեղքերէն եւ ապա զայն ընծայել Աստուծոյ»¹: Այսպէս կը բնորոշուի քահանայի հիմնարար առաքելութիւնը՝ նախ սրբել մարդը իր գործած մեղքերէն, որպէսզի վերանայ այն պատուարը, որ զինք կը բաժնէ Աստուծմէ:

Ահաւասիկ ա՛յս է Քրիստոսի եւ Անոր հիմնած եկեղեցիին որպէս քահանայ ծառայելու արժանապատուութեան, բայց նաեւ պատասխանատուութեան հիմքը՝ ներկայութիւն դարձնել Բանին կենաց փրկարար խորհուրդը համայնքին մէջ եւ անոր անդամներուն միջեւ:

Քահանայութիւնը պաշտօն մը չէ, որ մարդ կը կիրառէ, այլ՝ ինքնութիւն, հոգեւոր կոչում, որ գոյաբանօրէն կը փոխակերպէ օծեալը իր էութեամբ ու անոր կը շնորհէ իշխանութիւն ծառայելու Տիրոջը եւ անոր հօտին: Այս իշխանութիւնը, սակայն, միայն ծառայական է եւ որեւէ առնչութիւն չունի իշխելու, տիրապետելու կամ ուժ բանեցնելու որեւէ ձեւի հետ:

¹ Հմմտ. Գրիգոր Տաթեւացի, «Գիրք որ կոչի Ամառան հատոր», Կ.Պոլիս, 1741, էջ 443:



Քահանայ ըլլալը գերազանցապէս հոգեւոր կոչումի ու անոր հետ ենթակային համակ ինքնանոյնացումի իրողութիւն է: Քահանայութեան կոչումը Աստուծոյ եւ քահանային միջեւ սուրբ օծումով հաստատուած սիրոյ խորհուրդ մըն է, որ շատ աւելին է, քան արտաքինապէս տուչութիւն թուող երեւոյթ մը: Ան մակերեսային զգացում մը չէ, այլ՝ կոչումնաւորի ներսիդին խոր համոզում եւ Աստուծոյ շնորհքով ծնած ներքին ստուգութիւն, որ ունի գոյութենական ընկալումի մը ամբողջ տարողութիւնը:

Ձեռնադրութիւնն ու օծումը, որոնք ընծայեալը Ս. Խորանին վրայ հոգեւոր մասնաւոր արարողութեամբ կ'ընդունի, Եկեղեցւոյ եօթը առանձնայատուկ խորհուրդներէն մին է եւ ունի անկրկնելի եւ անջնջելի նկարագիր: Այնպէս ինչպէս մկրտութիւնն ու դրոշմն են անկրկնելի, նոյնպէս եւ ձեռնադրութեան կամ քահանայական օծումի խորհուրդներն են անջնջելի: Հետեւաբար, ինչպէս կարելի չէ վաւերականօրէն մկրտուած եւ դրոշմուած քրիստոնէան «մկրտալոյծ» կամ «դրոշմալոյծ» հռչակել, նոյնպէս անկարելի է օրինաւորապէս ձեռնադրուած եւ սուրբ միւռոնով օծուած քահանան կարգալուծել:

Երբ ուշադիր հետեւինք քահանայական ձեռնադրութեան արարողակարգին կամ ուսումնասիրենք ձեռնադրութեան Մաշտոցին մէջ աւանդուած բոլոր աղօթքներն ու անոնց ուղեկցող շարականները, ապա միանգամայն կը համոզուինք, որ այդ խորհուրդը սրբագործողը Ս. Հոգին Աստուած է՝ աստուածային ներգործութեամբ ձեռնադրուողը Քրիստոսի քահանայագործական պաշտօնին մասնակից դարձնողը, երկնային շնորհներ պարգեւողն ու զայն Եկեղեցւոյ ծառայութեան անդամագրողը: Թէպէտ,– ըստ Եկեղեցւոյ վարդապետութեան,– քահանան ձեռնադրող եւ օծող եպիսկոպոսը կրողն է առաքելական իրաւայաջորդութեան, միեւնոյն է, ան ընդամենը ձեռնադրութիւնը պաշտօնավարողն է, մինչդեռ զայն վաւերացնողն ու սրբագործողը Ս. Հոգին է: Այս առումով Ե. դարու մեր նշանաւոր հայրապետներէն Յովհան Ա. Մանդակունի իր «Յաղագս բամբաստողաց եւ չդատելոց զվարդապետսն» ճառին մէջ որոշապէս կը վկայէ. «Երբ [քահանան] արհամարհես՝ կը մեղանչես Աստուծոյ դէմ, որ զինք ձեռնադրեց եւ որուն միջոցաւ Ինք կը կատարէ [Ս. Պատարագի] Խորհուրդը եւ մկրտութիւնը»²:

Հետեւաբար, Ս. Հոգւոյն ներգործութեամբ սրբագործուած քահանայի ձեռնադրութիւնն ու օծումը,– ինչպէս մկրտութեան եւ դրոշմի խորհուրդներու պարագաներն էին,– ունին անկրկնելի, անջնջելի եւ անլուծելի նկարագիր: Թէկուզ արտաքին հանգամանքներ երբ սահմանափակեն կամ խանգարեն քահանան շարունակելու իր հոգեւոր ծառայութիւնը, անոր ներսիդին՝ էութեան մէջ, քահանայ ըլլալու փաստը կը մնայ անեղծ եւ անփոփոխ:

Այս առումով հարկ է նշել, որ եթէ երբեք այսպէս կոչուած «կարգալոյծ» քահանան իր հոգեւոր կոչումէն թելադրուած որեւէ խորհրդակատարութիւն իրականացնէ,– թէպէտ ինչքան ալ այդ ներհակ ըլլայ եկեղեցական կանոնական իրաւունքին,– միանշանակ վաւերական է: Յատկապէս խիստ անհրաժեշտութեան պարագաներու կամ երբ կայ համայնք, որ այդ խորհրդակատարութիւնը,– պատարագ, կնունք կամ պսակ,– յօժարակամ կ'ընդունի, որոնք միջոցով մեղքերէ կը սրբուի եւ կը մերձենայ Քրիստոսի: Ի վերջոյ այս պարագային ի՞նչ

² Հմմտ. «Մատենագիրք Հայոց», Յովհան Մանդակունի, «Ճառք», Ա. հատ., Անթիլիաս, 2003, էջ 1205:



կամ ո՞վ է Եկեղեցին, եթէ ոչ Տիրոջ անունով, Անոր փրկարար ներկայութեան շուրջ համախմբուած մարդիկ՝ քրիստոնէական համայնքը: Պէտք չէ մոռնալ Տէրունի պատգամը, որ կ'ըսէ. «Ուր երկու կամ երեք հոգի հաւաքուած ըլլան իմ անունովս, այնտեղ եմ ես՝ անոնց մէջ» (Մտթ. ԺԸ, 20):

Ուստի Եկեղեցւոյ վարդապետութեան այս սկզբունքէն մեկնելով կրկին կարելի է հաւաստել «մէկ անգամ քահանայ՝ ընդմիջտ քահանայ» կարգախօսը:

Ոչ մէկ ուժ գոյութիւն ունի, որ կարենայ խախտել այս կարգը, որովհետեւ ան կը հիմնուի «աստուածային իրաւունք»-ի եւ ոչ թէ եկեղեցական ժողովներէ սահմանուած «մարդկային իրաւունք»-ի վրայ: Եկեղեցւոյ աստուածաբանութիւնը, նաեւ աւանդութիւնը կը վարդապետեն, որ քահանայական ձեռնադրութիւնը Քրիստոսէ հաստատուած կարգ է, ուստի ան ուղղակի աստուածային կամքէն բխող տնօրինում է եւ ոչ թէ մարդկային գործառոյթ: Տիրոջմէն շնորհուած եւ սրբագործուած այս կարգը բնական ոչ մէկ հեղինակութիւն կրնայ լուծարել՝ ո՛չ հուրը, ո՛չ սուրը եւ ո՛չ իսկ մահը:

Այս առնչութեամբ մեր պատմութիւնը բացառիկ օրինակներ աւանդած է մեզի, որոնք միանշանակ ակններեւ կը դարձնեն քահանայական կոչումին անլուծարելիութիւնը, բոլոր պարագաներուն՝ նաեւ անխորտակելիութիւնը: Այստեղ հարկ չեմ տեսներ տողերս ծանրաբեռնելու այս մասին մատենագրական բազմաթիւ վկայութիւններով: Բայց թող արտօնուած ըլլայ ինծի վերստին Ե. դարէն բերելու պերճախօս վկայութիւն մը՝ առնչուած Գիւտ Ա. Արահեզացի կամ Ռթմսեցի կաթողիկոսի կեանքին հետ, որ արդարօրէն դասուած է մեր Եկեղեցւոյ լուսապսակ հայրապետներու շարքին:

Ղազար Փարպեցի իր «Պատմութիւն հայոց»-ին մէջ կ'աւանդէ, որ Գիւտ կաթողիկոս պարսից Պերոզ թագաւորին առջեւ Գաղիշօ Խորխոռունիի կողմէ կ'ամբաստանուի բիւզանդամետ գործունէութեան մէջ: Ուստի ան պատասխանատւութեան կը կանչուի Տիգրան: Պերոզ հայոց կաթողիկոսին կ'առաջարկէ հրովարտակով հաստատել իր կաթողիկոսական պաշտօնը եւ պատուով ուղարկել Հայաստան, եթէ վերջինս իր կամքին ենթարկուի եւ երկրպագէ արեգակին, այլապէս կը սպառնայ զրկել զինք կաթողիկոսական Աթոռէն: Իր հոգեւոր կոչումին ամբողջապէս գիտակից Գիւտ կաթողիկոս պարսից արքայից արքայ Պերոզի քաջաբար կը պատասխանէ, որ ան կրնայ զինք զրկել կաթողիկոսական Աթոռէն, սակայն իր **եպիսկոպոսական ձեռնադրութեան պատիւը իրմէ չեն կրնար խլել ո՛չ թագաւորները, ո՛չ իշխանները, եւ ո՛չ իսկ մահը:** Փարպեցւոյ գրաբար բնագիրը, անշուշտ, շատ աւելի զեղեցիկ կը հնչէ, երբ կ'ըսէ. «Իսկ յաղագս եպիսկոպոսական ձեռնադրութեանս որ ասես, թէ ի բաց առնում ի քէն՝ զայս երկնաւոր ձեռնադրութեան պատիւ առնուլ յինէն ո՛չ թագաւորք եւ ո՛չ իշխանաց ոք, այլ մահ ո՛չ իշխէ, քանզի եւ կարէ իսկ ոչ»³:

Նաեւ այս մէջբերումին մէջ յատկանշական է, որ Ե. դարու մեր հայրապետներուն համար ձեռնադրութիւնը «երկնաւոր պատիւ» է եւ ոչ թէ երկրաւոր: Ան աստուածային շնորհատւութիւն մըն է եւ ամենեւին ո՛չ մարդկային:

³ Հմմտ. Ղազար Փարպեցի, «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան», Տիփղիս, 1904, էջ 115:



Պէտք չէ մոռնալ, որ տակաւին Գիւտ կաթողիկոսի կենդանութեան տարիներուն տեղի ունեցած Աւարայրի ճակատամարտի նախօրեակին հայոց սպարապետը՝ Վարդան, իր քաջ զինակիցներուն ուղղած իր ճառին մէջ կ'ըսէ, թէ քրիստոնէութիւնը հանդերձ մը չէ, որ վրանիս հագած ենք, այլ ան մեր մարմնին գոյնն է, զոր կարելի չէ փոխել: Վասնզի անոր հիմերը ամրապէս հաստատուած են անշարժ վէմին՝ Քրիստոսի հաւատքին վրայ: Այս նոյն հաւատքին վրայ խարսխուած է նաեւ քահանայական կոչումը, զոր ոչ մէկ ուժ կրնայ այլալել, ո՛չ թագաւորները, ո՛չ իշխանները, ո՛չ կաթողիկոսները, եւ ո՛չ իսկ մահը:

Քահանայ ըլլալը տիտղոս մը չէ, որ զայն կարելի ըլլայ շնորհել, ապա շնորհագրկել անկէ: Քահանայական ձեռնադրութիւնն ու օծումը աստուածային խորհուրդներ են, որոնք ոչ մէկ ուժ, ոչ մէկ քաղաքական կամ եկեղեցական հեղինակութիւն կրնայ լուծարել, եւ ոչ իսկ մահը՝ զանոնք խորտակել, ինչպէս անյողղող համոզումով վկայած է Գիւտ Ա. կաթողիկոս պարսից գերիգոր արքայից արքային դէմ:

Վերոգրեալներուն պերճախօս ապացոյցներէն մին կը հանդիսանայ այն փաստը, որ երբ այսպէս կոչուած «կարգալոյծ» դարձած հոգեւորականի մը կարգը կը վերականգնուի, ապա զինք ո՛չ վերստին կը ձեռնադրեն եւ ո՛չ ալ կ'օծեն, այլ ընդամենը «Պահպանիչ» օրհնութեան աղօթք մը կարդալով զայն կը վերահաստատեն իր ծառայութեան մէջ:

«Առաքելական կանոնադրութիւն»-ը եւ այլ կանոնախումբեր, որոնց մէջ լիառատ են կարգալուծումի վերաբերեալ կանոններն ու յօդուածները, ոչ մէկ վաւերական առնչութիւն ունին Յիսուսի առաքեալներուն հետ: Անոնք Դ. դարու ասորական դաւանամով եւ ջղուտ միջավայրի զանազան ստեղծագործութիւններ են, որոնք հետագային վերագրուած են առաքեալներուն, եւ չարաշահելով անոնց անունին հեղինակութիւնը՝ մուտք գործած են Եկեղեցի, իսկ այսօր այդ չարաքաստիկ կարգալուծումները դարձած են եկեղեցական յաւուր պատշաճի աղետաբեր օրակարգ:

Յաւոք, եկեղեցւոյ վերնախաւին շահերը պաշտպանելու նախանձայուգութեամբ վարձկան որոշ քահանաներ, կառչած «Կանոնագիրք հայոց»-ին մէջ ներառուած կենտ ու կունտ յօդուածներու վրայ՝ հասարակական շուկան ողողած են կարգալուծութիւնը ջատագովող գրաւոր եւ բանաւոր ելոյթներով: Այդ յօդուածները,– ինչքան ալ սահմանուած ըլլան եկեղեցական տարբեր ժողովներէ, – միեւնոյն է, բնաւ եւ երբեք չեն արտացոլացներ դաւանաբանական պարտաւորեցնող ճշմարտութիւններ:

Նախ պէտք է ուսումնասիրել այդ ժողովներուն ժամանակը, անոնց գումարուելուն եւ սահմանած յօդուածներուն դրդապատճառները: Ձորօրինակ՝ Անտիոքի ժողովի (341 թ.) կանոնները, որոնք վերջերս ի նպաստ կարգալուծութեան *տոկմաներու* լայնօրէն կը շրջանառուին Էջմիածնի կայսերապապական որոշ կղերականներու կողմէ, սահմանուած են ի նպաստ արիոսականութեան հետեւող եպիսկոպոսներու, որոնց գլխաւոր առաջադրանքն էր անկարելի դարձնել Աթանաս Աղեքսանդրացիին աքսորէ վերադարձը, որ տեղի ունեցած էր 339 թուականին արիոսականութեան կողմնակից Կոստանդիանոս Բ. կայսեր (337–340) հրահանգով: Ուրեմն՝ վերոգրեալ ժողովին մէջ եպիսկոպոսներու եւ քահանաներու կարգալուծութեան վերաբերող կանոնները առանձնապէս այս



խորապատկերին եւ պատմական իրադարձութիւններուն առնչութեամբ պէտք է ընկալուին: Մինչդեռ Ընդհանրական եկեղեցին, ընդամին եւ Հայց. առաք. եկեղեցին, իբրեւ աղանդ կը նգովեն արիոսականութիւնը, իսկ մեծն Աթանաս Աղեքսանդրացին կը դասեն իրենց սրբադասուած հայրապետներու շարքին:

Կարգապահական խախտումներու առթիւ եղած կարգալուծումները վերագրեալ աստուածային խորհուրդին դէմ ուղղակի սրբապղծութիւն մըն է, իսկ մարդկային առումով՝ կատարուածը ամենավայրենի բարբարոսութիւն, որ ոչ մէկ կապ ունի քրիստոնէական ներողամտութեան եւ սիրոյ վարդապետութեան հետ: Կարգալուծումը կ'իրականանայ միայն այն պարագային, երբ ենթական հերետիկոսական ծանր մոլորութեան մը մէջ կը գտնուի եւ չ'անսար Եկեղեցւոյ կոչին՝ հրաժարելու քրիստոնէական հաւատքի գերագոյն ճշմարտութիւններուն դէմ իր դաւանած ուսմունքէն: Ձորօրինակ՝ եթէ որեւէ մէկ եկեղեցական ուրանայ Քրիստոսի անձին մէջ աստուածային եւ մարդկային միացեալ բնութիւնը, թէ Քրիստոս կատարեալ Աստուած եւ միաժամանակ կատարեալ մարդ չէ, կամ եթէ ուսուցանէ, թէ Ս. Կոյս Մարիամ Աստուածածին չէ, այլ մարդածին, այլապէս՝ Որդի Աստուած Հօրը համագոյակից չէ կամ պաշտօնապէս մերժէ Նիկիական հանգանակին դաւանական սկզբունքները եւ այլն: Կամ Հաւատամքին իբրեւ յաւելուած արտասանուող հատուածը, որ Գրիգոր Լուսաւորչի կը վերագրուի, ուր կ'ըսէ. «Իսկ անոնք, որոնք կ'ըսեն, թէ կար ժամանակ, երբ չկար Որդին, կամ կար ժամանակ, երբ չկար Սուրբ Հոգին, կամ կ'ըսեն, թէ ոչինչէն գոյացան կամ այլ էութենէ են Աստուծոյ Որդին կամ Սուրբ Հոգին, եւ թէ անոնք ենթակայ են փոփոխութեան կամ այլալման, այնպիսիք կը նգովէ Ընդհանրական եւ Առաքելական Սուրբ Եկեղեցին»: Արդարեւ, հերետիկոսութեան այս եւ նման պարագաներու ան Ս. Հոգւոյն պարգեւած շնորհներէն ինքնսըտինքեան շնորհագրկուելով՝ կը դառնայ կարգալոյծ, իսկ Եկեղեցին պարգապէս այդ փաստն է, որ կը հաստատէ: Ի դէպ պէտք է շեշտել, որ մեր Եկեղեցին երբեք անձը չէ, որ կը նգովէ, այլ անոր դաւանած հերետիկոսական վարդապետութիւնը: Չէ՞ որ Աստուած նաեւ մեղաւորը կը սիրէ, բայց ոչ ինքնին՝ մեղքը: Աստուածային սէրն ու ողորմածութիւնը մարդկային մեր մտքին ու երեւակայութեան բոլոր չափանիշերէն գերազանցապէս գերիվեր ճշմարտութիւն մըն է, սակայն սէր մը, որ նգովքի ու ատելութեան կը փոխուի, կը յարաբերականացնէ ամբողջ Փրկագործութեան խորին խորհուրդը:

Ամէն անգամ, երբ մեր եկեղեցական բեմերէն սա կամ նա հոգեւորականի՝ քահանայի, վարդապետի կամ եպիսկոպոսի մը կարգալուծումին վերաբերեալ յայտարարութիւն մը կը հրապարակուի, կարգալուծուողէն աւելի զայն կարգալուծողը կը նսեմանայ՝ աստուածային խորհուրդին սրբութեան եւ հոգեւոր կոչումին վսեմութեան հանդէպ իրեն վստահուած հեղինակութիւնը չարաշահելուն համար: Որովհետեւ ցարդ մեր գիտցած կարգալոյծ հոչակուածներու պարագային ծանրակշիռ պատճառ մը չկայ անոնց հանդէպ նման բիրտ վճիռ մը կայացնելու անհրաժեշտութեան վերաբերեալ: Եկեղեցին շատ մը այլընտրանքային միջոցներ ունի կարգապահական հարցեր կանոնաւորելու համար, բայց ոչ թէ յումալէտս, ի ժամու եւ ի տարածամու կարգալոյծ հոչակել ծառայող եկեղեցականներ՝ գործելով ծանրագոյն ոճիւր մը անոնց հոգիին դէմ: Չէ՞ որ Եկեղեցին առաքելութիւնը մարդը փրկելն է եւ ոչ թէ զայն կործանելը:



Անգամ մը եւս՝ քահանային հոգեւոր կոչումը անոր հաւատքին եւ ինքնութեան անբաժան մէկ մասը կը կազմէ: Աստուածաբանական եւ կրօնագիտական կատարեալ անհեթեթութիւն է,– թէկուզ «հայրապետական տնօրինում»-ով,– կարգալոյծ հռչակել հոգեւորական մը, որ ո՛չ իր կոչումէն յօժարական հրաժարած, ո՛չ հերետիկոսութիւն մը դաւանած, եւ ո՛չ ալ բարոյական ծանրակշիռ յանցանք մը գործած է: Եթէ երբեք կարգալուծելու այսօրուան չարաբաստիկ դրութիւնը հաստատող արհեստածին տրամաբանութեամբ պիտի առաջնորդուինք,– սարկաւազի ու քահանայի, վարդապետի ու եպիսկոպոսի պարագային,– ապա նոյն տրամաբանութեամբ նաեւ պիտի ընդունինք կաթողիկոսի կարգալուծութեան հնարաւորութիւնը՝ թէկուզ այս անգամ բացառաբար ոչ «հայրապետական տնօրինում»-ով:

Արդարեւ պէտք չէ մոռնալ՝ կապանքը, որով զոհող շղթայած եւ, միւս ծայրը քու ձեռքդ կը գտնուի:


Դոկտ. Արէլ քինյ. Մանուկեան

Ժընեւ, 17 նոյեմբեր 2025

Ա. օր Յիսնակաց պահոց

ԹԱՆԵՐ ԱՔՉԱՍ ԵՒ ՌԻՄԻԴ ՔՈՐՂ ԶԱՅՈՑ ԲՈՒՆԱԳՐԱԻՆԵԱԼ ԵՒ ԼՔԵԱԼ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Յարութիւն Իսկահատեան



Թուրք պատմաբաններ Թաներ Աքչամ եւ Ումիդ Քուրդ հայոց բռնագրաւեալ եւ լքեալ հարստութիւնները նիւթին ուսումնասիրութիւնը կատարած են միացեալ հեղինակութեամբ, «Օրէնքներուն Հուրիւնը» աշխատութեան մէջ, Պըրկըն Գիւրքեր հրատարակութիւն, Նիւ Եորք եւ Օքսֆորտ, 2012, 207 էջ (Taner Akcham and Umit Kurt, “The Spirit of the Laws”, Burgen Books, New York and Oxford, 2012, 207 pages), որ թրքերէնէ անգլերէնի թարգմանած է ամերիկահայ (նախկին պոլսահայ ծնողքի զաւակ) անգլիատառ «Տը Միւրըր Սփէքթէյթըր» շաբաթաթերթի խմբագիր Արամ Արքուն: Երբ 1915-ի Մայիս 27-ին Օսմանեան կառավարութիւնը համաշխարհային Ա. պատերազմը պատճառ բռնելով՝ որոշեց բռնի կերպով աքսորել հայերը դէպի սուրիական ու իրաքեան անապատները, արդէն Օսմանեան

Խորհրդարանը նախապէս եւ անցած քանի մը տասնեակ տարիներու ընթացքին, սկսելով ապտիւլիհամիտեան ժամանակաշրջանէն, Օսմանեան Պետութեան քաղաքացիներու եւ



մանաւանդ հայոց ինչքերն ու ստացուածքները բռնագրաւելու միտումով անուղղակի օրէնքներ անցուցած էր:

Բռնագաղթերու նպատակը պարզ տեղափոխութիւնը չէր հայոց, այլ՝ բնաջնջումը: Հոս կը ծագի հայոց ստացուածքներուն եւ ինչքերուն անորոշ ապագան՝ խորքին մէջ երկարատեւ ի վեր զանոնք իւրացնելու թուրքական պետութեան երազներու իրագործման ժամանակը հասած սեպելով: Այս տեսակի օրէնքներու հաստատումը արդէն ինքնին իբրեւ փաստ կը ծառայէ Հայոց Յեղասպանութեան կանխամտածուած բնոյթին:

Իրենց ետին թողած գաղթեցուած հայոց ինչքերն ու ստացուածքները իւրացնելու նպատակով, թրքական կառավարութիւնը Մեծ Եղեռնի տարիներուն շարք մը օրէնքներ հաստատեց եւ դատական վճիռներ արձակեց: Երբ 1918-ին վերապրող հայերը սկսան վերադառնալ իրենց տունները, օրէնքները բարեփոխելու կարիքը զգացուեցաւ: Շուտով սակայն, 1921-22-ին հայերը կրկին բռնագաղթուեցան իրենց բնակավայրերէն եւ երկրէն: Այս անգամ շարք մը նոր օրէնքներ եւ վճիռներ հաստատուեցան Թուրքիոյ հանրապետական ժամանակաշրջանին:

Իբրեւ անխոնջ պրպտումներու արդիւնք, թուրք հեղինակները՝ Թաներ Աքչամ եւ Ումիդ Քուրդ առաջին հերթին կը յիշեն Օսմանեան Պետութեան Խորհրդարանի եւ դատարաններու օրէնքներն ու վճիռները՝ իրենց թուականներով, Երիտթուրքերու ժամանակաշրջանին: Այդ օրէնքներէն մէկուն մէջ եւ յատկապէս այն որ հաստատուած է 30 Մայիս 1915-ին, գրուած է. «Ստացուածքներու արժէքը դրամի վերածելէ ետք, կը վերադարձուի տէրերուն», սակայն առանց նշելու թէ ինչպէ՞ս եւ ե՞րբ: Սոյն անորոշութիւնը վերացնելու անարդար փորձով մը, օրէնքը կը շարունակէ նշել հետեւեալը.

«Սեփականատէրերու բացակայութեան պարագային, հարստութեան արժէքը կը բաշխուի տեղւոյն՝ գիւղի կամ քաղաքի բնակիչներուն» (վաւերացուած օրէնք 10 Յունիս, 1915)(էջ 29): Երիտթուրքական ժամանակաշրջանի վերջերը, բերանացի՝ սակայն գործնական մանրամասն ծրագիրի մը գործադրութիւնը արտօնուեցաւ հայոց, ասորիներու եւ յոյներու հարստութիւնները թուրքերուն բաշխելու, հիմնուելով այն ենթադրութեան վրայ, թէ իրթիհատականներու կարծիքով բռնագաղթուած հայերն ու ասորիները, ինչպէս նաեւ յոյները այլեւս ողջ չէին մնացած (էջ 30):

Ա. Համաշխարհային պատերազմի զինադադարի ստորագրմամբ եւ հայ տարագրեալներու վերադարձով սկսաւ նոր ժամանակաշրջան մը 8 Հոկտեմբեր 1918-ին, երբ երիտթուրք կառավարութիւնը հրաժարեցաւ եւ նոր կառավարութիւն մը կազմուեցաւ Ահմետ Իզզադ փաշայի գլխաւորութեամբ 11 Հոկտեմբեր 1918-ին: Նոր կառավարութիւնը 22 Դեկտեմբեր 1918-ին օրէնք մը հաստատեց, որ կը ստիպէ թուրքերն ու քիւրտերը հայոց շարժուն թէ հաստատ ստացուածքներ ու ինչքերը վերադարձնել վերադարձած հայոց եւ ոչ թէ այլ կողմի: Նոր կառավարութիւնը 12 Յունուար 1919-ին իրթիհատական ժամանակաշրջանին հայոց բռնագրաւեալ գոյքերու եւ հարստութիւններու վերաբերեալ հաստատուած բոլոր օրէնքները չեղեալ նկատեց:

Երբ հայ բռնագաղթուածները վերադարձած են իրենց տունները, թրքական թերթերուն մէջ լոյս տեսած են լուրեր, թէ հայոց տուններէն հանուած թուրքերն ու քիւրտերը գաղթականներ էին եւ այժմ կրկին գաղթականներ դարձան: Այդ գաղթականները հաստատեցին նոր կազմակերպութիւն մը՝ «Գաղթականներու Ընկերակցութիւն» անունով, որ թրքական կառավարութեան դիմեց թուրք եւ քիւրտ գաղթականներուն բնակարաններ ապահովելու համար:

Բացի թրքական կառավարութեան մասնակի յանձնարարութենէն՝ հայոց ինչքերը վերադարձնելու սեփականատէրերուն, Մերի ժողովին մէջ այս հարցը դարձաւ հիմնական կէտերէն մէկը: Սակայն հայկական կողմի սեփականատիրութիւնը այդ ժողովին մէջ չունէր որեւէ ուղղակի ներկայացուցիչ, այլ անոր շահերը կը պաշտպանուէին եւրոպական



երկիրներու ներկայացուցիչներու կողմէ: Բայց եւ այնպէս Հայկական Պատուիրակութեան կողմէ հայ սեփականատէրերու կորուստներու տեղակազիրը ներկայացուած էր Փարիզի Խաղաղութեան վեհաժողովին: Այդ տեղեկագրութիւնը կ'ընդգրկէր աքսորէն, կոտորածներէն, կողոպուտէն եւ բռնագրաւումներէն ծագած կորուստներու վերականգնումի պահանջքը:

Թէեւ յարակարծական կը թուի, սակայն վերոյիշեալ օրէնքներուն եւ կանոնադրութիւններուն արդիւնքը եղած է՝ պաշտպանել բռնագաղթի ենթարկուած հայ ժողովուրդին ինչքերու եւ ստացուածքներու վերատիրանալու իրաւունքը: Օրէնքներն ու վճիռները թէեւ հաստատուած են հայոց բացակայութեան, սակայն անոնց գործադրութեան պարագային, որ տակաւին չէ իրականացած, սակայն իրականանալու ընթացքին անոնք պէտք է պաշտպանէին հայ, ասորի եւ յոյն սեփականատէրերու իրաւունքները, որքան ալ նենգօրէն անոնց մէջ մտցուած ըլլային մոլախոտանման կէտեր:

Անցեալ դարուն եւ ներկայիս, երբ այդ ստացուածքներէն մասնիկ մը կամ մասնիկներ կը վաճառուին կամ կը փոխանցուին այլոց, թրքական կառավարութիւնը կը շարունակէ գործել այն սկզբունքին հիման վրայ, թէ ան կը վաճառէ կամ փոխանցումը կը կատարէ իսկական սեփականատիրոջ անունով՝ հայ, ասորի կամ յոյն (էջ 2):

Հայոց թողած կամ բռնագրաւեալ հարստութիւններուն վերաբերեալ օրէնքները ընդհանրապէս Թուրքիոյ հանրապետական Ժամանկաշրջանին մէջ հաստատուած են: Թրքական կառավարութիւնը եւ անոր օրինական իրավիճակը հիմնուած են հայոց մշակութային, ընկերային եւ տնտեսական հարստութեանց, ինչպէս նաեւ հայոց այդ երկրէն վերացման վրայ: Կրօնական Գործերու Տեսչութեան եւ թրքական բանակի կողքին հիմնուած է Ընդհանուր Հաստատութիւններու Տեսչութիւնը 3 Մարտ 1924-ին, որ լքեալ ու բռնագրաւուած հարստութիւններու պաշտպանութեան համար է՝ ի նպաստ սեփականատիրոջ եւ որ ուղղակի կապուած է Թուրքիոյ վարչապետի գրասենեակին եւ պաշտօն ստանձնած է տնօրինելու քրիստոնէականներու ստացուածքներուն վերադարձի իրաւունքը:

Վերոյիշեալ Ընդհանուր Հաստատութիւններու Տեսչութիւն կազմակերպութեան լքեալ հարստութիւններու տնօրինումը կը կայանայ՝ բռնագաղթուած հայոց, ասորիներու եւ յոյներու ստացուածքներու վերաբերեալ իրաւունքներու վերադարձի տնօրինմամբ: Այս ուղղութեամբ հեղինակներ Թաներ Աքչամ եւ Ումիդ Քուրդ կ'ըսեն, թէ Հայոց եւ Ասորիներու Ցեղասպանութիւնը Թրքական Հանրապետութեան կողմէ պաշտօնակարգութիւն ստացած է: Այս կը նշանակէ թէ Թուրքիա անուղղակի կերպով կը ճանչնայ Հայոց եւ Ասորիներու Ցեղասպանութիւնը:

Այս աշխատութեամբ թուրք հեղինակներ Թաներ Աքչամ եւ Ումիդ Քուրդ կարելորդ նորութիւններով իրենց ներդրումը կը բերեն հայոց լքեալ գոյքերու հարցին առաւել եւս լուսաբանման, նաեւ Հայոց Ցեղասպանութեան առնչութեամբ Թուրքիոյ կեցուածքներու բացայատման գծով: Շնորհաւորելի աշխատանք մը արդարեւ:

ԽԱՉՔԱՐԵՐՈՒ ՄՈՒԻՐԸ ԵՈՒՆԵՍՔՕ-Ի ՄԵՂԱՆԻՆ ՎՐԱՅ

ԱՀԱՐՈՆ ՇԽՐՏԸՄԵԱՆ

Հասած ենք պատմութեան այն պահը, ուր արդարութիւնը ոչ թէ ժողովուրդները կը գրեն, այլ՝ շահերը: Միջազգային վարկազօծի կեղծ ժպիտներով կը ծածկուին մշակոյթի դէմ կատարուող ոճիրները:

Այո՛ կ'ապրինք ժամանակաշրջան մը, երբ դարերու ժառանգութիւնը նետուած է քաղաքական առեւտուրի սեղաններուն վրայ՝ ու կը խորհին, թէ աշխարհը չի տեսներ, քաղաքակիրթ մարդկութիւնը չի լսեր: Բայց աշխարհը կը տեսնէ, աշխարհը կը լսէ: Հայ ժողովուրդի պատմութիւնը գրուած է Զուղայի քանդուած խաչքարերով, Արցախի փոշիացող վանքերով: Այստեղ այլեւս



պահելու կամ արդարացնելու ոչինչ կայ:

Եւ ահա, վերջերս միջազգային խաբկանքը հասաւ իր գագաթնակետին:

Ագրպէճանը, այն պետութիւնը, որ պետական քաղաքականութեամբ մաքրեց, ջնջեց, փոշիացուց հայկական հազարամեայ մշակութային ժառանգութիւններ, ընտրուեցաւ ԵՈՒՆԵՍԿՕ-ի «Մշակութային արժէքներու

վերականգնման խորհուրդ»ի անդամ: Ընտրուեցաւ՝ իբրեւ հոգատար, իբրեւ պաշտպան, իբրեւ վերականգնող:

Արդեօ՞ք մարդկութիւնը կորսնցուցած է ճաշակի ու գիտակցութեան հասկացութիւնը:

Արդեօ՞ք բարոյականութիւնը դարձած է գործածուող արժոյթ:

Արդեօ՞ք ընդունելի է՝ երբ աշխարհի աչքին առջեւ կատարուող մշակութային

ցեղասպանութիւնը կը գնահատեն իբրեւ «վերականգնումի փորձառութիւն»:

Երբ համակարգուած քաղաքականութեամբ, շուրջ վեց հազար խաչքար կը ջնջուի

Ագրպէճանի նման հազիւ 107-ամեայ պետութեան մը ձեռքով՝ այդ պետութիւնը պէտք է

նստի ոչ թէ «վերականգնման» խորհուրդին մէջ, այլ՝ յանցագործութեան աթոռին վրայ:

Եւ դառն ճշմարտութիւնը՝ այո՛, դառն ու ծանր ճշմարտութիւնը այն է, որ այս բոլորը տեղի

կ'ունենան ոչ թէ գաղտնի, ոչ թէ գիշերը, այլ՝ ցերեկը, ուղիղ տեսախցիկներու, դիտարկող

արբանեակներու, միջազգային դիտորդներու առջեւ: Ոչ ոք կը խօսի: Միջազգային

ընտանիքը՝ լուռ: Միջազգային կազմակերպութիւնները՝ լուռ: Մարդկութեան խիղճը՝ լուռ:

Հայաստանը՝ լուռ...:

Ժողովուրդ մը չի կրնար լուռ մնալ, երբ անոր մշակոյթը կը ջնջուի ուրիշներու ձեռքով, իր՝ սեփական ձեռքերուն անգործութեամբ:

Ո՞ր է Հայաստանի բողոքը: Ո՞ր է մեր բողոք, մեր պահանջատիրութիւնը, մեր միջազգային

լեզուն: Ո՞ր են հրատապ հանդիպումները, յստակ յայտարարութիւնները, պահանջները,

մամլոյ արշաւները: Ո՞ր է հայ պատմաբաններու եւ մտաւորականութեան ձայնը: Ո՞ր են

մեր դեսպանները, նախարարները, մեր դիւանագիտական կառոյցները: Վերջապէս

Հայաստանը երբ պիտի ըսէ՝ « Կը բաւէ»:

Զարմանալի է: Այն պահուն, երբ մեր խաչքարերը կ'ոչնչանան, մեր մշակոյթը կը փոշիանայ,

մեր պետութիւնը կը խօսի ելեկտրականութեան, խաղաղութեան, բարեկամութեան եւ

գործընկերութեան մասին՝ բայց ո՛չ իրականութեան...:

Դիւանագիտութիւն չէ այս: «Գործընկեր»-ի վերաբերմունք չէ, այս: Գոյութենական հարց է

կատարուողը: Ժողովուրդ մը, երբ դադրի պաշտպանել իր մշակոյթը, պատմական

կոթողները, վանքերը, խաչքարերը, եկեղեցիները, կը դադրի պաշտպանել իր էութիւնը:



Մշակոյթը ժողովուրդի մը շունչն է: Սա պարզ ճշմարտութիւն է, որուն առջեւ լռութիւնը՝ դատապարտելի եւ աններելի յանցագործութիւն է:

Ու՞ր է մեր ձայնը: Պէտք է բարձրաձայնել՝ ոչ թէ լուռ, այլ՝ այնքան բարձր, որ միջազգային քարեղէն պատերն անգամ չկարենան զայն խլացնել:

Բոցավառ խօսքեր, այո՛, բայց անոնք ոչինչ են այն կրակին կողքին, որ այրեց Զուղայի խաչքարերը, Արցախի հոգեւոր եւ պատմամշակութային կեդրոնները: Աւելի վտանգաւորը ոչ թէ քանդումն է, այլ՝ անոր հանդէպ լռութիւնը: Աշխարհի աչքին առջեւ կը քանդեն, եւ մենք կը լռենք: Աշխարհը կը կարծէ, թէ համաձայն ենք:

Ժամանակն է կանգնելու ու ըսելու՝

Աշխարհը չի կրնար ունենալ իր ԵՈՒՆԵՍԿՕ-ն՝ առանց արդարութեան:

Աշխարհը չի կրնար արժէքներու մասին խօսիլ՝ առանց ճշմարտութեան:

Հայաստանը չի կրնար գոյութիւն ունենալ՝ առանց մշակոյթի պաշտպանութեան:

Եթէ Հայաստան չի պահանջեր արդարութիւն, ո՞վ պիտի պահանջէ:

Եթէ Հայաստան չի բարձրաձայնէր ժառանգութեան սպանողը, ո՞վ պիտի լսէ:

Եթէ Հայաստան լուռ մնայ, ո՞վ պիտի խօսի անարդարութեան դէմ:

Մշակութային ցեղասպանութիւնը «սովորական քաղաքականութիւն» չէ: Անախորժ տեղեկութիւն չէ: Ան մարդկութեան դէմ ուղղուած ոճիր է: Ոճիր, որուն դիմաց Հայաստան պէտք է ունենայ ոչ թէ հեզ, այլ՝ կրակոտ ձայն, ոչ թէ բացատրող, այլ՝ պահանջող լեզու, ոչ թէ դիւանագիտական բարեկարգութիւն, այլ՝ հրապարակային բողոք, բոցավառ խօսք, բացէ՛ ի բաց ճշմարտութիւն:

ՏԵՍԱԿԷՏ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵԿԵՂԵՑԻ-ՊԵՏՈՒԹԻՒՆ


ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ, ՈՉ ԹԷ ԸՆԴՀԱՐՈՒՄ

Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեան

Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական պատուիրակ եւ Սուրբ Աթոռում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ներկայացուցիչ

Հայ ժողովուրդը կանգնած է պատմական շրջադարձի առաջ: Դարերի ընթացքում առաջին անգամ մենք ունենք կայուն եւ անկախ Հայաստանի Հանրապետութիւն: Միեւնոյն ժամանակ, Հայ Առաքելական Եկեղեցու հաւատացեալների շուրջ երեք քառորդը բնակւում է Հայաստանի սահմաններից դուրս՝ բազմաբնոյթ ու աշխարհասփիւռ Սփիւռքում:



Այս նոր իրողութիւնը առաջ է բերում հրատապ, բայց յաճախ շփոթեցնող մի հարց. ո՞րն է Հայ Առաքելական Եկեղեցու պատշաճ դերը, և ո՞րն է պետութեան դերը:

Հայ ինքնութիւնն ու քրիստոնէական հաւատքը պատմութեան ընթացքում խորապէս միահիստուած են եղել: Միջնադարեան հայ հեղինակները յաճախ Աստծոյ և հայրենիքի մասին խոսել են միեւնոյն շնչով: Այդ հոգեւոր ու ազգային սերտ կապը հնարաւորութիւն տուեց հայ ժողովրդին դիմակայել օտար տիրապետութեանը, ցեղասպանութեանը և ցրմանը:

Սակայն այն, ինչը մեզ օգնել է գոյատեւել պետականութեան բացակայութեան պայմաններում, կարող է շփոթութիւն առաջացնել ժամանակակից հանրապետութեան իրականութեան մէջ:

Այսօր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը գտնուում է ինքնիշխան Հայաստանի Հանրապետութեան

տարածքում: Ամենայն Հայոց Կաթողիկոսը բնակւում է Հայաստանում: Սակայն Էջմիածինը որպէս իրենց հոգեւոր տուն ընկալող հայերի մեծ մասը ապրում է արտերկրում: Արդե՞ս ք Եկեղեցին պէտք է ընկալուի հիմնականում որպէս Հայաստանի Հանրապետութեան կրօնական հաստատութիւն, թե՞ որպէս համայն հայութեանը ծառայող հոգեւոր մարմին, ում առաքելութիւնը չի կարող սահմանափակուել որեւէ մէկ պետութեան շրջանակներում: Կաթոլիկ աշխարհում Սուրբ Աթոռը (Վատիկանը) և Իտալիայի պետութիւնը ժամանակի ընթացքում յստակ սահմանեցին իրենց փոխարաբերութիւնները՝ ամրագրուած Լատերանեան պայմանագրով (1929 թ. փետրուարի 11): Առաջինը համաշխարհային հաւատաւոր համայնք ունեցող հոգեւոր կենտրոն է, իսկ երկրորդը՝ քաղաքական պատասխանատւութիւն կրող ազգային պետութիւն: Նմանատիպ յստակեցման անհրաժեշտութեան առջեւ է կանգնած նաեւ Հայաստանը՝ իհարկէ, յարմարեցուած իր սեփական պատմութեանը, աւանդոյթներին և ներկայիս հանգամանքներին:

Այդ յստակեցումը սկսւում է մի քանի հիմնարար սկզբունքներից:

Առաջին՝ Հայ Առաքելական Եկեղեցին ունի հոգեւոր և բարոյական առաքելութիւն, ոչ թէ քաղաքական: Նրա հիմնական առաքելութիւնը կայանում է Աւետարանի քարոզչութեան, սրբազան խորհուրդների կատարման, խղճի ձեւաւորման, տառապեալների մխիթարութեան և հայ քրիստոնէական մշակոյթի ու յիշողութեան պահպանման մէջ:

Եկեղեցին ունի իրաւունք, իսկ երբեմն նաեւ պարտականութիւն՝ բարձրաձայնելու հասարակութեան վրայ ազդեցութիւն ունեցող բարոյական հարցերի շուրջ՝ արդարութեան, կոռուպցիայի, մարդկային արժանապատւութեան, պատերազմի և խաղաղութեան, ինչպէս նաև խոցելի խմբերի պաշտպանութեան վերաբերեալ: Սակայն այն քաղաքական կուսակցութիւն չէ և չպէտք է վերածուի դրան:

Երկրորդ՝ Հայաստանի Հանրապետութիւնը աշխարհիկ պետութիւն է: Սա չպէտք է ընկալուի որպէս հակակրօնական մօտեցում: Այն նշանակում է մի կառավարութիւն, որը ծառայում է բոլոր քաղաքացիներին՝ հաւատացեալներին և անհաւատներին, Հայ Առաքելական Եկեղեցու հետեւորդներին և այլ դաւանանքների ներկայացուցիչներին՝ առանց որեւէ աստուածաբանութիւն պարտադրելու կամ կիրառելու:

Պետութիւնը պարտաւոր է ապահովել խղճի ազատութիւնը, օրէնքի առաջ հաւասարութիւնը և մարդու հիմնարար իրաւունքների պաշտպանութիւնը:



Միեւնոյն ժամանակ, հասուն աշխարհիկ հասարակութիւնը կարող է ճանաչել Հայ Առաքելական Եկեղեցու առանձնայատուկ պատմական դերը ազգի կեանքում և համագործակցել նրա հետ կրթութեան, սոցիալական ծառայութիւնների և մշակութային ժառանգութեան պահպանման ոլորտներում՝ յստակ սահմանուած իրաւական շրջանակներում:

Այդ դէպքում ինչո՞ւ են այսօր լարուածութիւնները այդքան բարձր:

Դրանց պատճառներից մէկը այլ պատմական ժամանակաշրջանից ժառանգուած սպասումներն են: Դարեր շարունակ, երբ Հայաստանը չունէր պետականութիւն, Եկեղեցին յաճախ հանդէս էր գալիս որպէս կազմակերպուած հայկական կեանքի հիմնական յենասիւնը՝ միջնորդ, կրթող, պաշտպան և նոյնիսկ դիւանագիտական դերակատար: Ոմանք այսօր էլ ակնկալում են, որ Եկեղեցին շարունակի այդ քաղաքականացուած դերակատարութիւնը: Միւսները, ի հակադարձում, պահանջում են, որ Եկեղեցին լիովին լռի հանրային կեանքի բոլոր հարցերում: Երկու դիրքորոշումներն էլ թիւր են ընկալում կուսակցական քաղաքականութեան և բարոյական վկայութեան միջև եղած էական տարբերութիւնը:

Մէկ այլ պատճառը քաղաքականացման տարածումն է: Այսօր քաղաքական դերակատարները երբեմն փորձում են օգտագործել Եկեղեցու խորհրդանիշներն ու լեզուն՝ իրենց օրակարգերն առաջ մղելու համար, կամ հակառակը՝ յարձակւում են Եկեղեցու վրայ՝ իրենց մրցակիցներին թուլացնելու նպատակով: Սա վնասում է թէ՛ Եկեղեցու հոգեւոր հեղինակութեանը, թէ՛ ժողովրդավարական բանավէճի որակին:

Վերջապէս, առկայ է ընկալումների էական տարբերութիւն Հայաստանի և Սփիւռքի միջև: Շատ սփիւռքահայերի համար Եկեղեցին հանդիսանում է որպէս հիմնական ազգային հաստատութիւն, մինչդեռ Հայաստանի ներսում ապրող շատերի համար այն ընդամենը հաստատութիւններից մէկն է՝ գործող յաճախ փխրուն և վիճարկուող քաղաքական միջավայրում:

Առանց միմեանց փորձառութիւնները զգուշութեամբ լսելու և հասկանալու, այս տարբեր ընկալումները յանգեցնում են փոխադարձ հիասթափութեան:

Ինչպէ՞ս անցնել շփոթութիւնից դէպի յստակութիւն:

Մէկ հնարաւոր ուղի է՝ մեր պատմական ու հասարակական առանձնայատկութիւններին համապատասխան, հետեւել այն փորձին, որով անցել են այլ պետութիւններ և եկեղեցիներ՝ հրապարակայնօրէն և յստակ սահմանելով Եկեղեցի-պետութիւն յարաբերութիւնները:

Սա կարող է ենթադրել՝

- վերահաստատել Եկեղեցու անկախութիւնը հոգեւոր և ներքին հարցերում,
- ամրագրել Հանրապետութեան աշխարհիկ բնոյթը և հաւատքների նկատմամբ նրա չեզոքութիւնը,
- օրէնքով ճանաչել Հայ Առաքելական Եկեղեցու առանձնայատուկ պատմական և մշակութային դերը,
- սահմանել յստակ կանոններ՝ կանխելու Եկեղեցու կառոյցների օգտագործումը կուսակցական կամ նեղ քաղաքական նպատակներով,
- ձեւաւորել պետութեան և Եկեղեցու ղեկավարութեան միջև կանոնաւոր և թափանցիկ երկխօսութեան մեխանիզմներ:

Մրանցից ոչ մէկը առանձին չի լուծի բոլոր հակասութիւնները: Ազատ հասարակութիւնում տարաձայնութիւնները կը շարունակուեն, և այդպէս էլ պէտք է լինի: Մակայն, դա կը թուլացնի գայթակղութիւնը՝ իւրաքանչիւր վէճ վերածելու գոյաբանական պայքարի «հին Հայաստանի» և «նոր Հայաստանի» կամ «կրօնի» և «առաջընթացի» միջև:

Ազգային լուրջ մարտահրաւերների ժամանակաշրջանում՝ անվտանգային սպառնալիքների, սոցիալական դժուարութիւնների, զանգուածային արտագաղթի և



չլուծուած հաւաքական տրավմայի պայմաններում, Հայաստանին անհրաժեշտ են թե՛ արդիւնաւէտ պետութիւն, թե՛ արժանահաւատ Եկեղեցի:

Պետութիւնը կոչուած է կենտրոնանալու արդարութեան, անվտանգութեան և քաղաքացիների նիւթական բարեկեցութեան ապահովման վրայ, մինչդեռ Եկեղեցին իր առաքելութիւնն իրականացնում է հաւատքի, բարոյական ձեւաւորման, յոյսի և ազգային ինքնութեան ոլորտներում: Նրանք ծառայում են նոյն ժողովրդին, սակայն՝ տարբեր եղանակներով:

Հայ քրիստոնէութիւնը դարերի ընթացքում իւրայատուկ կերպով է միաւորել հայրենասիրութիւնն ու աստուածապաշտութիւնը: Այդ ժառանգութիւնը չպէտք է վերածուի իշխանական պայքարի գործիքի: Այն կոչուած է լինելու իմաստութեան աղբիւր այն ժամանակ, երբ մենք, թերեւս առաջին անգամ մեր պատմութեան մէջ, սովորում ենք ապրել միաժամանակ որպէս ժամանակակից հանրապետութեան քաղաքացիներ և որպէս հնագոյն քրիստոնէական ժողովրդի ժառանգներ:

Հայաստանում Եկեղեցու և պետութեան դերերի յստակեցումը չի նուազեցնի ոչ մէկի նշանակութիւնը: Ճիշտ կերպով իրականացուելու դէպքում այն կը նպաստի, որ երկուսն էլ ծառայեն աւելի ազնիւ և արդիւնաւէտ՝ կանխելով թե՛ քաղաքական իշխանութեան, թե՛ հոգեւոր հեղինակութեան հնարաւոր չարաշահումները: Այսպիսով հայ ժողովուրդը՝ թե՛ հայրենիքում, թե՛ ամբողջ Մփիւռքում, կը կարողանայ դիմաւորել ապագան աւելի պարզ մտքով և աւելի հաստատուն սրտով:

Այս կարեւոր առաքելութիւնը կարող է կեանքի կոչուել Եկեղեցու և պետութեան առաջնորդների միջեւ ամուր և վստահելի գործընկերութեան միջոցով՝ հիմնուած այնպիսի բարոյական տեսլականի վրայ, որը պաշտպանում է մեր ժողովրդի բարօրութիւնը թե՛ հայրենիքում, թե՛ Մփիւռքում:

<https://my.mamul.am/am/post/1119966>

<https://niderlandakan.livejournal.com/702052.html>

https://www.nidoragir.com/2025/12/blog-post_99.html

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՎԱԿՈՒՌԻՍՈՒՄ. ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

[05/12/2025](#)



Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին կանգնած է իր պատմության ամենաբարդ խաչմերուկներից մեկում: Դարեր շարունակ այն եղել է հայ ժողովրդի հոգեւոր միջուկը՝ պահպանելով ոչ միայն հաւատքի, այլեւ ինքնութեան, մշակոյթի ու լեզուի: Սակայն այսօր, քաղաքական բեւեռացման, հասարակական հիասթափութեան եւ արժեքային խառնաշփոթի պայմաններում, այն յայտնուել է մի ծուղակում, որը տանում է դէպի պառակտում եւ քայքայում:

Պարադոքսալ է. Եկեղեցին, մի կողմից, վայելում է բարձր վստահութիւն հասարակութեան մէջ, իսկ միւս կողմից՝ նրա բարձրաստիճան եւ շարքային հոգեւորականները ենթարկւում են ձեռքաւարտութիւնների, խախտում են նրանց տարրական իրաւունքները՝ թե՛ որպէս հոգեւորականների, թե՛ որպէս քաղաքացիների: Սակայն պարզ չէ, թե ո՞րն է Եկեղեցու ռազմավարութիւնը եւ ո՞ր է այն առաջնորդում ժողովրդին:

Վերջին իրադարձութիւնները՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի շուրջ ստեղծուած աղմուկը, հոգեւորականների կարգալուծութիւնները, Խաչիկ գիւղի Պատարագը եւ յատկապէս վարչապետի յայտարարութիւնը, որով նա քաղաքական արդիւնքը կապեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «ազատագրման մանդատի» հետ, բացայայտեցին ոչ թէ հաւատքի, այլ կառավարման եւ հաղորդակցութեան ճգնաժամ: Եկեղեցին, որը պետք է առաջնորդի, այժմ միայն արձագանգում է:



Արդարութեան համար պէտք է յստակ նշել, որ խնդիրը միայն իշխանութեան ախորժակը չէ վտանգաւոր է նաեւ ներքին պառակտումը, որը պարալիզացնում է ռազմավարական մտածողութիւնը: Իսկ առանց միասնականութեան եւ բաց երկխօսութեան՝ Եկեղեցու մարզինալացումը անխուսափելի կը լինի:

Այսօր Հայ Առաքելական Եկեղեցու առաքելութիւնը չի կարող սահմանափակուել միայն պաշտամունքային գործունէութեամբ: Այն պէտք է վերածուի գիտակցուած առաջնորդութեան՝ հասարակութեան գաղափարային, բարոյական եւ արժէքային ուղղորդման կենտրոնի: Հակառակ դէպքում այն կը դառնայ խորհրդանշական իրական ազդեցութեան:

Եկեղեցին կարող է եւ պէտք է դառնայ այն ուժը, որը կը մերժի թէ՛ իշխանութիւնների, թէ՛ ընդդիմութեան մանիպուլիացիաները, կը վերանայի իր ռազմավարութիւնն ու առաքելութիւնը, որպէսզի կարողանայ մտածուած լուծումներ տալ 21-րդ դարի մարտահրաւերներին: Սա քաղաքական պայքարով չի յաջողուի, այլ՝ ցաւալի հարցերին անդրադառնալու համարձակութեամբ եւ ժողովական միասնականութեամբ: Այդ վերանորոգման սկիզբը կարող է դառնալ ազգային ներկայացուցչական ժողովը, եթէ այն ճիշտ ու գրագէտ կազմակերպուի: Միայն այդպէս Հայ Առաքելական Եկեղեցին կը կարողանայ մնալ այն, ինչ դարեր շարունակ եղել է՝ ժողովրդի հոգեւոր սիրտը:

Հայ Առաքելական Եկեղեցին ունի դեռ անսպառ պաշար՝ իր ժողովրդի վստահութիւնը: Բայց այդ վստահութիւնը պահպանելու համար պէտք է սկսել բաց քննարկումներ՝ առանց վախի եւ բաց՝ դէպի ապագան:

Այսօր բոլորս կանգնած ենք նոյն հարցի առաջ՝ ո՞վ ենք մենք՝ որպէս ազգ, քաղաքացի, պետութիւն եւ եկեղեցի, եւ ո՞ւր ենք գնում: Եթէ այս հարցը մնայ անպատասխան, ապա լռութիւնը կը վերածուի դատաւճռի: Իսկ եթէ գտնենք պատասխաններ՝ կառուցուած ճշմարիտ, համարձակ, բայց յարգալից եւ վերափոխող խօսքի վրայ, ապա հենց այդ խօսքը կը դառնայ նոր Արարատեան լուսաբաց:

ՏԻՐԱՏՈՒՐ քին ՍԱՐԴԱՐԵԱՆ

Բաղեն Վիրթեմբերգի հոգեւոր հովիւ

ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐԱԶԱՆՔ



Ամէն բանի մասին կը գրուի եւ կը խօսուի, բեմերը, լրատուամիջոցները եւ ժողովները բազում են, խօսող-գրողներ ալ բազում են: Դեռ ոչ ոք կազմեց ցուցակը մեր բազմաւնուն եւ բազմագոյն, հին, նոր եւ աճող բաժանումներուն, անոնք ըլլան Հայաստանի Հանրապետութեան մէջ թէ անկէ դուրս՝ Սփիւռքի: Կարծէք կոտորակումները բնական են, չեն անհանգստացներ, բարիք են: Թէեւ միշտ ցանկութիւն է

«միութիւն»-ը, ո՛չ ոք անոր դէմ կը խօսի, բայց «Միութիւն»-ը կը հասկցուի ըստ բազմատեսակ եւ զիրար մերժող նախասիրութիւններու, որոնք բազմաթիւ են եւ յաճախ խիստ ենթակայական: Անոնք անկարելի կը դարձնեն հասարակ յայտարարի մը հանգելու փորձ եւ բարի կամեցողութիւն:

Կոտորուած եւ յար կոտորակուող ժողովուրդ ենք: Չենք վարանիր, ամէն առիթով, հպարտութեամբ պոռալու, որ քրիստոնէութիւնը պետական կրօն ընդունած առաջին ժողովուրդն ենք, բայց չենք ըսեր թէ քանի՞ տեսակ քրիստոնէաներ ենք, ինչո՞ւ այդպէս ենք, Քրիստոսի պատգամած ո՞ր սիրոյ արտայայտութեան հետեւելով, ի՞նչ փնտռելով եւ ի՞նչ հաստատելու համար:

Փոքրիկ եւ փոքրացած ժողովուրդ ենք, նախնիներու կտակած բայց օտարուած հայրենիք ունինք, որմէ մնացած է հողակտոր մը, գոր դէկավարելու փառասիրութիւն ունեցողներ բազմաթիւ են: Կուսակցութիւններ եւ այդպէս բաներ ունինք: Սփիւռք կոչուած հայ ազգի անորոշ սահմաններով, անորոշ թիւով եւ կոտորակներով անշրջագիծ հատուածը, իր կարգին, քանի՞ կուսակցութիւններ եւ այդպէս բաներ ունի: Բազմութիւն կայ առաջնորդելու եւ վերջին խօսք ունենալու յաւակնութիւններով: Հետեւանք այն է, որ Հանրապետութեան մէջ, ամէն օր, ծագող լոյսին հետ կը յայտնուի նոր կուսակցութիւն մը, թերթի մը կամ անհատի մը շուրջ խմբուածներով, միշտ նոյն փառասիրութիւններով, ըլլալ պատգամաւոր, նախարար եւ այդպէս բաներ: Սփիւռքը ետ չի մնար, իր կուսակցութիւններով, նախագահներով, ատենապետներով, վարչականներով, որոնք անհամար ժողովներ կը գումարեն, յաջորդ օրը կը վերկսին, շարունակելու համար բազմապատիկ եւ կրկնուող մարգարէական կարծիքներու դատարկաբանութեան տօնը, մամուլով եւ անդուռ աշխարհատարած համացանցով անթիւ եւ անհամար տեսակետներ կ'արտայայտուին, քննադատատիւններու անվերաջանալի տողանցք կայ լսողները, եթէ կան, շուարումի կը մատնուին:

Եթէ գիտնայինք թէ ո՞ր կը սկսի անհեթեթի սահմանը եւ ո՞ր կ'աւարտի, իրատես կ'ըլլայինք, նուազ կը պառակտուէինք, թէեւ անհեթեթը տեսնել եւ անոր մասին խօսիլ մեղանշում է ներսի եւ դուրսի նոմանգլատտորաներու դէմ, հանգամանաւորներու դէմ: Առասպել չէ ինչ որ պիտի յիշեմ, տեսած եմ, չեմ հնարեր:

Եւրոպա, փոքրիկ երկրի մը ծովափնեայ փոքրիկ քաղաքի մը, նոյն անշուք շէնքին մէջ, տեսած եմ տարբեր կողմնորոշումներու պատկանող երկու իրապէս «դրկից» ակումբներ: Խաղաղական ովկիանոսէն անդին գտնուող քաղաքի մը հայերը, նոյն եկեղեցիի բակին մէջ, ունին «պատկից» երկու տարբեր հայկական դպրոցներ: Նիւ Եորքի մէջ, նոյն փողոցին մէկ ծայրը եւ միւս ծայրը, կան Հայաստանեայց եկեղեցիի երկու տարբեր առաջնորդարաններ, անոնց պատկերով, Լոս Անճելըս, նոյն փողոցի երկու ծայրերը կան երկու եկեղեցիներ,



իւրաքանչիւրը կապուած մէկ կամ միւս առաջնորդարանին, Պէյրութ, փողոցի մը աջ մայթին վրայ կար հայկական վարժարան մը, փողոցի միւս մայթին վրայ կառուցուեցաւ ուրիշ հայկական վարժարան մը, միշտ մեր ասանդութիւն դարձած բաժանման ըմբռնումներու տուրք տալով... Մի՛ հարցնէք թէ ինչո՞ւ, ինչպէ՞ս: Կացութիւնը ծանօթ է:

Մփիւռքի հայաշատ քաղաքի մը մէջ կը հրատարակուին երեք հայկական օրաթերթեր նաեւ՝ շաբաթերթեր, կարծէք հոն հայերը միլիոն են: Այս դասական պատկեր է:

Գումարուեցան նորանուն կազմակերպութիւններ, հայատառ թերթերու կողքին, յայտնուեցան օտարալեզու թերթեր, անլեզան արեւելահայերէն թերթեր, շատեր հիմա նաեւ «արդի հայերէն» են, հասկնալ «աբեղեանական» ուղղագրութեամբ եւ տառադարձուած հազարաւոր «նորահայերէն» բառերով, որոնք ո՛չ հեռուէն ո՛չ մօտէն կապ ունին հայերէնի հետ, անոնցմով կը կարծուի տուրք տալ արդիականութեան: Այդ բառերը Մեսրոպի հայերէնին հետ առնչութիւն չունին: «Հազարաւոր»-ը ենթադրութիւն չէ, չափազանցութիւն կամ բանավեճային չէ: Եթէ անգլերէն կամ ֆրանսերէն չէք գիտեր, այս նորահայերէն բառերը չէք հասկնար:

Կը յիշեմ սրտցաւ հայ մեծ արուեստագէտ եւ մտաւորական Սօս Սարգսեանի ահաւոր սրտի խօսքը, զոր չլսեցինք, չենք լսեր, այն՝ որ «ՄԵՍՐՈՊ ԼԵԶՈՒՈՎ ՄԻԱՅՈՒՅ ԱԶԳԸ, ՄԵՆՔ ԼԵԶՈՒՈՎ ԲԱԺՆԵՑԻՆՔ»: Բաժանումները կը շարունակուին, ոմանք հայերէն, դատարկ հայրենասիրութիւն խաղալով կ'ըսեն, թէ «կ'ատապտապցուին»: «Պատշաճիլ» բառը հին է եւ ժամանակավրէպ...:

Կը հոլովենք ազգ, մշակոյթ, հայրենիք, այդ բառերու իմաստը նօսրացնելով, կը գործենք եւ կ'առաջնորդուինք այնպէս, որ կարծէք նոյն արմատներու, նոյն պատմութեան եւ նոյն ծննդոցի շարունակութիւն չենք :

Սօս Սարգսեանի տագնապեցնող դատումը շարունակութիւնն է թութակաբար յիշուող Խաչատուր Աբովեանի մարգարեաշունչ պատգամին, զոր միշտ պէտք է յիշել եւ յիշեցնել, քաղաքական եւ գաղափարական կարգախօս դարձնել, այդ պէտք է հասկնան, ներսի եւ դուրսի համացանցի եւ խօսափողի ախոյեանները: Հայելիին մէջ եւ մեր շուրջը նայելով, բաւարար չափով եւ իրապէս չենք լսեր, թէ ի՞նչ ըսած է Խաչատուր Աբովեան: Այդ խօսքը, եթէ որպէս կանոն արաձանագրուի պատահաբար վրայ եւ կախուի Հայաստանի եւ Մփիւռքի հեռատեսիլի, ձայնասփիւռի, թերթերու խմբագրատուներու եւ ակումբներու սրահերուն մէջ, նաեւ՝ Ազգային Ժողովի եւ նախարարութիւններու, եկեղեցիներու, քայլ կը նետենք ՀԱՅ ԱԶԳ ըլլալու եւ մնալու ուղիին վրայ:

Խաչատուր Աբովեան «իզմով եւ իստ»-ով չի խօսիր: Ան իր խօսքը չի պաճուճեր, Մարգարէի իր խօսքը ԹՈՒՂԹ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ է :

Կ'ըսէ. «Ա՛խ, լեզուն, լեզուն. լեզուն որ չըլլի, մարդ ընչի՞ նման կ'ըլլի: Մէկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն է ու հաւատը: Լեզուդ փոխի՛ր, հաւատդ ուրացի՛ր, էլ ընչո՞վ կարես ասիլ, թէ ո՞ր ազգիցն ես»:

Մեր բաժանումները, ներսը եւ դուրսը, թափով կը շարունակուին: Կը մտածե՞նք, որ բազմաթիւ լեզուներով խօսող հայերը, կորսնցնելով հայերէն բառի եւ գիրի հարազատութիւնը, վերջնական օտարման եւ անվերադարձի զառիթափին վրայ են, վաղ թէ ուշ, պիտի հեռանան ինքնութիւն կերտող եւ պահող նախնիներու բազմաբնոյթ հոգեմտաւոր ժառանգութիւն-յիշողութիւններէն, պիտի բաժնուին ազգապահ արժէքներէ եւ կառոյցներէ, ժառանգութիւն պիտի օտարեն, իրենք ալ պիտի օտարուին: Ոմանք պիտի փորձեն գիրք գրել, ինչպէս այդ կ'ընեն Ամերիկայի Ազդեկներու, Ինքաներու կամ Եգիպտոսի բուրգերու մասին:

Նահանջը կը շարունակուի համացանցի վրայ աճող եւ «արդիական» եւ «լատինատառ» հայերէնով: Երբ բառ եւ տառ հայերէն չեն, մեսրոպեան չեն, ո՞ր պիտի ըլլայ Հայը, զայն ինքնութեան ո՞ր յատկանիշներով պիտի ճանչնանք:



Ամէն բանի մասին կը խօսինք, բայց չեն գիտեր ո՞ր մակոտութեան տուրք տալով, այս աւեր գործած եւ գործող ազգային նահանջին դէմ չենք պայքարի բարձրամակարդակ գիտակցութեամբ եւ յեղափոխական յանձնառութեամբ, որպէսզի չլուծուինք անմիտ բառերու հեղեղին մէջ:

Մեր զանազան բնոյթի բաժանումները եւ զանոնք սնուցող խօսք ու բառ, ո՞ւր պիտի հասցնեն զանազան նոր անուններով եւ պատկանելիութիւններով հայերը, անոնք ըլլան «իրական Հայաստան»-ի թէ Ֆրանսայի, Ամերիկայի, Ռուսիոյ հայեր, որոնց վրայ բարդուած են հայրենիք լքողները, որոնք կ'ըլլան նոր *բելգիահայեր*, նոր իրլանտահայեր, նոր գերմանահայեր, նոր նորվեկահայեր ... հին եւ նոր կազմուող համայնքներու մէջ, Նոր Զելանտա կամ Շուէտ, ուր հասած են եւ կը հասնին սուրիահայեր, իրաքահայեր, արցախահայեր, պարսկահայեր... Հայերու տեսակներուն ցանկը կազմող պիտի գտնուի ..., որպէսզի գիտնանք, թէ ո՞ւր է ազգը, ո՞ւր են հայերը, ի՞նչ են: Յիսուն տարի վերջ, որ հեռու ժամանակ չէ, ի՞նչ պիտի ըլլայ եւ ո՞ւր պիտի ըլլայ հայ ազգը, «դուք հոն, մենք հոս»ի զիրար մոռցողներ, սպասման սենեակներու մէջ կամ յաւերժի անկողմնացոյց արմատ կորսնցուցած ճամբորդներ:

Պետութիւն, կուսակցութիւններ, եւ բաւաբար բազմացող «կազմակերպութիւններ», իրապէս որպէս օրակարգ ունի՞ «ՄԻԱՅՈՒՄ»-ը, որ չըլլայ խօսք, այլ ըլլայ բաժանումներու դէմ հաւաքական պայքարի քաղաքականութիւն:

Ֆրանսական հեռատեսիլէն ելոյթ ունեցաւ կին մը, որ ներկայացաւ որպէս ֆրանսայի Ազգային Ժողովին մէջ Ֆրանսայէն դուրս հաստատուած ֆրանսացիներու, արտերկրի ֆրանսացիներու, ընտրուած ներկայացուցիչ, որ նաեւ նախարար է: Հայկական պետութեան Ազգային Ժողովին մէջ, կա՞յ նոյն օրինակով մէկ ընտրուած լիազօր պատգամաւոր: Ինչո՞ւ չկայ: Անոր բացակայութիւնը կը վկայէ՞ այն մասին, որ բաժնուած ըլլալ եւ մնալ ընդունած ենք, եւ ան պիտի տեւէ որպէս կանոն: Ի դէպ, պէտք է մտածել այն մասին, որ Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան մէջ Սփիւռքի որպէս ազգի անանջատելի մաս ճանաչման արձանագրութիւն չկայ:

Կը սիրենք առատաբան ժողով, համաժողով, խորհրդաժողով գումարել: Մեր պատմութեան ներկայ հանգրուանին ՄԻԱՅՄԱՆ առաջադրանքով խորհրդաժողովի մը արժանի չէ՞ հայ ազգը, գոյութեանական պահանջ չէ՞ բաժանումներու վերացումը, գերանցումը տարակարծութիւններու, մրցակցութիւններու եւ «հանգամանաւորական» ախտի: Ո՞վ պիտի պահանջէ, նախաձեռնէ, խմբէ:

Կը յայտնուի՞ այդ պատմական դերին ԿՈՉՈՒՄով նախախնամական Միութիւն-Միացում կրող անձը, որուն երախտապարտ պիտի ըլլայ ԱԶԳը, հաւատալով՝ որ ԱՊԱԳԱՅ ԿԱՅ: Պարոյր Սեւակ ըսած էր. «Կանք, պիտի լինենք եւ դեռ շատանանք...»: Զէր ըսած. ինչպէ՞ս եւ ինչո՞ւ ըլլալ եւ բազմանալ առանց միացման...

Ազգի պատմութեան ներկայ հանգրուանին, մեծին եւ պզտիկին անմիջական եւ անսթեւեր պարտքն բաժանումներու դէմ պայքարի իրա՞ւ համահայկական քաղաքականութիւնը, որպէսզի չանհետանանք:


Միշտ յիշե՛լ եւ կրկնել, որ վաղը միշտ ուշ է: Երբ ուշ է, որպէս ի՞նչ եւ ինչո՞ւ շատանալ երբ բաժնող, բաժնուած եւ միացնող պիտի չըլլան ...

Յակոբ Պալեան
Հայրենիք

ԾԵԾ, ՀԱՅՀՈՅԱՆՔ, ՍՊԱՆՈՒԹԻՒՆ. ՀԱՅՐԵՆԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԼՈՒՌ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ



✉ **ԱՐԱՅԻԿ ՄԿՐՏՈՒՄԵԱՆ**



1/12/2025

Այժմ Հայաստանի մէջ այնպիսի իրավիճակ մը ձեւաւորուած է, որ ատելութիւնն ու անհանդուրժողականութիւնը շատոնց անցած են թոյլատրելի բոլոր սահմանները: Հայաստանի մէջ ամէն օր ծեծի ու արինահեղութեան մասին ծանր լուրեր կը հասնին: Շեշտակի աւելացած են սպանութիւնները, իսկ ծեծկոտութիւնները արդէն դարձած են օրուայ անբաժան մէկ մասը: Ու ամենէն վատը այն է, որ յանցանքները

«երիտասարդականացած են», այսինքն մեծաւ մասամբ տեղի կ'ունենան երիտասարդներու ու պատանիներու կողմէ: Միջադէպ մը, որուն մասին այս քանի մը օրը

լուր տարածուեցաւ համացանցով, ցոյց կու տար, թէ ինչպէս 4-5 հոգիով կը հայիոյէին ու կը ծեծէին մէկը: Պատանիներ: Ընդ որում կը ծեծէին առանց խնայելու, գետին պառկեցուցած ու ոտքերով հարուածներ տուր որ կու տաս: ասկէ քանի մը շաբաթ ալ առաջ մանկասպանութիւն մը տեղի ունեցած էր, ու 3-ամեայ երեխայի մահուան համար մեղաւոր կը նկատուի....հայրը:

Այս է այսօրուայ Հայաստանի երեսներէն մէկը:

Ատելութիւնը կ'ոչնչացնէ ու կը սպանէ մեզ: Թոյնի պէս դանդաղ ու կայուն քայլերով անվերադարձ կը փտացնէ մեր հաւաքական միտքն ու հոգին: Եւ եթէ այդ ծեծուջարդի մասին տեղեկացանք, որովհետեւ նկարահանած էին ու դրած համացանց, ապա որքա՞ն դէպքեր կը մնան թաքուն, որովհետեւ ոչ ոք անոնց մասին չի խօսիր, կամ կը փորձեն չխօսիլ, որովհետեւ Հայաստանի մէջ որեւէ յանցանքի մասին վկայութիւն տալը, ոստիկանութիւն դիմելը կա՛մ բարձրաձայնելը կը համարուի «մատնութիւն» կա՛մ «ոստիկանութեան տեղեկութիւն տալ»: Ու այդ կեղծ ասպետականութիւնը աւելի կը սրէ ընդհանուր իրավիճակը: Այս բոլորին զուգահեռ տեղի ունեցած են նաեւ երկու աչք ծակող իրողութիւններ: Մենք աւելի փակ ու մեկուսացուած դարձած ենք: Եթէ առաջ բազմաթիւ հարցերու պարագային անմիջապէս աղմուկ կը բարձրանար կամ առնուազն կ'աշխատէին ինչ որ բաներ թաքուն ընել, ապա հիմա բոլորս ալ չափով մը աւելի մեկուսացած դարձած ենք ու շատ պարսաւելի դէպքերու ժամանակ մեր ուսերը կը թոթուենք ու կ'ըսենք, որ այդ



մեր գործը չէ, այդ մեր հոգը չէ, իսկ յետոյ համացանցով վայ-վույ կ'ընենք որեւէ սպանուածի համար: Ընդամենը մէկ-եկու շաբաթ առաջ Արովեան քաղաքին մէջ, օր ցերեկով, տեսախցիկներու եւ առնուազն տասը-տասներկու հոգիի աչքին առջեւ, երկու հոգի խոհանոցային մեծ դանակով փողոցը սպանեցին երիտասարդ մը: Ոչ ոք միջամտեց: Մարդասպանները հեռացան ու կարծես, թէ դեռ չեն բռնուած: Մեր գործը չհամարելուն զուգահեռ, մենք աւելի վախկոտ դարձած ենք: Այդ վախը իրականութեան մէջ չափով մը նաեւ հիմնաւորուած է: Երբեք չես գիտեր, թէ առջեւդ կանգնած պատանին արդեօք գրպանէն դանակ չի հաներ ու չի յարձակիր վրադ, եթէ նկատողութիւն մը ընես իրեն:

Ու այդպէս ալ կ'աճի ու կը մեծնայ վախի եւ անպատճելիութեան մթնոլորտը:

Այս բոլոր այլանդակութիւնը ի հարկէ մէկ-երկու տարուայ հարց չէ: Տակաւին 2010-ին, Երեւանի մէջ դպրոցական աղջիկներ զիրար կը ծեծէին ու սեռային տարաբնոյթ հայիոյանքներ կու տային իրարու ու տղաքն ալ, փոխանակ միջամտելու ու այդ կոիւր դադրեցնելու, կը նկարէին, կը ծիծաղէին ու կ'ոգեւորուէին: Մենք այդ ժամանակ ալ վրդովեցանք ու շատերս «մարգարեացանք», որ «այս բոլորը լաւ տեղ պիտի չտանին»: Այն ժամանակ նաեւ ուրիշներ այդ դէպքը համարեցին բացառութիւն ու վերջ: Տարիները կ'անցնէին ու հայ դեռահասներու եւ երիտասարդներու շարքին կ'աւելնային ծեծը, հայիոյանքը, թմրեցուցիչը, սպանութիւնները: Մենք կը վրդովէինք ու առաջ կ'անցնէինք: Մենք, կարծես, թէ իրօք չէինք հասկնար, որ այդ բոլորը պարզ պիտի չանցնին, այլ իրենց հետքը պիտի թողուն: Ամէն մէկ պատահար ծուէն մը կը փրցնէր մեր հասարակական ընդհանուր բարոյահոգեբանական կերպարէն ու ահա 2025-ին, մենք ունինք ամբողջովին պատռտած ու ծակոտած իրողութիւն մը, երբ ամէն օր որեւէ նոր զարհուրելի դէպք մը կը սպասես: Ի միջի այլոց, թոյլ տուէք նկատել, որ այս ամենէին այդ կանկաթրական վիճակը չէ, որ կայ արեւմտեան երկիրներու մէջ: Այստեղ ոչ թէ կազմակերպուած կէսկեր են, այլ անհատական դէպքեր, որոնք, սակայն, մեր 2 միլիոննոց հասարակութեան համար շատ շատ են: Թերեւս անհատական են, բայց իրավիճակը չհակակշռելու պարագային, անոնք անպայման կը սկսին խմբուիլ փոքր աւազակախումբերի մէջ: Թերեւս այդ բոլորը չըլլայ Թեքսասի ոճով (Աստուած չընէ), բայց անխուսափելիօրէն պիտի պատահի, որովհետեւ աշխարհի մէջ ամէն ինչ իր բնականոն զարգացումը ունի:

Եւ այսպէս, մենք տարիներ շարունակ առհասարակ չենք ալ հասկցած, թէ ի վերջոյ ինչպէ՞ս կը պատահի, որ մեր «առաջին քրիստոնեայ», հիւրասէր, աստուածաւախ, ընտանեւեր, մայրապաշտ ու ազգասէր հասարակութեան մէջ երթալով կ'աւելնան մօր հասցէին ուղղուած հայիոյանքները, Հայաստանի մէջ այսօր հայ եկեղեցւոյ, հանրապետութեան տարածքին գործող կառոյցը երկբեւեռ թշնամանքի մէջ է, հայ պատանիներն ու երիտասարդները ամէն հասարակ բռնի համար իրարու արիւն կը թափեն: Մենք իրօք չհասկցանք, թէ մեր երեխաները այդ ի՞նչ մթնոլորտի մէջ կ'ապրին, որ անոնց բռնապաշարին ու վարմունքին մէջ այդքան կ'աւելնան հայիոյանքն ու բռնութիւնը:

Մենք իրօք չհասկցանք, որ մենք ենք այդ երեխաներուն այդ բոլորը սովորեցնողը, ու մենք զանոնք կը քաջալերենք, մենք ու միայն մենք զանոնք կը դրդենք աւազակութեան ու մարդասպանութեան, երբ անոնց առօրեան կը լեցնենք դատարկամիտ ու ակրեւիվ, տափակ ու անբովանդակ երոտիքով, պղծութեամբ, անաստուածութեամբ, նիւթապաշտութեամբ: Ինչ պիտի սովորէր 1990-ականներուն ծնած երեխան իր հասարակութենէն: Ինչ պիտի



սովորել 2000-ականներուն ծնածը: Առանց մոռնալու 2010-ականներու սերունդը, որ այսօր 13-16 տարեկան է ու ամբողջովին կը կրէ անեծքին իր բաժինը:

Մեր հասարակական օրկանիզմը իր թոյնն ու թարախը տարիներով լեցուց նոր սերունդին վրայ՝ թունաւորելով անոնց ուղեղն ու հոգին: Զգուելի ու տհաճ մթնոլորտ ստեղծուած է ու կը շարունակէ մնալ տիրապետող: Ու եթէ 2010-ականներու երկրորդ կեսին՝ շուրջ 2015-17-ին կը թուէր, թէ քրեական բարքերը էապէս նահանջած են, դարձած են լուսանցքային, թէ արհեստագիտութիւնը կը սկսի սիրապետող դառնալ, ըստ այդմ աւելի զարգացած ու ոչ-քրեական մտածողութիւնը, թէւ ոչ այդքան ազգային կամ «առնական», բայց առնուազն աւելի քաղաքակիրթ, ապա մենք կրկնակի սխալեցանք: Եթէ այն ժամանակ մեզի կը թուէր, թէ Հայաստանի մէջ դանդաղօրէն կը հասուննայ ընտրութիւն մը «պատուախնդիր, բայց վայրենի տղամարդու» եւ «քաղաքակիրթ, բայց կնաբարոյ տղամարդու» միջեւ, ապա հիմա արդէն գործ ունինք իւրայատուկ հրէշի մը հետ, որ թէ՛ «կնաբարոյ» է, թէ՛ պատուախնդիր, թէ՛ վայրենի: Ամենէն ակարեւորը, որ հասուն կեանքի պատրաստուող ու նոյնիքն նոր մտածներու մէկ մեծ հատուածը ո՛չ վախ ունի, ո՛չ ալ ամօթ: Եւ այդ աւելի սարսափելի է: Որովհետեւ վախ ու ամօթ չունեցողները չունին ոչ մէկ սահման, ոչ մէկ արգելք:

Շատերը կրնան առարկել, որ սա չափազանց խիստ ու միակողմանի գնահատական մըն է ու չ'արժէր քանի մը անհատական դէպք տարածել բոլորին վրայ: Այո՛, չ'արժէր: Նոյնիսկ անոր կարիքն ալ չկայ, որովհետեւ ան արդէն կը տարածուի: Եթէ կրնաք, ապա փորձեցէք նկատողութիւն ընել ծխող 14 տարեկան աղջկան: Ես կը պատկերացնեմ այդ կատարողին դէմքը, երբ այդ աղջնակը հռիւծալով անոր այնպիսի պատասխան մը կու տայ, որմէ առնուազն կարմրիլ կարելի է: Ոչ թէ պարզապէս կը պատկերացնեմ, այլ ականատես եղած եմ եղել ու ոչ միայն մէկ անգամ: Դպրոցահասակ երեխաները կը ծխեն, թմրեցուցիչ կ'օգտագործեն, օնլայն քազինօ կը խաղան ու ամենէն կարեւորը....կը նային մեզի: Կը նային մեր նկարահանած այլանդակ սերիալներուն, անբովանդակ ու ակրեսիւ երգերուն, լայիւր2 հիմքերային շո-երուն: Անոնք կը նային ու կը տեսնեն մեր կեղտոտ քաղաքական դաշտը, յանցաւոր վարմունքը չափահասներու կողմը, կաշառքն ու հովանաւորչութիւնը, քրեամիտ կենցաղն ու էութիւնը, անոնք կը տեսնեն ու կը լսեն, թէ ինչպէս սուրբ եկեղեցւոյ հոգեւորականները մէկը միւսին ետեւէն կը բացայայտ(ուին)են իրենց սեռային շեղած կեանքը: Անոնք նաեւ կը տեսնեն, որ իրենց ուսուցիչները աղքատ են, գիտնականները՝ լուռ, մտաւորականները՝ անտեսուած, գրականութիւնը՝ արհամարհուած:

Երեխաները յիմար չեն: Անոնք շատ խելացի են: Բնական տաղանդ ունին շատերը եւ անոնք ծոյլ չեն: Անոնք շատ գործուն են ու շատ լաւ կը սորվին...ոչ միայն դպրոցի դասագիրքին, այլեւ իրական կեանքի դասերը, որ մենք ամէն օր կը ստիպենք ու կու տանք անոնց: Ու մենք, միայն ու միայն մենք մեղաւոր ենք, որ մեր պատանիներուն մէկ մասը կը յայտնուի բանտի մէջ, մէկ մասը՝ գերեզմանոցին: Որովհետեւ մենք հասունցուցինք այն մթնոլորտը, ուր հայիւնայնքը, ծեծն ու ակրեսիւութիւնը դառնայ բնական ու խրախուսուող: Մենք կ'ուզէինք ստեղծել գերուժեղ ու անկաշկանդ սերունդ մը, փոխարէնը ստացանք անվախ հրէշ մը, որ այլեւս անկարելի կը դառնայ կառավարել ու նոյնիքն ան ալ կ'ոչնչացնէ թէ՛ զինք, թէ՛ ալ մեզ:

Սա դաժան է, չիմնաւորուած դաժան: Այդ պարագային գացէք ու հաշուեցէք, թէ քանի՞ պատանի տուն կը տանին ծակած վերքով, քանի՞ պատանի ամէն օր ծեծ կ'ուտն ու կը լռէ, եւ առհասարակ ի՞նչ կը կատարուի երկրին մէջ:

Մենք տակաւին ամբողջովին չենք կործանած այս սերունդը: Բայց շատ մօտ ենք: Ու եթէ 5-10 տարի եւս ո՛չ հասարակութիւնը , ո՛չ ալ պետութիւնը ռազմավարական-անհատական մակարդակով չպայքարի իւրաքանչիւր պատանիի ապագային համար, այդ ապագան պարզապէս պիտի չգայ:

ԱՆՀՐԱԻՐ ԿԱՐԾԻՔ՝ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆԵՐԿԱՅ ՏԱԳՆԱՊԻՆ ՄԱՍԻՆ

30/11/2025



Օրէ օր սաստկացող եկեղեցական տագնապին առնչութեամբ զանգուածային լրատուութեան միջոցներուն մէջ յիշատակուող արդէն իսկ տասնեակ հոգեւորականներէն միայն երկուքին կամ երեքին անձամբ հանդիպելու առիթ ունեցած եմ, բոլորն ալ՝ հարեանցի: Բաւական մտմտալէ ետք որոշեցի դիմել որոշակի վտանգի (risk) ու հրապարակել մտահոգութիւնս, նախապէս՝ խնդրելով որ այս գրութեան տակ ռեւէ մէկը անոր կամ իմ մասին դրական բան չգրէ: Իսկ քննադատները ազատ են: Չհաւնած մեկնաբանութիւններս ջնջելու սովորութիւն չունիմ, բայց դժուար թէ հեշտութեամբ «հաւատափոխ» ըլլամ: Կը գրեմ իբրեւ երկար տարիներէ ի վեր հայկական պաղ պատերազմի, ներառեալ՝

1952-1963 թուականներու Անթիլիասի կաթողիկոսական տագնապին, ուսումնասիրութեամբ զբաղող անձ: Անցեալի մասին իմացածս կը գունաւորէ, կը մշուշապատէ այսօրուան պատահածներուն մասին մտահոգ մօտեցումս: Միբեւի՛ հոգեւորականներ,

Ամէն գնով հեռու մնացէ՛ք քաղաքական գործիչներէն՝ «ներկաներէն» ու «նախկիններէն», ձեզ փառաբանողներէն ու ձեզ դատաւիտողներէն: Նուագագոյն կասկածն անգամ չունիմ, որ Հայաստանի քաղաքական ներկայ երկու ճամբարներէն առտու-իրիկուն ձեզմէ իւրաքանչիւրին կողմ կամ դէմ կուրծք ծեծողներուն համար, Եկեղեցին ՄԻՋՈՑ Է ՄԻԱՅՆ յանուն իրենց քաղաքական նկրտումներուն: Ձեզ պիտի մեծարեն միա՛յն այնքան ատեն, որ հլու էք իրենց քաղաքական նպատակներուն, երբ ձեր խօսքով ու գործով իրենց զինամթերք կը տրամադրէք, որ շարունակեն կրակոցներու տակ պահել իրենց քաղաքական մրցակիցները: Կրնայ ըլլալ որ անոնց մէկ մասը համոզուած է իրենց ըսածներուն կամ գրածներուն, բայց միաժամանակ նոյն անձինք յամառ ու կոյր դարձած են իրեն նման չմտածող այլ հայերու մտահոգութիւններուն հանդէպ: Այդպիսի մտասեւեռում որեւէ դրական արդիւնք չի բերեր հաւաքականութեան մը ներսը ընթացող հակամարտութիւններուն: Քաղաքականացուած այդ տարրերը մէկ ակնթարթ անգամ պիտի չվարանին ձեզ անուանարկելէ, ամբաստանելէ, անիծելէ՝ եթէ մատնաչափ մը հեռանաք իրենց նախընտրած գիծէն: Հայաստանի մէջ առկայ բեւեռացուած վիճակին մէջ, անոնք այսօր հակամէտ են իրենց պաշտպանած հոգեւորականները միա՛յն ու միա՛յն մղելու, որ աւելի ծայրայեղ, հակոտնեայ դիրքեր բռնեն: Ու յետո՛յ... Ո՛ր է վերջակէտը:



Քիչ մը անցնիմ երեւակայութեան: Եթէ 1952-63-ի Անթիլիասի տագնապի գլխաւոր կրօնական դէմքերէն իւրաքանչիւրին՝ Զարեհ ու Խորէն կաթողիկոսներուն, Խաղարքեպիսկոպոս Աջապահեանին, իրենց կեանքի վերջաւորութեան առիթ ըլլար հարցնելու թէ ի՛նչ կը մտածէին տագնապի գագաթնակէտին համապատասխանաբար իրենց զօրակցած կամ զիրենք քաջալերած կուսակցութեան կամ անոր հակառակորդ կուսակցութիւններուն մասին, եւ վստահ եմ, որ միայն յուսախաբութեան ու թերեւս նոյնիսկ դժգոհութեան խօսքեր պիտի լսէինք իրենցմէ՝ երեքէն ալ՝ ուղղուած այդ օրերու քաղաքական երկու ճամբարներու աշխարհական առաջնորդներուն:

Եթէ պատմութենէն դասեր քաղել կայ, ինչպէս կ'ընդգծեն շատեր, մէջբերած օրինակս կրնայ այդպիսիներէն ըլլալ: Լուրջ նախազգուշացում մը:

Քաջաբար ընդունինք ճշմարտութիւնը: Հայաստանեայց Եկեղեցւոյ խնդիրները լուրջ են, յաճախ՝ երկարաժամկէտ, շա՛տ աւելի խոր՝ քան այսօրուան դերակատարներուն անհատական թերութիւնները: Այս խնդիրները անկասկած խոր ուսումնասիրութեան, երկար ու համակողմանի քննարկումներու եւ արմատական լուծումներու կարիք ունին: Բայց այդ անհրաժեշտ փոփոխութիւնները պէտք է իրագործուին միա՛յն Եկեղեցիին, անոր հետեւորդ ժողովուրդին մտահոգութիւնները հաշուի առնելով եւ ... քաղաքական գործիչներուն թողլով իրենց քաղաքական (իշխանատենչական) պայքարները: Բարձր պաշտօններ վարող հոգեւորականներուն կը մնայ իրենց շրջանակէն ներս գտնել այդ լուծումները յայտնաբերելու եւ իրագործելու գործիքակազմը: Այլապէս, յիշենք թէ Անթիլիասի տագնապին հետեւանքները գրեթէ 70 տարի ետք անլոյծ են, նոյնիսկ՝ եթէ նախկին սրտիւնը բարեբախտաբար չունին... Եւ այսօր՝ այդ լուծումներու գտնելու ճամբուն վրայ, ընդհանրապէս անկարելորդ է պատմագիտական այն հարցումը թէ 1952-63-ի տագնապը ո՛ր կողմին յանցանքով սկիզբ առած էր:

Արա Սանճեան

Դոկտոր Արա Սանճեան Միջիգանի Համալսարանի Դիրքոռնի մասնաճիւղին մէջ հայոց ու մերձաւոր-արեւելեան պատմութեան դասախօս է, ինչպէս նաեւ տեղւոյն [Հայագիտական Հետազոտութեանց Կեդրոնի](#) վարիչը:

ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՓՈԻՆՋ ՍԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ



ԲԱՌԸ ԸԼԼԱՐ

Թող բառն ըլլար «եղիցի լոյս»

Ու ճառագէր մթան մէջ լոյս,

Ճեղքէր գորշը խաւարամած

Ու ճաճանչէր լուսավարար...

Թող բառն ըլլար խաղաղարար

Հոգիներուն մրրկայոյզ,

Գգուէր զանոնք սիւքի նման

Սէր-քնքշանքովն իր թաթաւուն...

Թող բառն հնչէր աղօթքի պէս,

Փարատէր մեզը սիրտերէն,

Միւռնոսած ան կաթեցներ

Լո՛յս, բարութի՛ւն երկնապարգէս...

Թող բառն հնչէր օրհնութեան պէս,

Հրաշագործէր Արարչին պէս,

Բոլոր չարեաց դէմ ան ըլլար

Բարեաց անձրէս սիրավարար:

Բառը ըլլար կամա՛ր, ծիածա՛ն,

Սիրտէ ի սիրտ ու մարդէ մարդ,

Նարօտի պէս ան պսակէր

Սիրտերն անջատ, տառապահեւ:

23/11/2021

.....

ԼՈՒՍԷ ՀԵՔԻԱԹ

Ձիւնասպիտակ մաքրութիւն կար



Ամանորեան օրերուս մէջ,
Միամիտ, անմեղ հաւատք մը կար
Կադանդի վառ սպասումիս մէջ...

Բեհեզ հագած բիւր հրեշտակներ
Կ'իջնէին վար սուրբ երկինքէն,
Լոյս օրհնութի՛ւն, բարի՛ք ու բե՛րք
Կը տեղային անձրեւի պէս...

Համակ ժպի՛տ, լո՛յս ու սէ՛ր կար
Տօնական բոբբ օրերուն մէջ,
Երագ-հեքիա թ մըն էր Կադանդն,
Որ մեզ հմայէր ու կախարդէր...

Կարծես ձիւնը փաթի՛լ-փաթի՛լ
Պիտի տեղար հրաշքի մը պէս,
Փետո՛ւր-փետո՛ւր վճիտ ցոլքեր
Պիտ' շողային ամէնուրեք...

Մաքուր հրաշքը ես դեռ կ'ապրիմ
Օրերուն մէջ այս տաղտկալի
Եւ կ'երագեմ հեքիաթն լուսէ,
Որ պիտի գայ երկնապարգեւ..
5/12/2018

.....

ՏԱԳՆԱՊ

Քաղաքակիրթ այս բիրտ դարին,
Վայրենացեր է աշխարհը,
Յօշոտման կիրքն է մոլեգներ,
Գազան ըլլայ կարծես մարդը:

Շահի համար ու հաշիւի,
Արին, աւեր կը տարածեն,
Արժէքներն են լուռ նահանջեր
Չարժէքներու հանդէսին մէջ:

Ու պատասխան դուն չես գտներ՝
Ո՞վ է ճիշդըն ու սխալը,
Մտամոլոր աշխարհին մէջ,
Սայթաքեր է մարդ էակը:

Վիհին առջեւ կենաց-մահի,
Ո՞վ պիտ' բռնէ իր ձեռքերը,
Որ ան չիյնայ մեղաց տիղմին,
Անդունդին մէջ կնքէ վերջը:
1/12/2019



.....

ՏԱՂՍ

Երկնէն ցօղ իջաւ բառս համբուրեց,
Աստղերու մրմունջն բերաւ հնչիւնիս,
Խորհուրդով օծեց եւ լուսազարդեց,
Մոգական փայլ մը տուաւ պարզ տողիս...

Լուսաթել տողիս հետ թելածեցի
Երկնին մէջ լազուր, հոգիներէն ներս,
Ցոլքեր քաղեցի անոնց անհունէն,
Նոր ճաճանչներով տաղս հիւսեցի...

Տաղս նեկտարն էր սէր-ծաղիկներուն,
Քաղուած շի՛թ առ շի՛թ անոնց սիրտերէն,
Արցունքէն վճիտ, հառաչանքներէն,
Մանուած լոյսովը սիրոյս ճառագուն...

Տա՛ղ երկնապարգել եւ երազահել,
Հոգիներէն ներս կա՛թ-կա՛թ դուն ցաթէ
Մէր, յոյս ու հաւատք, լոյսի ճաճանչներ,
Օրհնութիւն տեղա՛ մանանա որպէս...
5/12/2018

.....

ՄԱՂԹԵՐԳ

Նո՛ր տարի,
Լոյսդ բացուի՛ գուարթաշէն
Հայաշխարհին արարչաստեղծ,
Ոսկի շողեր սփռե՛ չորս դին
Մէր-բարութեան խաղաղագին...
Մտնե՛ մէն մի օճախն հայուն
Ծաղկեփունջով մը պէսպիսուն,
Թոյրեր, բոյրեր համասփռե՛
Ուրախութեան երկնապարգել...

Նո՛ր տարի,
Ճաճանչներով օճե՛ ճակատն
Մէն մի հայուն, ո՛ւր ալ ըլլայ,
Որ արարէ սերն ու բարին,
Վանէ չարը դժնետեսիլ...
Նոր խոյանքով մը վարարէ՛
Ոգին Հայկեան Մասիսատենդ,
Թող սրլանա՛յ նոր բարձունքներ
Վեհ արութեան Աստուածամերձ...

Նո՛ր տարի,



Նոր արեւներ, արշալոյսներ
Հուրհրատէ՛ հայ աշխարհին,
Մէկդ դառնա՛յ բիւր բիւր բերքեր,
Բիւր բարիքներ երջանկաբեր...
Արագածէն մինչ Արարատ,
Մինչ Կարս ու Վան եւ Կիլիկիա,
Թող հնչէ՛ն մեր երգերը վառ
Արեգնափայլ, զուարթաձայն...

Նո՛ր տարի,
Հայկեան ոգին թող սաւառնի՛
Երկինքները հայոց հողին,
Տեղա՛յ անձրեւ նոր կորովի,
Անյաղթ բազկի, արդար տենչի...
Հայերն բոլոր դարձած մէկ բռունցք
Թող պա՛ր բռնեն Մասիսի շուրջ,
Ձեռք-ձեռքի տա՛ն եւ ուս-ուսի,
Թող օրհներգէ՛ն գալի բարի...
4/12/2019

.....

ԱՄԱՆՈՐԵԱՅ ԲԱՂՁԱՆՔ

Ամանորին շուտով գալիք, ես չեմ ուզեր ծափ ու ծնծղայ,
Միայն մարդը թող մարդանայ, գազանն իր մէջ ի չիք դառնայ,
Լռեն ռումբերն կործանարար, սեւ չարիքը թող հեռանայ,
Սիրտը սիրտին դառնայ ընկեր, հոգին հոգւոյն կապէ կամար...

Դիմակները թող իյնան վար, դէմքը խօսի մերկ ու անգարդ,
Խիղճը արդար, խիղճը անեղծ դառնայ դէմքին մաքուր ցոլանք,
Աչքերուն մէջ հոգին խօսի, հոգին մարդուն անապական,
Ուր կայ կայծը արարչութեան ու բարիին վսեմական...

Փռուի սուփրէն եղբայրութեան, հաց ու գինուով թող ան լենայ,
Կենաց բանով ու օրհնութեամբ թող վարարի ան յորդառատ:
Չարն ու նենգը, սուտն ու կեղծը տեղ չգտնեն ու վերանան,
Սիրերգութեան Տօն մը ըլլայ ամանորեայ ամէն սեղան...

Օ՛ այն ատեն այս դարը պիղծ կ'ապրի զարթօնք գարունավառ,
Կը թօթափէ ժանգն ու փոշին, պայծառակերպ կը շողշողայ,
Անամայ երկինք մը կը բացուի որպէս նորոգ մի այգաբաց,
Աւետաբեր խաղաղութեան ու երագուած կեանքին արդար:

Եւ երկիրն իմ վերագարթնու յուսաբացին այս նորածագ,
Կ'ապրի խաղաղ կեանքով վսեմ ու կ'արարէ բարին պայծառ,
Նոր լոյս կ'երկնէ դարին այս նոր, կը հրավառի արեւափառ,
Նոր թելերով թռիչք կ'առնէ դէպ' երկինքներն ազատութեան:

Պրիսմակէս

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ

Մարուշ Երամեան



Երուսաղեմի հին քաղաքի Հայկական թաղամասին մէջ, հարեւանութեամբ Սրբոց Յակոբեանց վանքին, կը գտնուի Հայկական Թանգարանը, վերանորոգուած ու հին գեղեցիկ կառոյցի մը մէջ: Այս կառոյցը, որ հիմնուել է 1853-ին, եղած է ՀԲԸ Միութեան Արարատեան Որբանոցը (1921-1924), որուն յատակագիծերը մինչեւ օրս կը պահուին Գահիրէի «Վ. Ճիզմէճեան» արխիւատան մէջ: Որբանոցին փակումէն

բաւական ետք, կառոյցը ծառայել է Ժառանգաւորաց դպրեւանքին, որպէս վարժարան եւ գիշերօթիկ:

1969-ին հիմնուել է թանգարանը, սակայն քանի մը տարի ետք փակուել է, որովհետեւ անոր հսկայ հաւաքածոն մասնագէտ հոգաւորներու եւ դասաւորողներու (curator) կարիքը ունէր: Թանգարանին մասին գրուած յօդուածէ մը կ'իմանանք, թէ վերաբացուել է 2022

թուականին, գրեթէ տասնամեակ մը տեւած նորոգութիւններէ ետք, զորս հոգացել է Եղուարդ եւ Հելէն Մարտիկեան ամուլը:

Հիմնական կառոյցին վրայ աւելցուած է ապակեայ տանիք-ծածք մը, որուն շնորհիւ բակին խճանկարը սքանչելիօրէն կը լուսաւորուի ցերեկուան լոյսով:

Թանգարանին մէջ ցուցադրուած է Հայոց պատմութեան 1600 տարին, ուր կարելոր տեղ կը գրաւեն սաղիմահայ կեանքին եւ մշակոյթին վերաբերող նմոյշներ:

Թախծոտ երաժշտութեան ընկերակցութեամբ, թանգարանը կը պատմէ նաեւ Յեղասպանութեան եւ վերապրողներու մասին:

Այստեղ կարելի է գտնել նաեւ Երուսաղեմի պատմութիւնն ու այն բոլոր փոփոխութիւնները, որոնց ենթարկուել է քաղաքը հռոմէական, բիւզանդական, մամլուքեան, խաչակիրներու արշաւանքներուն, մոնկոլական, օսմանեան տիրապետութեան եւ Մեծն Բրիտանիոյ հովանաւորութեան շրջաններուն:

Պատմաբաններ Գլոտ Մուրաֆեանի եւ Ռէյմոնտ Գեորգեանի, ինչպէս եւ Փարիզի Փոմփիտու կեդրոնի լատենտոլական բաժանմունքի ղեկավար Յարութ Պեզճեանի ջանքերով այս թանգարանը վերակենդանացել է եւ իր դռները բացել այցելուներուն: Այս երեք մասնագէտ ֆրանսահայերուն ծնողները, ինչպէս եւ սաղիմահայ գաղութին գրեթէ բոլոր անդամներուն նախնիները Յեղասպանութենէն վերապրողներ եղած են:

Դժուար եղել է այս եռեակին համար ցուցադրութեան նմոյշներու ընտրութիւնը, քսանհինգ հազար հաշուող հարստութեան մը մէջէն, որ հաւաքուել է դարերու ընթացքին վանքին նուիրուած իրերէն:

Ինչպէս յստակօրէն կ'երեւի կառոյցին յատակագիծերուն մէջ, թանգարանը սկիզբէն ունեցել է երկու յարկեր, որոնց երկրորդը կը հանգչի առաջին յարկի կամարներուն վրայ: Երեք



կողմի շինությունները բակ մը կը գոյացնեն, ուր նախապէս գոյութիւն ունեցեր է շատրուան մը, իսկ այսօր հոն հանգչող 6-րդ դարու (580-620) հռոմէական մեծ ու գեղեցիկ խճանկարը պարզապէս հիացմունք կ'առթէ: Կը կարծուի թէ այս խճանկարը հայկական եկեղեցիի մը պատկանէր է:

Կ'ըսուի թէ այդ մեծ եւ թանկարժէք խճանկարը գտնուեր է Երուսաղէմի հին շէնքերէն մէկու նկուղին մէջ եւ հոնկէ է որ բերուեր է նորաբաց թանգարանին բակը հանգչիլ:

Այս խճանկարին մէջ երեւացող 40 տեսակ թռչուններուն, որթատունկերուն եւ կենաց ծառին կողքին, գլխաւոր ներկայութիւն է հաւալունը, որ ըստ Ժառանգաւորաց դպրեւանքի տեսուչ Հայր Թադէոս Զաքարեանի, վտանգի պահերուն ինքզինք կը վիրաւորէ եւ իր արինոժով ձագերը կը կերակրէ. «Զոհաբերումի այս արարքը դարձեր է Քրիստոսի զոհաբերութեան խորհրդանշը մարդկութեան համար» կ'ըսէ Հայր Թադէոս:

Խճանկարին մէջ կարելոր տեղ կը գրաւէ Կենաց Ծառը, խորհրդանշան մը, որ յաճախ կ'երեւի հայկական միջնադարեան արուեստին մէջ եւ կը կապուի մարդուն

ինքնակատարելագործումին եւ մահէն ետքի յարութեան քրիստոնէական գաղափարին:

Իսկ խճանկարին ամենէն վերելը հայերէն արձանագրութիւնը կ'ըսէ.

«Խճանկարը նուիրուած է բոլոր այն հայերու յիշատակին եւ փրկութեան, որոնց անունները Աստուած գիտէ»:

Տեսուչ հայր Թադէոս Զաքարեան կը պատմէ նաեւ, որ Տիգրան Մեծի օրով է, որ հայերը առաջին անգամ հասեր են Երուսաղէմ եւ կայք հաստատեր, Ք.ա. 49 թուականին, իսկ եօթներորդ դարուն Երուսաղէմի եւ շրջակայքին մէջ գոյութիւն ունեցեր են 72 հայկական եկեղեցիներ եւ վանքեր:

Թանգարանի տնօրէնուհին՝ Յողիկ Այնթապլեան-Քարաքաշեան կ'ամփոփէ այս թանգարանին նշանակութիւնը, որպէս «Երուսաղէմի մէջ Քրիստոսէ առաջ հոն գտնուած եւ տակաւին աշխոյժ ներկայութիւն ունեցող հայերու գոյութեան եւ կարեւորութեան հաստատում»:

Թանգարանին մէջ կը պահուի Մուհամմետ մարգարէին ուխտի պատճենը՝ «վեցերորդ դարու հրովարտակ, որով մարգարէն յարգանքի տուրք կը մատուցէ հայոց պատրիարք Աբրահամին եւ հայերուն հովանաւորութիւն ու պաշտպանութիւն կը շնորհէ կեանքի, ունեցուածքի եւ եկեղեցիներուն համար»:

Յուցադրուած է նաեւ խաչակիրները պարտութեան մատնած եւ Երուսաղէմը 1187 թուականին գրաւած Այյուպիներու հիմնադիր Սալահ ատ-Տին ալ-Այուպիի հրամանագիրը, որ

կը հրահանգէ հայերուն վնաս չհասցնել: 12-րդ դարու վերջերուն Սալահ ատ-Տին «հաստատեց անոնց (հայերուն) իրաւունքները սուրբ վայրերուն՝ Գողգոթայի, ինչպէս նաեւ Սուրբ Յակոբ տաճարի սեփականութեան առնչութեամբ եւ սահմանեց հարկեր վճարելու ձեւերը»:

Թանգարանին հարստութիւններէն

կը համարուին Կիլիկիոյ մեծագոյն մանրանկարիչ Թորոս Ռոսլինի մանրանկարները:

Յուցադրուած խաչերուն, խեցեղէնին, ասեղնագործութիւններուն, պղնձեղէնին, գորգերուն, մետաղադրամներուն, հին քարտէզներուն եւ մատեաններուն կողքին ճուցադրուած է նաեւ Նափոլէոնի վրանին կտորէն պատրաստուած հագուստ մը, զոր կայսրը նուիրեր է Եաֆայի հայկական վանքին, զայն որպէս հիւանդանոց օգտագործելու թոյլտուութեան համար, բուժելու ժանտախտէ տառապող ֆրանսացի զինուորները:

Թանգարանին մէջ ճուցադրուած է տպագրական մամուլ մը, որ կրկնօրինակն է

Կիլիկիայի մամուլին եւ հաւանաբար առաջինն է երկրին մէջ: Հայերը՝ իրենք

Երուսաղէմի, ինչպէս եւ Միջին Արեւելքի առաջին տպագրատունը հիմներ են, Սրբոց

Յակոբեանց վանքին մէջ, 1833 թուականին. հետեւաբար բնական է, որ Երուսաղէմի մէջ տպուած առաջին գիրքը ըլլար հայերէն:

Թանգարանը ունի դիմատետրեան էջ մը, ուր գեղեցիկ լուսանկարներ եւ վիտէոներ կ'երեւին, հետեւեալ յղումով.

Helen and Edward Mardigian Armenian Museum of Jerusalem

<http://www.kantsasar.com/news/58999-2/>

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԸ ՎԵՐԱՐՏԱԴՐԵԼ ԸՍՏ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՄԱՀՈՒՆՉ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՆ՝ ԱՌԱՆՑ ՇԵՂԵԼՈՒ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ

ԱՀԱՐՈՆ ՇԽՐՏԸՄԵԱՆ



Մշակոյթը մարդուն հոգեմտաւոր կառուցուածքի եւ կենցաղի արտայայտութիւնն է: Ան այն դաշտն է, ուր ժողովուրդ մը կը ձեւաւորէ իր մտածողութիւնը, բարոյական արժէքները, ասանդութիւնները, լեզուն, արուեստը եւ հասարակական վարքագիծը:

Մշակոյթը միայն արուեստ չէ, այլեւ ապրելու ոճ, որ անցեալը կը կապէ ներկային, ներկան՝ ապագային: Մշակոյթը մարդ անհատը ինքն է, իր արարչական ուժին մէջ:

Ան ձայնն է, որ կը հնչէ երաժշտութեան մէջ, գիծն է, որ կը վերածուի նկարի, բառն է, որ կը դառնայ բանաստեղծութիւն: Մշակոյթը կեանքի ոճ մըն է, որ կը սորվեցնէ ապրիլ, յարգանք ցուցաբերել, սիրել եւ վկայել գեղեցիկը աշխարհի մէջ:

Մշակոյթը կեանքին բարոյական խիղճն է: Ան կը

սորվեցնէ մարդուն նայիլ ոչ միայն աչքերով, այլ սրտով, լսել ոչ միայն ականջներով, այլ հոգիով: Եթէ ժողովուրդ մը կորսնցնէ իր մշակոյթը, կը կորսնցնէ իր ինքնութիւնը: Առանց մշակոյթի՝ մարդը կը դառնայ առանց արմատի ծառ, իսկ ժողովուրդը՝ առանց յիշողութեան հող:

Երէկուան մշակոյթը աւելի ինքնամփոփ ձեւաորումն է բնականոն էր: Ան կը սնուէր ասանդութենէն: Ժողովուրդները իրենց մշակոյթը կը նկատէին գոյատեւման բերդ մը՝ իրենց լեզուին, կրօնին, երգին, տօնին եւ բարոյական կեանքին շուրջ: Մշակոյթը կը կազմէր ինքնութեան պատնէշը:

Մշակոյթը չէր արտադրուէր շուկայի պահանջով, այլ կը փոխանցուէր հոգիով, մայրերէն՝ զաւակ, վարդապետերէն՝ աշակերտ, երգահանէն՝ աշուղ: Յարգանք կար ստեղծագործութեան նկատմամբ, որովհետեւ իւրաքանչիւր արարում կ'ընկալուէր իբրեւ աստուածատուր շնորհք, ոչ՝ առեստրական արտադրանք:

Այսօրուան մշակոյթը այլ իրականութեան մէջ է: Արհեստագիտութիւնը համաշխարհայնացումը եւ ընկերային ցանցերը, լրատուական հարթակները փոխած են մշակոյթին բնոյթը: Այժմ աշխարհը կարծէք չունի սահմաններ: Ժամանակը սեղմուած է, ամէն բան տեղի կ'ունենայ միաժամանակ: Տեղեկութիւնները անվերջ կը հոսին: Գրեթէ անհնար է զայն կասեցնելը կամ հակակշիռի տակ պահել: Մշակոյթը դարձած է բազմաշերտ ու երբեմն ալ հակասական՝ յաճախ ազատագրուած ասանդական սահմաններէն, կորսնցուցած իր խորութիւնը:



Անոր մէջ կայ անհատապաշտութիւն, ինքնարտայայտման ծարաւ, բայց նաեւ մեկուսացում. մարդիկ աւելի շատ կը խօսին, բայց աւելի քիչ կը լսեն:

Երեկի մշակոյթը աւելի արմատաւորուած էր աւանդութեան մէջ՝ հողի, կրօնի, խոհունութեան եւ ընտանեկան շղթայի մէջ: Ան բնորոշուած էր ինքնութեան պահպանման մտահոգութեամբ:

Այսօրուան մշակոյթը սակայն աւելի բաց է, արագ, բազմազան ու յաճախ ալ անճանաչելի՝ համաշխարհայնացման, զանգուածային հաղորդակցութեան եւ արհեստագիտութեան ազդեցութեամբ:

Ան կը շարժի ոչ միայն ժառանգութեան պահպանման, այլեւ նոր ինքնութիւններու որոնման եւ ստեղծման ուղղութեամբ:

Եթէ երեկ մշակոյթը կը փոխանցուէր սերունդէ-սերունդ, այսօր ան արտադրող ապրանքի մը վերածուած է: Եթէ երեկ արժէքը խորութեամբ կը չափուէր, այսօր՝ արագ տարածումով:

Եթէ երեկ մշակոյթը ժողովուրդը իր արմատներուն շուրջ կը միաւորէր, այսօր յաճախ կ'անջատէ՝ բազմաձայնութեան եւ ինքնութեան փնտրտութիւն մէջ:

Բայց այս բոլոր փոփոխութիւնները ուղղորդուած են: Ժամանակը կը փոխէ ձեւերը, բայց ո՛չ էութիւնը: Մշակոյթը միշտ ալ կը մնայ մարդու հոգեկան ինքնարտայայտութիւնը՝ իր ժամանակին մէջ:

Բայց ի վերջոյ մշակոյթը նոյնինքն մարդն է:

Մարդն է, որ կը կերտէ եւ կը վերանորոգէ իր աշխարհը: Ուստի երեկուան, այսօրուան եւ վաղուան մշակոյթները միեւնոյն շղթայի օղակներն են՝ տարբեր ձեւերով, բայց նոյն հոգեւոր ծագումով:

Երեկ, մշակոյթը կը կերտուէր հողի եւ հաւատքի շուրջ: Այսօր ան կը դառնայ յաճախ բեմ, արտադրանք կամ խճողում: Վաղը ան պիտի փնտռէ նոր հաւասարակշռութիւն՝ համատեղելով մարդկային հոգին եւ արհեստագիտական ուժը:

Վաղուան մշակոյթը պիտի ըլլայ հոգեւոր ճշմարտութեան եւ գիտական հաւասարակշռութեան համադրումը: Արհեստագիտական զարգացումները կրնան հարստացնել մարդուն արտայայտութիւնը, բայց չեն կրնար փոխարինել անոր հոգին:

Այդ մշակոյթը պիտի պահանջէ աւելի գիտակից մասնակցութիւն, աւելի խորքային կրթութիւն եւ ճշմարիտ պատասխանատւութիւն: Որովհետեւ մշակոյթը չի բաւեր միայն սպառել, պէտք է արարել, պահել եւ փոխանցել:

Մշակոյթը ժողովուրդի հոգին է՝ իր լեզուով, երաժշտութեամբ, գրականութեամբ, կենցաղով եւ բարոյական արժէքներով: Ան ոչ միայն անցեալի յիշատակ է, այլ կենդանի ներկայութիւն մը, որ կը շարունակէ շնչել ու զարգանալ ազգի ստեղծագործ ոգիին մէջ:

Մշակոյթ մը, որ կը մոռնայ իր արմատները, կը դադրի մշակոյթ ըլլալէ: Սակայն նոյնքան վտանգաւոր է ան, երբ կը սահմանափակուի միայն անցեալի մէջ՝ առանց լսելու ժամանակի հնչողութիւնը:

Մշակոյթի պահպանումը եւ բարգաւաճումը պէտք է ընթանան կողք կողքի՝ իբրեւ մէկ ամբողջութիւն:

Պահպանել ազգային մշակոյթը կը նշանակէ՝ յիշել, վկայել եւ շարունակել:

Ան կը պահանջէ գիտակցութիւն, ոչ թէ միայն զգացական նուիրում:

Մեր մշակոյթը՝ հայկականը, յառաջացած է հազարաւոր տարիներու ընթացքին՝ հողի, հաւատքի, տառի եւ ստեղծագործութեան համադրութեամբ: Արդիականացում չի նշանակել հրաժարիլ, այլ նոր շունչ տալ ժառանգութեան:

Մշակոյթը ազգի հոգեւոր ինքնութեան շունչն է, անոր գոյատեւման հիմնաքարը եւ ստեղծագործական ոգիին դրսեւորումը: Երբ ազգ մը կորսնցնէ իր մշակոյթը, կը կորսնցնէ իր գոյութեան տրամաբանութիւնը. ինչո՞ւ, որուն համար եւ ինչպէ՞ս շարունակէ գոյութիւնը:

Այդ պատճառով մշակոյթի պահպանումը երբեք անցեալին կառչելու մեքենական ձեւ մը չէ. ան ազգային հոգեւոր շարունակութեան ապահովումն է՝ ժամանակի եւ փոփոխութեան մէջ: Պահպանել մշակոյթը՝ կը նշանակէ ընկալել այն ժառանգութիւնը, որ դարերու ընթացքին մեր նախնիներ կերտեցին՝ երգով, գիրով, բանաստեղծութեամբ, ճարտարապետութեամբ ու սովորութիւններով, եւ զայն վերարտադրել համապատասխան պայմաններուն: Վերարտադրում առանց շեղելու արմատներէն, խորացնել, տալով նոր ոգի եւ ոճ: Մշակոյթը պէտք է ըլլայ այն մեծ ծառին նոր ընձիւղը, որ սնունդ կը ստանայ հին արմատներէն: Մշակոյթի պահպանումն ու արդիականացումը այսպէս կը միանան՝ կերտելով կենդանի ժառանգութիւն մը, որ պէտք է սերունդներուն փոխանցել ոչ իբրեւ յիշատակ, այլ ուժի աղբիւր:

ԻՆՉՈ՞Ւ ԱԲ(AI) ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԱՅԼԵՒՍ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՁ ՄԸՆ Է ԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԷՋ



✎ ՎԱՐՈՒԺ ԹԵՆՊԵԼԵԱՆ

10/12/2025



Համաշխարհային տնտեսական համաժողովին (World Economic Forum) (22 Մայիս 2025) հրապարակած եւ 3 Յունիսին վերաթարմացուած մէկ յօդուածին մէջ, Education 4.0 ծրագրի ղեկավար Թանիա Միլպըրկ կ'ընդգծէ, որ արհեստական բանականութեան (ԱԲ) գրագիտութիւնը այլեւս մասնագիտական երկրորդական հմտութիւն մը չէ, այլ՝ կրթական առաջնահերթութիւններէն մէկը:

«Ինչո՞ւ ԱԲ գրագիտութիւնը այլեւս հիմնական պահանջ մըն է կրթութեան մէջ» խորագրեալ յօդուածը ուղղակի արձագանգ մըն է այն խոր փոփոխութիւններուն, որոնք ԱԲ-ն կը բերէ աշխատանքի շուկային, կրթութեան եւ ընդհանրապէս մեր

առօրեայ կեանքին մէջ:

Յօդուածը կը հիմնուի Համաժողովին՝ «Աշխատանքի Ապագան – 2025» տեղեկագրին վրայ, ըստ որուն, ԱԲ-ն մօտիկ ապագային պիտի փոխէ գրեթէ բոլոր ոլորտները եւ պիտի փոխակերպէ այն մեթոտները, որով մարդիկ գիտելիք ձեռք կը բերեն, կը մշակեն ու կը գործածեն: Միլպըրկ կը զգուշացնէ, որ մինչ արհեստագիտութիւնները շատ արագ կը զարգանան, կրթական համակարգերը ետ կը մնան, եւ այս խզումը լուրջ վտանգներ կրնայ ստեղծել նոր սերունդներուն համար:



Այս մտահոգութիւնը կը հաստատուի նաեւ վիճակագրութիւններով: 2024-ին կատարուած ուսումնասիրութիւն մը ցոյց կու տայ, որ Զ սերունդին (Generation Z – «թուայնացած աշխարհի քաղաքացիներ», «համացանցի եւ խելախօսներու բարեկամներ») շուրջ կէսը դժուարութիւն ունի քննականօրէն գնահատելու ԱԲ-ի արդիւնքները, ներառեալ՝ անոր հնարամտութիւնը, կեղծ տեղեկութիւն ստեղծելու կարողութիւնը եւ կողմնակալութիւնը: Այս պայմաններուն մէջ, Միլպըրկ կը շեշտէ, որ ԱԲ-ի պատասխանատու գործածութիւնը պէտք է դասաւանդուի դպրոցական տարիքին, ոչ թէ օգտատիրոջ ձգուի «փորձելու եւ սխալելու» փորձարկումը:

Յօդուածին առանցքը կը հանդիսանայ նորաստեղծ «ԱԲ գրագիտութեան շրջագիծը»՝ ուղղեցոյց մը նախակրթարանէն մինչեւ 12-րդ դասարանի համար (AI Literacy Framework – AILit), որ մշակուած է Եւրոպական Յանձնաժողովին եւ Տնտեսական Համագործակցութեան եւ Զարգացման Կազմակերպութեան (OECD) կողմէ՝ Code.org-ի եւ միջազգային փորձագէտներու աջակցութեամբ: Այս շրջագիծը կը սահմանէ ԱԲ գրագիտութիւնը ոչ միայն իբրեւ գիտելիք, այլ նաեւ՝ հմտութիւններու եւ արժէքային մօտեցումներու ամբողջութիւն մը, որ պիտի օգնէ աշակերտներուն կողմնորոշուիլու ԱԲ-ով ձեւաւորուած աշխարհին մէջ:

AILit-ը կը կառուցուի չորս գործնական ոլորտներու շուրջ.

1. **ԱԲ-ով ներգործել եւ անոր արդիւնքները գնահատել քննականօրէն,**
2. **ԱԲ-ով ստեղծագործել,**
3. **ԱԲ-ին գործեր վստահիլ զգուշօրէն եւ վերահսկել անոր գործողութիւնները,**
4. **ԱԲ համակարգեր ծրագրել կամ զանոնք յարմարեցնել առօրեայ խնդիրներ լուծելու:**

Այս չորս ոլորտները կը պահանջեն 23 գործնական հմտութիւններ եւ դասարանի համար պատրաստուած ուսումնական ուղեցոյցեր, որոնք այս շրջագիծը (AILit) ոչ միայն կը դարձնեն տեսական փաստաթուղթ մը, այլ նաեւ կենդանի ուսուցման միջոց մը:

«AILit»-ը նաեւ կը համապատասխանէ Եւրոպական Միութեան ԱԲ-ի Օրէնքի 4-րդ յօդուածին, որ ԱԲ գործածող կառոյցներուն կը պարտադրէ օգտատէրերու համապատասխան գրագիտութիւնը ապահովել: Ան կը լրացնէ նաեւ Թուային Կրթութեան Գործողութիւններու Ծրագիրը (2021–2027) եւ կը հաստատէ, որ ԱԲ գրագիտութիւնը այլեւս միայն կրթական ընտրութիւն մը չէ, այլ քաղաքական եւ հասարակական պարտաւորութիւն:

Միլպըրկ կը շեշտէ, որ ապագայ աշխատուծը ոչ միայն կարիքը պիտի ունենայ [այլընտրանքական](#) մտածողութեան եւ ԱԲ համակարգերու հետ գործակցելու հմտութիւններու, այլեւ մարդկային կարողութիւններու, զորս ԱԲ-ն ի վիճակի չէ փոխարինելու՝ բարոյական նորմերու գիտակցութիւն, կարեկցանք, անձնական դատողութիւն, համագործակցութիւն եւ քննական մտածողութիւն: Համաժողովի տուեալներով՝ յառաջիկայ հինգ տարիներուն աշխարհի աշխատուծէն պահանջուած հմտութիւններուն մօտ 40 տոկոսը պիտի փոխուի, եւ այս փոփոխութիւնը կրթական համակարգերուն համար կենսական ազդանշան մըն է:

Ի վերջոյ, Թանիա Միլպըրկ կ'ըսէ, որ AILit-ը այլեւս ընտրութեան հարց չէ: AILit-ը կու տայ անհրաժեշտ միջոցները, որ դպրոցները, կրթական եւ քաղաքական պատասխանատուները

անցնին գործի: Իսկ մնացեալը, ինչպէս ան կը շեշտէ, տեսլականը դասարանային գործնական կիրարկութեան վերածելու ծանր աշխատանքն է:

ԱՆԾԱՆՕԹՈՒՀԻՆ

(ԽՈՂՏԱԳՐՈՒԹԻՒՆ)



Բնութեան մէջ քալելով՝ կը սքանչանար խոտերուն մէջ թաքնուած չքնաղ-չքնաղ ծաղիկներուն, անոնց գո՛յն-գո՛յն թերթիկներուն, որոնց ամէն մէկը տարբեր էր միւսէն... Կրկնօրինակում չկար բնութեան մէջ եւ խորհրդածեց որ այլազանութիւնը տարրերէն մէկն էր որոշապէս գեղեցկութեան ու ներդաշնակութեան: Պահ մը երեւակայեց թէ ի՛նչ տեսակ պիտի ըլլար բնութիւնը, եթէ, ենթադրենք, բոլոր ծաղիկները իրարու յար եւ նման ըլլային: Անոնց գեղեցկութիւնը արդեօ՞ք պիտի չդառնար սովորական, տեւաբար կրկնուող նոյնանման երեւոյթ, որ ա՛լ չառիւնքներ կամ չի յուզեր սիրտը: Շարունակելով այս միտքը, մտածեց որ մարդկային կեանքն ալ իր հմայքն ու հետաքրքրականութիւնը կը գտնէր իր անգուշակելիութեան, իր անկանխատեսելիութեան մէջ վստահաբար: Իւրաքանչիւրին կեանքը իր սեփականն էր, ինքնուրոյն, անկրկնելի, որքան ալ ան նմանութիւններ ունենար ուրիշներու կեանքին հետ:

Ճակատագիրը ըստածն ալ որոշ չափով կը կերտէինք մենք, մեզմէ իւրաքանչիւրը իր կատարած ընտրութիւններով, որոշումներով, իր առած-չառած քայլերով: Եթէ գիտնայինք ի սկզբանէ թէ այսքան տարի պիտի ապրէինք, թէ այս կամ այն ձեւով պիտի վերջ գտնէր մեր կեանքը, թէ ամէն ինչ կանխորոշուած էր...եւ մենք պարզապէս լարուած մարդ-մեքենայ ըլլայինք, որ ի՛նչ ալ ընէ կամ չընէ, պիտի յանգի նոյն աւարտին, նոյն թուականին եւ նոյն կերպով...Օ՛, սարսափելի էր նոյնիսկ մտածելը: Կեանքի առեղծուածէն որքան բան պիտի պակսէր, խորհեցաւ: Իսկ ազատ կամքը, որ շնորհուած է մարդ էակին, պիտի կորսնցնէր իր իմաստը: Զուգահեռաբար, մտածեց թէ ի՛նչ տեսակ կեանք պիտի ըլլար, եթէ ամէն մարդ նոյն դէմքն ու նոյն մարմինը ունենար, նոյնիսկ նոյն ներաշխարհը: Այսինքն, կատարեալ մարդ-մեքենայ:



Զարհուրելի գտաւ այդ մասին երեւակայելն անգամ եւ շարունակեց իր ճամբան:
Բայց միտքերուն թելը զինք չձգեց: Ամէն մարդ պատասխանատու էր իր ցուցաբերած վարքին, իր կատարած արարքներուն համար, որովհետեւ ան իր ազատ կամքով էր օժտուած: Եթէ նոյնիսկ ոչ ոք տեսներ իր վարքն ու արարքը, ան հաշուետու պիտի ըլլար իր խիղճին առջեւ, բացի անշուշտ այն պարագաներէն, երբ խիղճը բթացած ու քարացած ըլլայ մարդուն մէջ: Ստաբիլաց 21րդ դարի ֆրանսացի մեծ փիլիսոփայ Ժան Փօլ Սարթրի միտքը, թէ մարդը ազատ ըլլալու դատապարտուած է:

Օ՛, ինչ բարդ արարած է մարդը, մտորեց, որ իր ազատ կամքով կ'ընտրէ իր ճամբան, եւ իր առած մէն մի քայլին համար պատասխան պէտք է տայ ինքն իրեն, իր խիղճին, իր բանականութեան: Իսկ եթէ սխալի, պիտի ընդունի իր սխալը, դասեր քաղէ անկէ որպէսզի չկրկնէ զայն...եւ քայլ առ քայլ կարենայ իմաստութեան սանդուխներէն վեր ելլել, առանց երբեք հասնելու անոր գագաթը:

Իր սեփական կենսափորձէն ալ զիտէր, որ ամէն անգամ կեանքէն դաս մը սորվելով ուրախացեր էր, բայց յաջորդ պահուն, իր դիմաց նոր-նոր բլուրներ յայտնուէր էին, նոր-նոր մարտահրաւերներ, որոնք վերջ չունէին կարծես...

Եւ վարկած մը գոյացաւ մտքին մէջ: Թերեւս, մտածեց, կեանքը մարտահրաւերներ յաղթահարելու ընթացք մըն է՝ սկիզբէն մինչեւ վերջ: Այդ մարտահրաւերները պատճառ կը դառնային որ զանոնք դիմակայելու ընթացքին՝ մարդ արարածը ձեռքբերէր պայքարելու ոգի, խիզախութիւն, հետեւողականութիւն, նախաձեռնութեան ոգի, յարատեւելու կամք...կամ անոնց հակառակը: Առաջինին պարագային, ան կը յաղթէր կեանքին: Երկրորդին պարագային, ան կը պարտուէր կեանքէն:

Խրամին մէկ կողմը, շարունակեց, նկարագրի տէր, սկզբունքային, խիզախ ու պայքարող մարդու ուղին էր՝ փշոտ ու դժուար: Խրամին միւս կողմը՝ համակերպող, դիւրահաճ եւ յանձնուողական տրամադրութեամբ տոգորուած մարդուն ուղին էր...
Ընտրութիւնը՝ իւրաքանչիւրին էր, եզրակացուց: Եւ որքան ալ ըլլային մեղմացուցիչ դէպք յանցանաց, իւրաքանչիւր մարդ էակ ի՞նք կը մնար բուն պատասխանատուն իր ընտրած կեանքին:

Նոյնը չէր պարագան, հաստատեց, բուսականդանական աշխարհին, որուն մէն մի տարրը զուրկ է անկախ կամքէ եւ բանականութենէ: Անտառին մէջ բուսած ծաղիկը տէրը կրնա՞յ ըլլալ իր ճակատագրին: Շունն ու կատուն կրնա՞ն իրենց ազատ կամքով ընտրել իրենց կեանքի ճանապարհը: Անոնք կը շարժին բնագոյով միայն:

Որքան խորացաւ այս նիւթին մէջ, այնքան խճճուեցաւ միտքը եւ նորանոր հարցադրումներ ծագեցան մտքին մէջ, որոնց ստոյգ պատասխանը կամ պատասխանները չէին կրցած գտնել դար ու դարեր նոյնիսկ մեծագոյն մտածողներն ու փիլիսոփաները:
Բայց մէկ բան յստակ էր իր մտքին մէջ: Ինք որոշած էր միշտ ալ խրամին այն կողմը ըլլալ, ուր մարդը կը ցուցաբերէ պայքարի ոգի, կամքի ոյժ, հետեւողականութիւն, սկզբունքայնութիւն, խիզախութիւն յաղթահարելու ամէն խոչընդոտ ու դժուարութիւն, հաւատարիմ մնալով իր ինքնութեան ու արժանապատուութեան...

Եւ կը հաւատար որ այդ ոգիի յաղթանակն էր գերագոյն յաղթանակը որ կը լեցնէ սիրտը իրաւ երջանկութեան բերկրանքով, կու տայ ճաշակը հոգիի անսահմանութեան, հոգիի առաքինութեան եւ գեղեցկութեան...

Յետոյ խորհրդածեց: Արդեօք այդ ոգին Բարձրեալին կայծը չէ՞, զոր իւրաքանչիւր մարդ կը կրէ իր հոգիին խորքը, բայց շատ անգամ անիկա անթեղուած կը մնայ այնտեղ առանց բոցավառուելու, չարին ահեղ ճնշումին տակ գուցէ...

Իր ազգին փոթորկայոյց պատմութիւնն ալ կը յուշէր իրեն, որ այդ ոգիով էր ան յարատեւեր հազարամեակներ, յաղթահարելով ամէն դժբախտութիւն, նոյնիսկ Յեղասպանութիւնը, հաւատարիմ մնալով իր ինքնութեան, իր մայրենի լեզուին ու մշակոյթին, իր Լուսաւորչեան հաւատքին, իր բազմահազարամեայ պատմութեան շունչին...

Յետոյ՝ եզրակացուց. «Արթո՞ւն է այդ ոգին, արթուն կը մնայ եւ կ'ապրի ազգը, կը մեռնի՞ ոգին, կը մեռնի եւ ազգը»:

Երան Գույումճեան

17/10/2025

ԱՎՆԹԱՐԹՆԵՐ



Մարդ էակին մէջ ի բնէ կայ, կը խորհիմ, ճշմարտութեան զգացումը, գիտակցութենէն անդին, տեսակ մը բնագոյի նման... Եթէ մարդ մեղանչէ անոր դէմ, հոգեկան տհաճ տրամադրութիւն մը, վիճակ մը կը ստեղծուի իր մէջ անպայման, որ իրեն կը յուշէ կարծէք որ բան մը սխալ է, կամ սուտ... Ճշմարիտը գտնելու համար, պիտի անպայման դիմել մեզի պարզեւուած այդ բնատուր ներքին ձայնին, զգացումին, բնագոյին, որ կը գործէ անվրէպ մեզմէ իւրաքանչիւրին մէջ ալ... Կը բաւէ որ չլռեցնենք անոր ձայնը...

.....

Մենք ընդհանրապէս միասին կը խօսինք, բայց զիրար չենք լսեր, զիրար չենք ալ հասկնար... Եւ հետեւաբար՝ կը թռփենք նոյն տեղին վրայ, առանց յառաջ երթալու, ամէն մէկս



իր անձին մէջ կղզիացած, իր անձով սահմանափակուած, իր խնդիրներով միայն պարագծուած...Եթէ կարենանք դուրս ելլել մեր անձի նեղ ու հեղձուցիչ խոզակէն, իրա՛ւ փորձ կատարել դիմացինը հասկնալու, անոր ցաւը եւ հոգը մերը դարձնելու, յայնժամ ամէն հարց կը լուծուի...քանզի ԵՍ-Ը կը դառնայ ՄԵՆՔ:

.....

Յիշողութիւնը կը ոգեղինացնէ անցեալի յուշերը, որոնք կարծէք նոր կեանքով մը կ'ապրին մեր մէջ՝ անջատ շօշափելի իրականութենէն...Մեր մանկութեան վայրերը, մեր ծննդավայրը, սիրելի դէմքեր կը դառնան հեքիաթ ու երազ, ոգեղինացած իրականութիւն մեր ենթագիտակցութեան խորքերուն մէջ...Իսկ երբ ամիսը տրուի դարձեալ տեսնելու զանոնք, տեսակ մը կը հիասթափուինք անդրադառնալով որ շօշափելի իրականութիւնը որքա՛ն տարբեր է այն ոգեղինացածէն, որ կ'ապրի մեր մէջ: Յիշատակները իրենց ներքին կեանքն ունին:

.....

ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹԻՒՆ...Քե՛զ փնտռեցի հայ հոգիին մէջ, ուր կայ ցոլքը քու անապական մաքրութեան, անկեղծութեան, անմիջականութեան, առաքինութեան...Քե՛զ փնտռեցի մեր բառ ու բանին, մեր մատենաներուն մէջ, ուր կը շողաս Մեսրոպեան հաւատքով, յոյս ու լոյսով, անհուն սիրով...Քե՛զ փնտռեցի մեր եկեղեցւոյ կամարներուն տակ, ուր հայ հոգին կը ներդաշնակուի Արարիչին ու տիեզերքի անհունութեան հետ, կը խոնարհի Մեծութեան խորհուրդին առջեւ եւ խոնարհելով կը բարձրանայ...Քե՛զ փնտռեցի մեր երգերուն ու տաղերուն մէջ, ուր գտայ քու հնչիւններդ անչափ սրտաբուխ, ոգեղէն ու լուսեղէն...Քե՛զ փնտռեցի մեր ճարտարապետութեան մէջ՝ անչափ պարզ ու խորունկ, անչափ յստակ ու ներդաշնակ իր ամբողջութեան մէջ...Եւ հասկցայ որ դուն կաս որպէս ոգի, որպէս լոյս, որպէս սեր, որպէս հոգիի թոփչք ու խոյանք, որ վերջ չունի երբեք...տիեզերահուն, տիեզերաչափ:

.....

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ամբողջութիւն մըն է՝ իր խոյանքներով եւ անկումներով, իր լոյսով ու ստուերով, ճիշդով ու սխալով...Պիտի ընկալել զայն ամբողջութեամբ եւ ոչ՝ ընտրովի, ժխտելով առերեսուիլ անոր մութ ծալքերուն հետ, քանզի ամբողջական ԻՆՔՆԱՃԱՆԱՉՄԱՆ համար, անհրաժեշտ է պարագրկել անոր ամբողջութիւնը՝ կարելի անաչառութեամբ, որպէսզի կարելի ըլլայ ուղղել մեր արատներն ու սխալները, մեր բազում-բազում թերացումներն ու սայթաքումները...Միայն լուսաւոր կէտերը տեսնելով եւ անտեսելով միւսները, մենք միայն ԻՆՔՆԱԽԱՔԵՆՈՒԹԵԱՄԲ կրնանք տարուիլ եւ երբեք չկարենանք խրատուիլ մեր սխալներէն:

.....

ՆԻՒԹԸ եւ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԽԻՂՃԸ...Երկու հակոտնեայ բառ-հասկացութիւններ...Նիւթով յղփացած մարդը տակաւ կ'անմարդկայնանայ, կը դառնայ անտարբեր այլոց ցաւին, տառապանքին, զրկանքին, աւելի՛ն ու աւելի՛ն ունենալու տենդով, մոլուցքով կ'արբենայ ան, եւ այդ մոլուցքին անձնատուր՝ կ'օտարանայ իր սեփական հոգիէն, սիրտէն, խիղճէն կը գոռոզանայ ալ շատ անգամ, կարծելով որ նիւթական հարստութիւնը զինք կ'ընծայէ բոլորէն վեր, արժանի՝ բոլորին խոնարհամիտ յարգանքին...Այսպէս է որ մարդը կ'այլասերի, կը



կորսնցնէ իր հարազատ ինքնութիւնը, ստրուկը դառնալով ՆԻԻԹԻՆ, ԴՐԱՄԻՆ, ԻՆՉՔԻՆ... Խորքին մէջ, ինքն է որ կը ստրկանայ եւ կը միտի ստրկացնել ուրիշները:

.....

Ո՛չ երանի անո՛նց, որոնք շարունակաբար կը խաբէն իրենք զիրենք, յանուն կուսակցութեան մը «հաւատարմութեան», նոյնիսկ երբ այդ նոյն կուսակցութեան ղեկավարութիւնը շատոնց ՍԱՅԹԱՔԱԾ է իր ճիշդ ճամբէն եւ դարձեր է իր նեղ անձնական, խմբակային ՇԱՀԵՐՈՒՆ հետամուտ... Երբ շատոնց կորսուեր է այն ԳԱՂԱՓԱՐԸ, որուն համար զոհուեցան ՆՈՒԻՐԵԱԼ ԱՆՁԻՆՔ յանուն հայուն անկախութեան, ազատութեան, արդարութեան, յարատեւութեան: Եւ փոխանակ առողջ ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՄԲ բարեփոխելու այդ կործանարար ընթացքը եւ նոր շունչ մը տալու կազմակերպութեան, դեռ կը կառչին ստեղծուած status quo-ին, պատճառ դառնալով որ ՃԱՀՃԱՑԱԾ կացութիւնը տեւէ ընդերկար: Ո՞րք եւ ԽԻՉԱԽ ԵՒ ՅԱՆԴՈՒԳՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԻՐՆԵՐԸ:

.....

ՍԻՐՏԸ ԼԵՑՆԵԼ ԲԱՐՈՒԹԵԱՄԲ, ԱԶՆՈՒՈՒԹԵԱՄԲ... Զգայթակղիլ ՉԱՐԷՆ, անոր փորձութենէն, որ կարծէք միշտ ալ առկայ է մեր շուրջ, մեր ամենօրեայ կեանքին մէջ... Ամէն անգամ որ այդ փորձութենէն ՅԱՂԹԱԿԱՆ դուրս գաս, կը զգաս աճիլը սեփական անձիդ մէջ՝ ԲԱՐՈՒԹԵԱՆ ՄԵԾ ՈՅԺԻՆ, որ կրնայ ի վերջոյ ՏԱՊԱԼԵԼ ՉԱՐԻՔԸ եւ իր ՍԻՐՈՅ թագաւորութիւնը տարածել աշխարհիս վրայ... Իւրաքանչիւր բարի վարքի դրսեւորում, իւրաքանչիւր բարի գործ կը դառնայ ՎԱՐԱԿԻՉ ամէնուն համար, մթնոլորտ կը ստեղծէ մարդասիրութեան, ներդաշնակութեան, գեղեցկութեան: Իւրաքանչիւրս՝ իր զգացումներով, միտքերով, արարքներով, կարենայ եթէ ԱԻԵԼՑՆԵԼ ԲԱՐԻՆ ԱՇԽԱՐՀԻՆ, յայնժամ արգիլած կ'ըլլայ միաժամանակ, որ մեր կեանքը ապականուի ՉԱՐԷՆ եւ՝ դառնայ իր ԱՐԱՐՉԱՍՏԵՂԾ ՊԱՏԿԵՐԻՆ:

.....

Քննադատելէն առաջ գնահատել պիտի գիտնանք, վատը տեսնելէն առաջ՝ լաւը տեսնել, ժխտականը մատնանշելէն առաջ, դրականը գովել... Միայն սենն ու գորշը տեսնելը մեր հոգին կը մթագնէ, ուզենք թէ չուզենք, քանզի ամէն ինչ կ'անդրադառնայ մեր վրայ, կ'արձագանգէ մեր հոգւոյն մէջ, բնախօսական օրէնքով անխախտ...

.....

Մենք դեռ ազգովին պիտի սորվինք ԱՆԿԱԽ մտածել, ԱՆԿԱԽ որոշել, ԱՆԿԱԽ գործել... Տակաւին, մեր հայեացքը ուրիշին վրայ է, ուրիշինը ընդօրինակելու, ուրիշը կապկելու, ուրիշին հովանաւորութիւնը փնտռելու, ուրիշին տիրութեան տակ ապրելու վրայ... Այսինքն՝ ազատութիւն եւ պատասխանատուութիւն չստանձնելու ՀԱՅ ԿԵԱՆՔԻՆ համար: Որքա՛ն խոր կը թուի ըլլալ ՍՏՐԿԱՄՏՈՒԹԻՒՆԸ մեր մէջ, որ այսպէս տենդագին պատրաստ ենք ուրիշին, այսինքն օտարին փէշերուն տակ ապաստան գտնելու, թաքնուելու, մեր սեփական կեանքը ԻԻՐՈՎԻ չկարենալ ապրելու համար... Մենք ՄԵԶԻ

պիտի վերադառնանք իսկապէս ԱՆԿԱԽ ըլլալու համար, ապա թէ՛ ոչ, ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ գոչելով միայն, կրնա՞նք արդեօք ԱՆԿԱԽ ըլլալ...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՔԱՌԵԱԿՆԵՐ



Կեանք կայ դաժան, գորշ ամպամած, ցաւով կուտակ բեռնաւորուած,
Կեանք կայ ուրախ, մաքուր, անամպ, շողով առատ արեգական,
Փոփոխական կեանքն է սակայն, զոր կը ցանկամ ես շարունակ՝
Տեսնել ծիածան վառ եօթներանգ անձրեւէն ետք ամպ-տխրութեան:

.....

Ինչպէ՞ս վստահիլ մարդ արարածին,
Երբ ան կը խրատէ, կու տայ խորհուրդներ,
Մինչ իր կեանքին մէջ՝ հակառակն կ'ընէ
Եւ կը քրքջայ հաւատացողին...

.....

Եթէ ուզեն կը բարձրացնեն,
Եթէ ուզեն կը կոխկոշտեն,
Ամբոխը կոյր կրնա՞յ զատել
Ճիշդն ու իրան՝ սուտ կեղծիքէն...

.....

Ծուռն ու շիտակը խառնուեր են իրար,
Սուտն ու իրաւը տեղ են փոխեր,
Լոկ սիրտը կրծքին տակ է մնացեր,
Որ յուշէ մարդկանց թէ ո՞րն է իրաւ...



.....

Ժամանակը՝ մի առեղծուած,
Սրտիդ զարկին հետ կ'ընթանայ,
Նախ կը դառնայ բարեկամդ,
Յետոյ տակաւ՝ թշնամանայ...

.....

Երկիւղս երբ թօթափեցի
Դրամի, դիրքի, բարեկամի,
Դարձայ ազատ, թեւեր առի,
Միտքս ճախրեց վեր անհունին:

.....

Սիրտէդ կայծեր թէ որ խլես,
Չես մսիւր դուն ցուրտ ձմրան մէջ,
Կայծը գուցէ խարոյկ դառնայ
Եւ ջերմացնէ օճախդ թանկ...

.....

Լաւ է մեռնիլ, քան ստրուկ ապրիլ,
Դաւաճանել հոգւոյն, կեանքին,
Կեանքը կեանք է ազատութեամբ,
Ազատ կամքով, խիզախութեամբ:

.....

Թէ բանաս հոգւոյդ պատուհանները
Հրաշք բնութեան, տիեզերքին առջեւ,
Քեզ այցի կու գան խոհեր ու միտքեր
Եւ կ'ընդարձակիս ինչպէս տիեզերքը...

.....

Մարդիկ կ'ուզեն կապանք դնել
Հոգւոյդ, սրտիդ ազատահեւ,
Ճնշել անոնց որքան կրնան,
Սպառնալիք է մարդը ազատ...

.....

Ելլե՛մ Մասիս սարերն ի վեր, զգամ շունչը Հայկ դիւցազնի,
Ազատութեան ոգի՛ն գրկեմ առօրեայի պիղծ օդէն վեր,
Զայն լիառատ բաշխեմ ազգիս, անով լեցուի ու նորոգուի,
Վերադառնայ արմատներուն, անոնց աւիշն ըմպէ հուրէ:

.....

Կեանքը համակ փախչող պահ է, ակնթարթի մը չափ կարճ է,
Պիտ' կարենաս գայն վայելել արեւաշող ճաճանչի պէս,
Թէ ամպերը գան գայն ծածկել, պիտ' յօրինես շոյանքն անոր,



Ան անպայման քեզ կ'այցելէ թէ զայն փնտռես միշտ հաւատքով:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ